

PARLIAMENT  
MONITORING

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ | 3-ՐԴ ԶԵԿՈՒՅՑ  
09.09.2013 - 05.12.2013



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



«ՄԱՆՊԱՏ» տեղեկատվական հասարակական կազմակերպություն



Սույն զեկույցում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը «Մանդար» տեղեկատվական հասարակական կազմակերպությունն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բայ հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բայ հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն ուսումնասիրության բովանդակությունը կարող է չհամընկնել Բայ հասարակության հիմնադրամներ-Հայաստանի տեսակետներին:

Զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բայ հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ ԶԼՄ-ների աջակցման ծրագրի շրջանակներում:

# ՆԱԽԱԲԱՆ

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 5-րդ գումարման Ազգային ժողովի չորրորդ նստաշրջանի գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Զեկույցը կազմված է 4 բաժնից: Առաջին բաժնում ամփոփվել են չորրորդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանի գործունեության ընդհանուր միտումներն ու ցուցանիշները, ներկայացվել են ԱԺ խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունների, ակտիվության մասին տվյալներ:

«Օրենսդրություն» բաժնում ներառվել են աշնանային նստաշրջանի ընթացքում ընդունված օրենսդրական փաթեթներից մի քանիսի դիտարկման արդյունքները՝ կատարված լրագրողական և փորձագիտական աշխատանքների համադրմամբ: Օրենսդրական յուրաքանչյուր փաթեթի վերաբերյալ ներկայացվել է խորհրդարանական քննարկման ընթացքը, խմբակցությունների արտահայտած դիրքորոշումները համեմատվել են ծրագրային մոտեցումների հետ, տրվել են փորձագիտական գնահատականներ:

«ԱԺ վերահսկողությունը» բաժնում անդրադարձ է կատարվել ԱԺ վերահսկողական գործառույթներին: Դիտարկվել են նստաշրջանի ընթացքում ներկայացված հաղորդում-հաշվետվությունները՝ օրենքով սահմանված ընթացակարգերի և խորհրդարանական քննարկումների արդյունավետության տեսանկյունից:

Չորրորդ բաժնում ամփոփվել են 5-րդ գումարման Ազգային ժողովում իր գործունեությունը սկսած Էթիկայի հանձնաժողովի աշխատանքի արդյունքները:

Զեկույցի վերջին՝ «Հավելված» բաժնում ներառված են օրենքների փորձագիտական վերլուծությունները:

## Փորձագիտական խումբ

Գոռ Աբրահամյան

Վիլեն Խաչատրյան

Աննա Մակարյան

Մեսրոպ Հարությունյան

# ՑԱՆԿ

Նստաշրջանը թվերով	4
ԱԺ խմբակցություններ / օրենսդրական նախաձեռնություններ, ակտիվություն /	10
Հայաստանի հանրապետական կուսակցություն	11
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	12
Հայ ազգային կոնգրես	13
«Ժառանգություն» խմբակցություն	14
«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն	15
«Օրինաց երկիր» խմբակցություն	16
ԱԺ վերահսկողությունը	17
Գլխավոր դափախազի նշանակում	18
ՎՊ նախագահի նշանակում	20
ՎՊ գործունեության 2014թ. ծրագրի հաստատում	22
Գազային համաձայնագրեր	23
ԱԺ օրենսդրական գործունեությունը	27
Բյուջե 2014	27
Պակասուրդի ավելացում 2013թ. պետական բյուջեում	30
Պետական պաշտոնյաների վարձավրության նոր համակարգ	31
Զբաղվածության հիմնահարց	35
Հեղինակային իրավունք	39
ԱԺ էթիկայի հանձնաժողովը	44
Փորձագիտական վերլուծություններ   Հավելված	48

# ՆՍԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

## ԱԺ 5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ, 4-ՐԴ ՆՍԱՇՐՋԱՆ

### Ցույանիշներ կամ նստաշրջանը թվերով

ՀՀ Ազգային ժողովի 5-րդ գումարման 4-րդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 քառօրյա նիստ: Հրավիրվել է 2 արտահերթ նստաշրջան կառավարության նախաձեռնությամբ՝ 2013թ. դեկտեմբերի 10-ին ու 20-ին և մեկ արտահերթ նիստ նոյեմբերի 15-ին ԱԺ պարզամավորների նախաձեռնությամբ, որը չի կայացել քվորումի բացակայության պատճառով:

Ընդունվել է 108 օրենք. 5-ը մայր օրենքներ են, մնացածը՝ փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում: Ընդունված օրենքներից 94-ի հեղինակը կառավարությունն է (դրանց ուղիղ կեսը գործադիրն անհետաձգելի է համարել), 14-ինը՝ ԱԺ պարզամավորները: Մոտ 1/2-ը (62 օրենք) ընդունվել է հատուկ կարգով արտահերթ 2 նստաշրջանի ընթացքում. օրինագծերի 2-րդ և 3-րդ ընթերցումները կազմակերպվել են 24-ժամյա ռեժիմով: Օրենքներից երկուսն ընդունվել է ՀՀ նախագահի առարկությամբ և առաջարկությամբ:

Ընդունված օրենքների ավելի քան կեսը՝ 55-ը, վերաբերում է սոցիալական ոլորտին, 24-ը՝ պետաիրավականին, 18-ը՝ տնտեսականին, 2-ական՝ պաշտպանության, գյուղատնտեսության, կրթության և առողջապահության ոլորտներին:

Նստաշրջանի ընթացքում քննարկվել է ընդդիմադիր խմբակցությունների հեղինակած 2 օրենսդրական նախաձեռնություն, որոնք քվեարկությամբ մերժվել են, քննարկվել են նաև «Օրինաց երկիր», ՀԱԿ խմբակցությունների հարցաանդամները:

Ազգային ժողովը նստաշրջանի ընթացքում վավերացրել է 18 միջազգային պայմանագիր, այդ թվում հանրային մեծ հնչեղություն ստացած գազային համաձայնագրերը, քննարկել է «ՀՀ նախագահի 2013 թ. փետրվարի 18-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման, ընտրական օրենսգրքի խախտումների, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ» ՀՀ ԿԸՀ հաղորդագրությունը, ՀՀ վերահսկիչ պալատի 2014 թ. տարեկան գործունեության ծրագիրը, ի գիտություն է ընդունել ՀՈԱՀ և ՀՀՌԻՄ 2012թ. տարեկան հաշվետվությունները: Նշանակել է ՀՀ Գլխավոր դատախազ և ՎՊ նախագահ:

ԱԺ-ն ընդունել է ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ նախագահի առաջարկությունը:

## Ընդգծումներ և այլ ուշագրավ փաստեր


- Կառավարության նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նստաշրջանի ընթացքում խորհրդարանն ավելի շարժառիթներ է ընդունել, քան ողջ աշնանային նստաշրջանի ընթացքում:
- Օրենքների կեսից ավելին համարվել է անհետաձգելի և ընդունվել է հա-տույն կարգով: Դրանք հիմնականում վերաբերել են հարկային քաղաքականությանն ու սույիալ-փոփոխական ոլորտին, խորհրդարանին ներկայացվել են առանց անհետաձգելիությունը հիմնավորող ծանրակշիռ փաստարկների:
- Ընդունված օրենքների հարաբերական մեծամասնությունը վերաբերել է սույիալական ոլորտին, սակայն աղքատության մակարդակի և սույիալական ընդհանուր վիճակի վրա դրանց ազդեցությունը գնահատվել է որպես աննշան:
- Ներդրվել է աշխատավարձերի ձևավորման միասնական համակարգը:
- Էթիկայի հանձնաժողովը որևէ եզրակացություն ԱԺ-ին չի ներկայացրել:
- Փոփոխության է ենթարկվել խորհրդարանական պարվիրակությունների ձևավորման կարգը:
- «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչը զրկվել է ԵՄԽՎ-ում հայաստանյան պարվիրակության անդամի կարգավիճակից (Ստրասբուրգում ՀՀ նախագահին ուղղված ոչ կոռեկտ հարց հնչեցնելուց անմիջապես հետո):
- Վիճահարույց միջկառավարական համաձայնագիրը վավերացվել է բաց քվեարկությամբ՝ առանց հաշվիչ հանձնաժողովի որոշման:
- Խորհրդարանական փոքրամասնությունը նախաձեռնել է արտահերթ նիստ, որը չի կայացել մեծամասնության բոյկոտի պատճառով. նման նախադեպ եղել էր նաև 2012 թ.:
- Ոչ իշխանական 4 խմբակցությունները, օգտվելով ԱԺ կանոնակարգով նախատեսված իրավունքից, առաջին անգամ կարողացել են միասնաբար հարցի քննարկում պարտադրել մեծամասնությանը (կուրակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի կիրարկումը մեկ փարով հետաձգելու մասին):
- ԱԺ նիստերի դահլիճում առաջին անգամ լրագրողները բողոքի ակցիա են կազմակերպել (գազային համաձայնագրերի վավերացման քննարկումների ժամանակ):

# ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

## Միփուլման կամ թվերի հեղուկում


■ Նստաշրջանի ընթացքում նկատելի էր պարզամավորների օրենսդրական նախաձեռնողականության մեծացում, մինչդեռ ընդունված օրենքների պարագայում ԱԺ-կառավարությունը հարաբերակցությունը դարձյալ պահպանում է նախորդ նստաշրջանների փորձաքանությունը՝ կառավարության նախաձեռնություններ՝ 87 փոկոս, ԱԺ պարզամավորների նախաձեռնություններ՝ 13 փոկոս:

## Օրենսդրական նախաձեռնություններ



■ 5-րդ գումարման ԱԺ չորրորդ նստաշրջանում խորհրդարանական մեծամասնությունը՝ ՀՀԿ-ՕԵԿ կոալիցիան, պահպանել է քվեարկությունների փորձաքանությունը. դեմ քվեարկությունները, ինչպես նախորդ նստաշրջանում, չեն հասնում 1 փոկոսի և բացառապես վերաբերում են ընդդիմության նախաձեռնություններին: Սա վկայում է, որ խորհրդարանի քաղաքական մեծամասնության և կառավարության միջև համաձայնությունն ու դիրքորոշումների ներդաշնակությունը շարունակում է պահպանվել:

## ՀՀԿ-ի և ՕԵԿ-ի քվեարկությունների պատկերը






# ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

■ Ըստ հարցերի ու ելույթների վիճակագրության՝ դիտարկված ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշն արձանագրել է ՀՀԿ խմբակցությունը (185 հարց ու ելույթ), ամենացածրը «Ժառանգության» արդյունքն է (45 հարց ու ելույթ): Սակայն ակտիվությունը խմբակցությունների պարզամավորների քանակի հետ համադրելիս սրապվում է, որ ԱԺ մեծաթիվ ՀՀԿ և ԲՀԿ խմբակցությունների պարզամավորներից յուրաքանչյուրը միջին հաշվով հարց ԿՎԵԼ կամ ելույթ ունեցել է 2,5 անգամ, իսկ փոքրաթիվ խմբակցությունների պարզամավորները՝ մոտ 10 անգամ: Այս տեսանկյունից աշնանային նստաշրջանի ընթացքում խորհրդարանում ամենապասիվը կրկին եղել է ԲՀԿ-ն, իսկ ամենաակտիվը՝ ՀՅԴ-ն:

## Աժ խմբակցությունների ակտիվությունը



■ Դիտարկված նստաշրջանի ընթացքում նույնպես, ինչպես նախորդում, խորհրդարանը չի օգտվել առանձին խնդիրների ուսումնասիրման նպատակով ժամանակավոր հանձնաժողովներ ձևավորելու իր իրավունքից, թեև ՀՅԴ խմբակցությունը հանդես է եկել նման նախաձեռնությամբ. առաջարկվում էր սրեղծել «Նաիրի» ՓԲԸ-ի խնդիրներն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով:

## 5-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանին բնութագրական է բևեռացման խորացումը.

### փորձագիտական վերլուծություն

Դիտարկվող ժամանակահատվածում ավելի խորացան իշխանական և ոչ իշխանական խմբակցությունների միջև դեռևս նախորդ նստաշրջաններում նկատված բևեռացման դրսևորումները: Վերջինս բացասաբար է ազդում խորհրդարանի գործունեության արդյունավետության վրա հարկապես երկու առումով:

## ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

Առաջին՝ նվազում են քաղաքական երկխոսության և փոխհամաձայնության հնարավորությունները, ինչը հանգեցնում է քաղաքական թևերի միջև կառուցողական համագործակցության հանդեպ հեփաքրքրության և շահագրգռության անկման և անհանդուրժողականության: Երկրորդ՝ նախաձեռնություններում, քննարկումներում և քվեարկություններում գերակշռող և վճռորոշ է դառնում քաղաքական դիմակայությամբ պայմանավորված փոխադարձ մերժողականության բաղադրիչը, որը երբեմն անցնում է ռապիդնալության սահմանները:

Արդյունքում օրենքների, որոշումների նախագծերը խմբակցությունները շարդեպքերում քննարկում են ոչ թե ըստ էության՝ ելնելով դրանց բովանդակությունից, այլ միմյանց հանդեպ վերաբերմունքի և քաղաքական դիրքավորման: Սա խոչընդոտում է փոխադարձ ընկալմանը, իսկ նախագծերի բարելավմանն ուղղված կառուցողական առաջարկություններն անտեսվում են քաղաքական կրքերի, անհանդուրժողականության մթնոլորտում:

Քաղաքական բևեռացման դրսևորումներն արտահայտվում են հիմնականում երկու ուղղությամբ: Առաջինը ոչ իշխանական խմբակցությունների և պարզամավորների օրենսդրական նախաձեռնությունների նկատմամբ մեծամասնության և ԱԺ ղեկավարության մերժողականությունն է (նստաշրջանի ընթացքում ոչ իշխանական խմբակցությունների և պարզամավորների հեղինակած միայն մեկ օրինագիծ է խորհրդարանն ընդունել): Առանձին նախագծերի պարագայում խորհրդարանական մեծամասնության այսպիսի մոտեցումը հասկանալի է ու գուցե նույնիսկ արդարացված, որովհետև դրանք իրենց հեփապնդած նպատակներով ոչ միայն շեղվում են մեծամասնության և նրա ձևավորած կառավարության ծրագրային քաղաքականությունից, այլև հակադրվում են դրանց: Սակայն շարդեպքերում կոալիցիոն մեծամասնությունն անգամ մյուս թևի նախաձեռնությունները քննարկելու ցանկություն չի արտահայտում:

Մեծամասնության կողմից մերժողականությունը ակնհայտ է դառնում նաև օրակարգում չընդգրկված օրենսդրական նախաձեռնությունների համեմատական վերլուծությունից: Ընդհանուր առմամբ, այս գումարման Ազգային ժողովի վերջին երեք նստաշրջանների կտրվածքով ԱԺ օրակարգ չի ընդգրկվել 141 օրենսդրական նախաձեռնություն, որոնցից միայն 40-ը, այսինքն՝ 30 տոկոսը, հեղինակել են ոչ իշխանական խմբակցություններն ու դրանք ներկայացնող պարզամավորները: Դա այն դեպքում, երբ օրակարգում ընդգրկված 192 օրինագծերից միայն 6-ն է ոչ իշխանական պարզամավորների հեղինակածը: Հարկ է, սակայն, նշել, որ ոչ իշխանական ուժերի՝ օրակարգում չընդգրկված նախագծերի գերակշռող մեծամասնությունը ներկայացվել է հենց նախորդ նստաշրջանի ընթացքում, այսինքն՝ գարնանային նստաշրջանը ցույց կտա, թե ինչպիսին է դրանց նկատմամբ կառավարության և ԱԺ մեծամասնության իրական փրամադրվածությունը:

## ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

Բոլոր դեպքերում, քաղաքական մեծամասնության այս պահվածքը հանգեցնում է նրան, որ ոչ իշխանական թևը ներկայացնող խմբակցություններն սկսում են ավելի ծայրահեղ մոտեցում ցուցաբերել՝ հանրային վստահության դիվիդենդներ ձեռք բերելու համար որոշ դեպքերում փուլք փախվելով պոպուլիզմին՝ ելնելով այն համոզվածությունից, որ իրենց ներկայացրած օրինագծերի չընդունման հիմնական պարճառը համարվելու են ոչ թե իրենց մաքսիմալիստական նպատակները, այլ փոքրամասնության բոլոր նախաձեռնություններն ամեն գնով մերժելու քաղաքական մեծամասնության քաղաքականությունը: Ներխորհրդարանական քաղաքական բևեռացման երկրորդ ուղղությունն առհասարակ ոչ իշխանական ուժերի քաղաքական նախաձեռնությունները բլոկադայի ենթարկելու պրակտիկան է: Այս նստաշրջանում դա արտահայտվել է հատկապես կենսաթոշակային կուրակային համակարգի պարտադիր բաղադրիչի դեմ սկսված հասարակական-քաղաքական պայքարի համափոքսփում: Նախ՝ նոյեմբերին ԱԺ մեծամասնությունը բոյկոտեց 4 ոչ իշխանական ուժերի՝ օրենսդրական փոփոխությամբ կուրակային պարտադիր բաղադրիչի կիրառումը մեկ փարով հետաձգելուն ուղղված ԱԺ արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությունը, ապա, մոտ մեկ ամիս անց, նաև մերժեց նույն նպատակով նույն ուժերի կողմից պարտադիր քննարկման ռեժիմով ներկայացված օրենսդրական փոփոխության նախագիծը՝ դեմ քվեարկելով դրան: Քաղաքական մեծամասնությունը դա հիմնավորեց նրանով, որ այդ հարցը կրկին ԱԺ-ում քննարկման առարկա դարձնելով ոչ իշխանական ուժերը հետապնդում են քաղաքական շահարկումներ ծավալելու նպատակ, մանավանդ որ այդ բաղադրիչի ներդրման մասին որոշումը այդ պահին չէ, որ կայացվում էր, այլ կայացվել էր շատ ավելի վաղ և ավելին՝ ներկայիս խորհրդարանական փոքրամասնությունը կազմող ուժերից երկուսի մասնակցությամբ: Տվյալ դեպքում խնդիրը դուրս էր եկել խորհրդարանական մեծամասնություն-փոքրամասնություն դիմակայության շրջանակներից և ավելի լայն ընդգրկում սրացել, քանի որ փոքրամասնությունը ստանձնել էր քաղաքացիական սրվար զանգվածի բողոքի ձայնը խորհրդարանում լսելի դարձնողի դերն ու պարավորությունը:

Ոչ իշխանական ուժերին մերժելով հատկապես արտահերթ նիստ հրավիրելու հարցում, քաղաքական մեծամասնությունը ոչ այնքան այդ ուժերի ինքնադրստորման հնարավորությունը սահմանափակեց, որքան հասարակական կարծիքն ու քաղաքացիական պահանջարկն անդրեսելու, երկխոսության պարտապահականություն չունենալու և, դրանով իսկ, ԱԺ-ն հասարակությունից հեռացնելու փափոքություն թողեց: Այս միտումները վրանգավոր են հատկապես այն պարճառով, որ խորանալու դեպքում խորհրդարանը կարող է հայտնվել մի իրողության առջև, երբ աճող պոպուլիզմի, քաղաքական դիմակայության, փոխադարձ մեղադրանքների, անհարկի շահարկումների ճնշման ներքո պառլամենտարիզմի իրական գործառույթները՝ ներկայացուցչական, օրենսդրական և վերահսկողական, կարող են կորցնել իրենց նշանակությունը և խորհրդարանը վերածել հարաբերությունների պարզման քաղաքական պարզունակ հարթակի:

# ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱԺ Խմբակցություններ. նախաձեռնողականություն, ակտիվություն

- Նստաշրջանի ընթացքում քաղաքական կոնսուլիդացիայի բացառիկ օրինակ էր 5 ուժերի նախաձեռնությամբ ընդունված հեղինակային իրավունքին առնչվող օրենքը: Իսկ ոչ իշխանական ուժերի կոնսուլիդացիայի բացառիկ օրինակը կուրակային կենսաթոշակի պարտադիր բաղադրիչին վերաբերող նախաձեռնությունն էր, որը քվեարկությամբ մերժվեց:
- Ազգային ժողովի 5-րդ գումարման 4-րդ նստաշրջանի ընթացքում ոչ իշխանական ուժերից ընդունվել է միայն ԲՀԿ-ական պարզամավորների հեղինակած 2 նախագիծ: Աժ ոչ իշխանական ուժերը նստաշրջանի ընթացքում հեղինակել են 49 օրենսդրական նախաձեռնություն: Դրանցից նիստերի դահլիճում քննարկվել են (և մերժվել) միայն 2-ը: Քվեարկությամբ 9 նախագիծ մերժվել է ընդգրկել նստաշրջանի օրակարգ: 34 օրենսդրական նախաձեռնություն դրված է շրջանառության մեջ, բայց օրակարգ չի ընդգրկվել, 6 նախագիծ օրակարգում է:
- Ըստ [parliamentmonitoring.am](http://parliamentmonitoring.am)-ի վիճակագրության՝ 5-րդ գումարման Ազգային ժողովի ամենաշատ բացակայած պարզամավորը ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանն է: Ամենաշատը կողմ է քվեարկել ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը: Ամենաշատ դեմ քվեարկած օրենսդիրը Նիկոլ Փաշինյանն է: Ամենաակտիվը Արծվիկ Մինասյանն է՝ ՀՅԴ-ից:
- Ըստ [parliamentmonitoring.am](http://parliamentmonitoring.am)-ի վիճակագրության՝ 5-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանում 131 պարզամավորների գրեթե կեսը՝ 65 պարզամավոր, օրենսդրական նախաձեռնությունների քննարկման ժամանակ ոչ մի հարց չի Կրկնվել և ոչ մի ելույթ չի ունեցել: ՀՀԿ և ԲՀԿ խմբակցություններում «լուռ» պարզամավորները կեսից ավելին են. ՀՀԿ-ում 70-ից 36-ը, ԲՀԿ-ում 36-ից 23-ը:

# ԱԺ ԽԱԲԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀՀԿ | Օրենսդրական նախաձեռնություններ.


5-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի ընթացքում ՀՀԿ-ն հեղինակել է 56 օրենսդրական նախաձեռնություն: Ամբողջությամբ ընդունվել են դրանցից 11-ը: Ընդունված օրենքներից 4-ը ՀՀԿ-ն հեղինակել է այլ ուժերի հետ միասին: Խմբակցության պարզամավորների հեղինակած 27 օրենսդրական նախաձեռնություն ընդգրկված է նստաշրջանի օրակարգ: Եվս 18 նախաձեռնություն դրված է շրջանառության մեջ և առայժմ օրակարգ ընդգրկված չէ: Դրանցից 5-ը խմբակցությունը հեղինակել է 2012-ին:

### Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 4-րդ նստաշրջանի ընթացքում

ՀՀԿ խմբակցության ամենաշատ հարց տրված պարզամավորը Ռուզաննա Մուրադյանն է՝ 17: Ամենաշատը ելույթ է ունեցել Խոսրով Հարությունյանը՝ 10 ելույթ: Խմբակցության ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների թիվն անցնում է երկու փասնյակը, իսկ ամենաշատը դեմ է քվեարկել ընդամենը 2 հանրապետական (2 անգամ): Ամենաշատ չքվեարկած պարզամավորը Արթուր Գևորգյանն է՝ 28 անգամ: Ամենաշատը բացակայել է Մանվել Գրիգորյանը՝ 58 անգամ:

5-րդ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների փասնյակը կազմված է բացառապես ՀՀԿ-ականներից, փասնյակը գլխավորում է Գալուստ Սահակյանը: Ամենաշատ բացակայած, դեմ և ձեռնպահ քվեարկած փասնյակներում ոչ մի ՀՀԿ-ական չկա: Ամենաակտիվների փասնյակում ՀՀԿ-ն ունի 2 անդամ:

parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի ամենաշատ այցելված էջերի փասնյակում ՀՀԿ-ականները երեքն են:



# ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԲՀԿ | Օրենսդրական նախաձեռնություններ.

5-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է ԲՀԿ-ի հեղինակած 3 օրենսդրական նախաձեռնություն (մեկը՝ ՀՀԿ-ի համահեղինակությամբ): 2 նախագիծ տեղափոխվել է հաջորդ նստաշրջանի օրակարգ:


Գլխադասային հանձնաժողովում դրական եզրակացություն չստացած 4 օրենսդրական նախաձեռնություն պարզամավորների քվեարկության արդյունքում չի ընդգրկվել նստաշրջանի օրակարգ, շրջանառության մեջ դրված ևս 15 օրինագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 տարի ժամկետով: Դրանցից 3-ը խմբակցության պարզամավորները հեղինակել են 2012թ.-ին:

## Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 4-րդ նստաշրջանի ընթացքում

ԲՀԿ խմբակցության պարզամավորներից ամենաշատը ելույթ է ունեցել և հարց է տվել Միքայել Մելքունյանը՝ 17: Ամենաշատը կողմ է քվեարկել Արա Արամյանը՝ 58, ամենաշատ ձեռնպահ քվեարկած պարզամավորը Վարդան Օսկանյանն է՝ 21, ամենաշատ դեմը՝ Գուրգեն Արսենյանը՝ 13:

5-րդ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ բացակայած պարզամավորների տասնյակը գլխավորում է ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանը՝ 84: ԲՀԿ-ից այս տասնյակում կա ևս 4 պարզամավոր: Ամենաշատ ձեռնպահ քվեարկած պարզամավորների տասնյակում ԲՀԿ-ականները 5-ն են: Ամենաշատ կողմ, դեմ քվեարկածների տասնյակներում ԲՀԿ որևէ ներկայացուցիչ չկա: Ամենաակտիվ պարզամավորների տասնյակում ԲՀԿ անդամները 2-ն են:

parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի ամենաշատ այցելված էջերի տասնյակում ԲՀԿ-ականները երեքն են:



# ԱԺ ԽԱՐԱԿԻՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱԿ | Օրենսդրական նախաձեռնություններ.


5-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի ընթացքում, արտահերթ ընթացակարգով քննարկվել և մերժվել է ՀԱԿ խմբակցության հեղինակած միայն մեկ նախաձեռնություն. կառավարությանն ուղղված հարցապնդումը՝ հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ:

Գլխադասային հանձնաժողովում դրական եզրակացություն չստացած 4 օրենսդրական նախաձեռնություն պարզամավորների քվեարկության արդյունքում չի ընդգրկվել նստաշրջանի օրակարգ: Նստաշրջանի ընթացքում ընդունված բոլոր օրենքներից միայն մեկի տակ կա ՀԱԿ պարզամավորի անուն. «Հեղինակային իրավունքի մասին» օրինագծին ՀԱԿ-ը միացել է որպես համահեղինակ՝ ՀՀԿ-ի, ՀՅԴ-ի և «Ժառանգության» հետ միասին: ՀԱԿ-ը ունի շրջանառության մեջ դրված, բայց դեռևս նստաշրջանի օրակարգ չընդգրկված 8 նախաձեռնություն: Դրանցից 4-ի հեղինակը Հրանտ Բագրատյանն է, 1-ինը՝ ամբողջ խմբակցությունը, 3-ինը՝ խմբակցությունը՝ առանց Բագրատյանի: ՀԱԿ-ը նստաշրջանի օրակարգ ընդգրկված ոչ մի նախագիծ չունի:

## Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 4-րդ նստաշրջանի ընթացքում

ՀԱԿ խմբակցության ամենաշատ հարց տված (13), դեմ քվեարկած (33) և չքվեարկած (9) պարզամավորը Նիկոլ Փաշինյանն է: Ամենաշատը կողմ է քվեարկել Գագիկ Զհանգիրյանը՝ 52, ձեռնպահ՝ Արամ Մանուկյանը՝ 13: Ամենաշատը բացակայել (45) և ելույթ է ունեցել (6) Հրանտ Բագրատյանը: 5-րդ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ ձեռնպահ և կողմ քվեարկած պարզամավորների տասնյակներում ՀԱԿ ոչ մի անդամ չկա: Ամենաշատ բացակայածների տասնյակում ՀԱԿ-ից Հրանտ Բագրատյանն է, ամենաշատ դեմ քվեարկածների տասնյակում խմբակցության 5, իսկ ամենաակտիվների տասնյակում 2 պարզամավոր է:

parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի ամենաշատ այցելված էջերի տասնյակում ընդգրկված է միայն Հրանտ Բագրատյանը:



# ԱԺ ԽԱԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ


## «Ժառանգություն» | Օրենսդրական նախաձեռնություններ.

5-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի ընթացքում «Ժառանգություն» խմբակցության որևէ օրենսդրական նախաձեռնություն չի ընդունվել: Ընդունված բոլոր օրենքներից միայն մեկի փակ կա «Ժառանգության» պարզամավորի անուն. «Հեղինակային իրավունքի մասին» օրենքի նախագծին «Ժառանգությունը» միացել է որպես համահեղինակ՝ ՀՀԿ-ի, ՀԱԿ-ի և ՀՅԴ-ի հետ միասին: Նստաշրջանի ընթացքում քննարկվել է խմբակցության կողմից արտահերթ համարված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ձանաչելու մասին» օրինագիծը, որը քվեարկությամբ չի ընդունվել: «Ժառանգությունն» ունի նստաշրջանի և քառօրյա օրակարգ ընդգրկված միայն 1 նախագիծ՝ ԱԺ կանոնակարգ օրենքում փոփոխություններ կատարելու մասին: Իսկ 2012-ից շրջանառության մեջ դրված, բայց նստաշրջանի օրակարգ չընդգրկված նախաձեռնությունները 6-ն են:

## Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 4-րդ նստաշրջանի ընթացքում

«Ժառանգություն» խմբակցության պարզամավորներից ամենաշատը հարց է փոխել Թևան Պողոսյանը (13), ամենաշատը ելույթ են ունեցել Ռուբեն Հակոբյանն ու Զարուհի Փոստանյանը (4), ամենաշատ կողմ և ամենաշատ դեմ քվեարկած պարզամավորը Ալեքսանդր Արզումանյանն է՝ 42 և 29: Ամենաշատը չի քվեարկել ու ամենաշատը ձեռնպահ է քվեարկել Ռուբեն Հակոբյանը՝ 4 և 15: «Ժառանգության» ամենաշատ բացակայած պարզամավորը Թևան Պողոսյանն է՝ 38: 5-րդ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ բացակայած, կողմ քվեարկած և ամենակարիվ պարզամավորների փասնյակներում «Ժառանգության» ոչ մի անդամ չկա: Ձեռնպահ քվեարկածների փասնյակում կա «Ժառանգության» մեկ, իսկ ամենաշատը դեմ քվեարկածների փասնյակում 3 ներկայացուցիչ:

parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի ամենաշատ այցելված էջերի փասնյակում ընդգրկված է միայն Ալեքսանդր Արզումանյանը:





# ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀՅԴ | Օրենսդրական նախաձեռնություններ.


Ազգային ժողովի 5-րդ գումարման 4-րդ նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքներից միայն մեկի փակ կա ՀՅԴ պարզամավորի անուն. «Հեղինակային իրավունքի մասին» օրենքի նախագծին ՀՅԴ-ն միացել է որպես համահեղինակ՝ ՀՀԿ-ի, ՀԱԿ-ի և «Ժառանգության» հետ միասին:

ՀՅԴ-ն ունի նստաշրջանի օրակարգ ընդգրկված 3 նախագիծ: Շրջանառության մեջ դրված ՀՅԴ 5 օրենսդրական նախաձեռնություն նստաշրջանի օրակարգ դեռևս չի ընդգրկվել: Դրանցից միայն մեկն է խմբակցությունը հեղինակել 2013թ.-ին:

## Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 4-րդ նստաշրջանի ընթացքում

ՀՅԴ խմբակցության ամենաշատ հարց փակված, ելույթ ունեցած, կողմ, դեմ, ձեռնպահ քվեարկած պարզամավորը Արծվիկ Մինասյանն է. հարց՝ 18, ելույթ՝ 18, կողմ՝ 34, դեմ՝ 22, ձեռնպահ՝ 29: Ամենաշատը բացակայել է Վահան Հովհաննիսյանը: 5-րդ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների փասնյակում ՀՅԴ ոչ մի պարզամավոր չկա: Ձեռնպահ քվեարկածների փասնյակում առաջին 4 հորիզոնականները զբաղեցնում են դաշնակցականները: Ամենաշատ բացակայած 10 պարզամավորներից միայն 1-ն է ՀՅԴ անդամ, ամենաշատ դեմ քվեարկած և ամենակարգավ պարզամավորների փասնյակներում կա խմբակցության 1 ներկայացուցիչ:

parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի ամենաշատ այցելված էջերի փասնյակը գլխավորում է Արծվիկ Մինասյանը:



# ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ


## ՕԵԿ | Օրենսդրական նախաձեռնություններ.

5-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքներից միայն 2-ի տակ կա ՕԵԿ պարզամավորի անուն. դրանցից մեկը գրվել է ՀՀԿ-ի, մյուսը՝ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի և «ժառանգության» համահեղինակությամբ: Գլխադասային հանձնաժողովում դրական եզրակացություն չստացած 1 օրենսդրական նախաձեռնություն պարզամավորների քվեարկության արդյունքում չի ընդգրկվել նստաշրջանի օրակարգ: ՕԵԿ-ը նստաշրջանի օրակարգ ընդգրկված ընդամենը 2 օրենսդրական նախաձեռնություն ունի: Նստաշրջանի օրակարգում գրնվող ևս երկու նախագծի խմբակցությունը միացել է որպես համահեղինակ՝ ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի հետ միասին: Խմբակցության հեղինակած 23 օրենսդրական նախաձեռնություն դրված է շրջանառության մեջ: Դրանց ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև մեկ տարով: Այս նախագծերից միայն 5-ը խմբակցությունը հեղինակել 2013թ.-ին, 18-ը՝ 2012թ.-ին: Նստաշրջանի ընթացքում ՕԵԿ խմբակցությունը ներկայացրել է մեկ հարցապնդում արցախյան պատերազմի ազատամարտիկներին և Աֆղանստանի պատերազմի մասնակիցներին ԽՍՀՄ ավանդների փոխհատուցման գործընթացի ընթացքում արտոնություններ տրամադրելու վերաբերյալ: Խմբակցությունը, սակայն, հարցապնդման նախագիծ չի ներկայացրել:

Ըստ [parliamentmonitoring.am](http://parliamentmonitoring.am) կայքի վիճակագրության՝ 4-րդ նստաշրջանի ընթացքում

ՕԵԿ խմբակցության ամենաշատ հարց տված և ելույթ ունեցած պարզամավորը Հովհաննես Մարգարյանն է. հարց՝ 14, ելույթ՝ 8: Ամենաշատը բացակայել է Իշխան Խաչատրյանը՝ 12: Ամենաշատը կողմ է քվեարկել Հեղինե Բիշարյանը՝ 81:

5-րդ գումարման ընթացքում խորհրդարանի ամենաշատ բացակայած, կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած պարզամավորների տասնյակներում ՕԵԿ ներկայացուցիչ չկա: Ամենաակտիվ պարզամավորների տասնյակում կա ՕԵԿ 2 անդամ:



## ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5-րդ գումարման 4-րդ նստաշրջանի ընթացքում փոփոխություններ են կատարվել ԱԺ 4 խմբակցությունների կազմում՝ ՀՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, «Ժառանգություն»: Պարզամա-վոր Վահե Հակոբյանի՝ Սյունիքի մարզպետ նշանակվելուց հետո ՀՀԿ խմբակցության կազմը համալրեց Արմեն Կարապետյանը: ՕԵԿ-ական Խաչիկ Հարությունյանը հրաժարվեց պարզամավորական մանդատից՝ ՀԱՊԿ ակադեմիայի ռեկտոր նշանակվելու համար: Նրան փոխարինեց Լևոն Դոխոյանը: ՀՅԴ խմբակցության անդամ Վահան Հովհաննիսյանը նշանակվեց ՀՀ դեսպան Գերմանիայում: Թափուր մանդատը ՀՅԴ համամասնական ցուցակից ստացավ նախկին պարզամավոր Միքայել Մանուկյանը: «Ժառանգություն» խմբակցությունում նախ փոխվեց ղեկավարը. Ռուբեն Հակոբյանին փոխարինեց Զարուհի Փոստանջյանը, իսկ տարեվերջին Թևան Պողոսյանը հայտարարեց մանդատից հրաժարվելու մտադրության մասին: Թևան Պողոսյանի հրաժարականի և նրան փոխարինողի հարցը կհանգուցալուծվի ԱԺ գարնանային նստաշրջանում:

## ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրությամբ խորհրդարանին վերապահված վերահսկողական լիազորությունը իշխանության թևերի հավասարակշռությունը պահելու կարևորագույն, եթե չասենք՝ միակ, գործոնն ու լծակն է: Գործադիր ու դատական իշխանության գործունեության համար համապատասխան իրավական միջավայր ստեղծելու առաքելությունից բացի, օրենսդիր մարմինն իր վերահսկողական գործառույթն իրականացնելու մի շարք հարթակներ ու գործիքներ ունի. հաստատում է ծրագրեր ու հաշվետվություններ, վավերացնում է միջազգային կոնվենցիաներ, միջպետական պայմանագրեր ու համաձայնագրեր, նշանակում բարձրաստիճան պաշտոնյաների: Այսինքն՝ սահմանադրորեն խորհրդարանն օժտված է պետության համար բոլոր կարևոր հարցերում իր վերաբերմունքն ունենալու և արտահայտելու իրավասությամբ: Այլ հարց է, թե այդ իրավասությունից օգտվելու ինչպիսի ավանդույթներ են ձևավորված: 5-րդ գումարման 4-րդ նստաշրջանի օրակարգը խորհրդարանին ներկայացված ծրագրերով ու հաշվետվություններով նույնքան հագեցած չէր, որքան նախորդ գարնանային նստաշրջանինը: Միաժամանակ հենց այս ժամանակահատվածում առավել ընդգծված դրսևորվեց խորհրդարանի ու կառավարության միջև ձևավորված հարաբերությունների բնույթը. գործադիրը ոչ միայն պահպանեց օրինաստեղծ փիրությունը իր դոմինանտ դիրքը, այլև ամրապնդեց իր տրամադրվածությունը, որ օրինագծերը խորհրդարանում պետք է ընդունվեն հենց այն բովանդակությամբ ու տեսքով, ինչպես ինքը դրանք ներկայացրել է (այս իմաստով ամենապիպական օրինակը պետական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձերին առնչվող օրինագիծն էր):

## ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Նույն փրամաբանության մեջ էին նաև խորհրդարանի վերահսկողական գործառնությունն առնչվող հարցերի քննարկումները նստաշրջանի ընթացքում. բյուջեի մասին օրենքն ընդունվեց գրեթե անփոփոխ, գազային աղմկահարույց համաձայնագրերը վավերացվեցին առանց վերապահումների, ՀՀ նախագահի առաջարկած թեկնածուները Վերահսկիչ պալատի նախագահի և Գլխավոր դատախազի պաշտոններին նշանակվեցին միաձայն:

«Մենք քաղաքական նույն թիմն ենք» կարգախոսի նշանակությունն ուռճացնելով խորհրդարանական մեծամասնությունը գործադիրին օժտել է միանձնյա որոշումներ կայացնելու իրավասությամբ և փաստացի ստանձնել է կառավարության բոլոր նախաձեռնություններն ու քայլերը սոսկ վավերացնողի դերակատարություն:

**Տեղեկանք.** Ազգային ժողովը նստաշրջանի ընթացքում վավերացրել է 18 միջազգային պայմանագիր, այդ թվում հանրային մեծ հնչեղություն ստացած գազային համաձայնագրերը, քննարկել է «ՀՀ նախագահի 2013 թ. փետրվարի 18-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման, ընտրական օրենսգրքի խախտումների, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ» ՀՀ ԿԸՀ հաղորդագրությունը, ՀՀ վերահսկիչ պալատի 2014 թ. փարեկան գործունեության ծրագիրը, ի գիտություն է ընդունել ՀՌԱՀ և ՀՀՌԽ 2012թ. փարեկան հաշվետվությունները: Նշանակել է ՀՀ Գլխավոր դատախազ և ՎՊ նախագահ:

### Գլխավոր դատախազի նշանակումը. անհետևողականության դասեր

Գլխավոր դատախազին հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ 6 փարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Գլխավոր դատախազ:

Օրենքով սահմանված դեպքերում հանրապետության նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել Գլխավոր դատախազին:

ՀՀ սահմանադրություն, հոդված 103.

## ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Գլխավոր դատախազի նշանակման իրավասությունը ՀՀ Սահմանադրությամբ վերապահված է Ազգային ժողովին, որը, սակայն, օրենսդրորեն «կաշկանդված է» նշանակել հանրապետության նախագահի առաջարկած թեկնածուին: Խորհրդարանն ունի նաև Գլխավոր դատախազին անվստահություն հայտնելու և օրենքով սահմանված դեպքերում պաշտոնանկ անելու իրավասություն, սակայն՝ կրկին միայն ՀՀ նախագահի առաջարկությամբ: Գլխավոր դատախազը պարտավոր է տարին մեկ անգամ հաշվետվություն ներկայացնել պառլամենտին, բայց վերջինը նրա հաղորդումը կարող է ընդունել միայն «ի գիտություն»: Սահմանադրական այս դրույթներն ԱԺ-ին պարասխանաբար են դարձնում Գլխավոր դատախազի գործունեության համար, սակայն սահմանափակում են նրա, ինչպես նաև դատախազական ոլորտի նկատմամբ պառլամենտի ինքնուրույն վերահսկողության լծակները:

Ոչ «Դատախազության մասին», ոչ էլ ԱԺ կանոնակարգ օրենքներով հստակ չեն սահմանվում՝ դատախազը գրավոր, թե՞ բանավոր ձևաչափով պետք է խորհրդարան ներկայացնի տարեկան հաղորդումը: Արդյունքում, տարիների ընթացքում ձևավորվել է հաղորդումը գրավոր ներկայացնելու ավանդույթը, ինչը Գլխավոր դատախազին ազատել է ԱԺ ամբիոնից համակարգում առկա իրավիճակին առնչվող հարցերին հրապարակայնորեն պարասխանելու պարտավորությունից: Այս առումով դատախազի գործունեության հրապարակայնության սկզբունքը կիրառվում է մասնակիորեն և ձևականորեն: Սա իրավական կարգավորման խնդիր է, որը ոչ այնքան Գլխավոր դատախազի, որքան օրենսդիրի սկզբունքայնության և հետևողականության դաշտում է: Բայց խորհրդարանը, ամրագրելով հանդերձ խնդիրը, երբևէ չի փորձել օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ լուծել այն, ինչով դրսևորել է ոլորտի նկատմամբ վերահսկողության գործառույթը կիրառելու հարցում իր անտարբերությունն ու անհետաքրքրությունը:

Սեպտեմբերին, օրենքով սահմանված կարգով, ՀՀ նախագահը Գլխավոր դատախազի պաշտոնում նշանակելու համար Ազգային ժողովին առաջարկեց զինդատախազ Գևորգ Կոստանյանի թեկնածությունը: Խորհրդարանում ծավալված քննարկումներում դատախազի կողմից ներկայացվող հաղորդման և ԱԺ-ի առջև հաշվետվողականության մակարդակի բարձրացման թեման առանցքայիններից էր, սակայն դրանից հետո ողջ նստաշրջանի ընթացքում ԱԺ խմբակցություններից որևէ մեկը ԱԺ կանոնակարգ օրենքում համապարասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ հանդես չեկավ:

## ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԱԺ-ն փակ գաղտնի քվեարկությամբ հոկտեմբերի 1-ին Գլխավոր դատախազ ընտրեց ՀՀ Գլխավոր դատախազի նախկին տեղակալ, նախկին զինդատախազ Գևորգ Կոստանյանին: Նրա թեկնածությանը կողմ քվեարկեց 103 պատգամավոր, դեմ՝ 3-ը: Երկու քվեաթերթիկ համարվեց անվավեր: Քվեարկության ինտրիգը դեմ քվեարկողների և այդ մասին հայտարարողների թվի անհամապատասխանությունն էր: Դատախազի ընտրության հարցում ԱԺ քաղաքական մեծամասնության դերակատարությունը մնաց քաղաքական որոշում կատարելու պարզունակ պարտավորության և նախագահի՝ իբրև քաղաքական թիմի ղեկավարի նախընտրությունը բավարարելու նեղ շրջանակում: Գլխավոր դատախազի թեկնածուին հարցեր ուղղելու իրավունքից օգտվեց ընդամենը 7 պատգամավոր, նրանցից միայն մեկը՝ քաղաքական մեծամասնության ներկայացուցիչ: Ելույթների փուլում կռալիցիոն պատգամավորները նախընտրեցին թեկնածությունը դիտարկել անձնավորված՝ համակարգային խնդիրները թողնելով երկրորդ պլանում և, ըստ էության, խուսափելով բովանդակային բանավեճից:

Թեկնածուի նշանակման անխուսափելիությունից և քվեարկության արդյունքների կանխորոշվածությունից բխող այս իրողությունն ազդեց նաև քաղաքական փոքրամասնության մասնակցության և քվեարկության վրա: ԱԺ փոքրամասնությունը Գևորգ Կոստանյանին վերաբերվեց ու հարցեր ուղղեց ոչ թե որպես Գլխավոր դատախազի թեկնածուի, այլ՝ որպես պոպուլիստ դատախազի՝ համակերպված նրա նշանակման անխուսափելիության հետ: Դրա վկայությունը դեմ քվեարկելու մասին երկու խմբակցությունների՝ ՀԱԿ-ի ու «Ժառանգության» հայտարարությունների և փակ գաղտնի քվեարկության հրապարակված արդյունքների անհամապատասխանությունն էր, որը խոսում էր առանձին պատգամավորների անսկզբունքայնության մասին:

### ՎՊ նախագահի նշանակում

4-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանը Վերահսկիչ պալատի գործունեությանն անդրադառնալու երկու առիթ ունեցավ. նախ՝ նշանակեց ՎՊ նախագահ, ապա հաստատեց ՎՊ 2014 թ. գործունեության փարեկան ծրագիրը:

**Տեղեկանք.** Նոյեմբերի 12-ին ԱԺ-ն 88 կողմ, 13 դեմ ձայների հարաբերակցությամբ Իշխան Զաքարյանին երկրորդ անգամ նշանակեց Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահ: Դեկտեմբերի 3-ին (քննարկումը կայացել էր դեկտեմբերի 2-ին) 88 կողմ, 7 դեմ, 8 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հաստատեց ՎՊ 2014թ. գործունեության փարեկան ծրագիրը:

## ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՎՊ նախագահի նշանակումից 4 ամիս առաջ խորհրդարանում թեժ քննարկում էր ծավալվել ՎՊ 2012թ. փարեկան հաշվեպվության շուրջ: Դրան հաջորդել էր ՀՀ նախագահի հրավիրած խորհրդակցությունը՝ բյուջեփայլին միջոցների արդյունավետ կառավարման, պետական ծրագրերի վերահսկողության խստապայման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման հարցերի շուրջ:

Բացի դրանից, 2012թ. ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված որոշ խախտումների, յուրացումների փաստեր ՎՊ-ն ուղարկել էր ՀՀ Գլխավոր դատախազություն: Իսկ խորհրդարանական քննարկումներից հետո նաև ԱԺ նախագահին էր իր նախաձեռնությամբ ողջ հաշվեպվությունն ուղարկել ՀՀ Գլխավոր դատախազություն՝ խնդիրը քաղաքական շահարկումների հարթությունից փոխափոխելով իրավական պարասխանաբանության հարթակ: Սպասելի էր, որ այդ ամենը պետք է արտացոլվեր Իշխան Զաքարյանի վերանշանակման հարցի խորհրդարանական քննարկումներում, սակայն ԱԺ քաղաքական մեծամասնությունը փորձեց շրջանցել թեման: Նույնը փողի ունեցավ նաև ՎՊ 2014 թ. գործունեության ծրագրի հաստատման ժամանակ:

**Տեղեկանք.** Նախորդ նստաշրջանում ՎՊ-ի 2012թ. գործունեության հաշվեպվության քննարկման ժամանակ Իշխան Զաքարյանին ուղղված 27 հարցերից 15-ի, իսկ մութերի փոխանակման փուլում հնչած 15 ելույթներից 8-ի հեղինակը եղել են քաղաքական մեծամասնության պարզամավորները, որոնք առաջ էին քաշում, իրենց որակմամբ «թալանչիներին», «յուրացնողներին» պարտադիր պարասխանաբանության ենթարկելու պահանջը: Մինչդեռ ՎՊ նախագահի նշանակման հարցի քննարկման ժամանակ մեծամասնությունից որևէ հարց չի հնչել, իսկ 11 ելույթներից միայն 3-ն էին կոալիցիոն պարզամավորներինը, այն էլ հիմնականում խմբակցությունների դիրքորոշումները ներկայացնելու համար: ՎՊ 2014 թ. գործունեության ծրագրի ներկայացման ժամանակ հնչած 8 հարցերից 3-ի հեղինակներն էին կոալիցիայի անդամներ, իսկ բոլոր 3 ելույթներն էլ ընդդիմությունից էին:

Վերահսկիչ պալատի նախագահին նշանակելու սահմանադրական իրավա-սուբյեկտները Ազգային ժողովի՝ գործադիր իշխանության գործունեության, պետական բյուջեի և ծախսերի արդյունավետության ու նպատակայնության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ամենագործուն մեխանիզմներից մեկն է: Իսկ այն դեպքում, երբ ՀՀ նախագահը խորհրդարանին փաստացի առաջարկում է կատարել վերանշանակում, ԱԺ-ն հնարավորություն է ստանում իր այդ գործառույթն իրականացնել՝ թեկնածուի աշխատանքի կատարողականի և արդյունավետության գնահատման հիման վրա:

## ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Քննարկումը ցույց տվեց, որ կոալիցիոն մեծամասնությունը որդեգրել է Իշխան Զաքարյանի վերանշանակումը հնարավորինս սահուն և անաղմուկ իրագործելու, նախապես կայացված քաղաքական որոշմանը հանրային ռեզոնանս չհաղորդելու մարտավարությունը: Մարտավարությունը նույնն էր նաև ՎՊ 2014թ. գործունեության ծրագիրը հաստատելիս: Ըստ էության՝ հանրային ռեզոնանս չառաջացնելու նպատակով այն ներկայացրեց ՎՊ խորհրդի անդամ Լիլիթ Գևորգյանը: Իշխան Զաքարյանն այդ ընթացքում որոշել էր գործուղման մեկնել ԼՂՀ:

Ծրագիրը կազմված է վերահսկողության 13 թեմաներից: Առաջին անգամ ՎՊ-ն ձեռնամուխ է լինելու ստուգել ոչ միայն բյուջեպային ծախսերի արդյունավետությունը, այլև մուտքերը: Մասնավորապես՝ Էկոնոմիկայի նախարարության վերահսկողության բաժնում ամրագրված է «բյուջեպային մուտքերի ապահովում»-ը: Ծրագրի շուրջ խորհրդարանում շահագրգիռ քննարկումներ չծավալվեցին, սակայն ընդդիմությունը հնչեցրեց գնահատականներ, ըստ որոնց՝ ՎՊ-ն շարունակում է որպես թիրախ դիրարկել միջին օղակներն ու պաշտոնյաներին և որ 2014-ի գործունեության ծրագիրն առանձնապես չի տարբերվում նախորդներից, իսկ ձևակերպումներն ընդհանրական են:

### Դիտարկումներ

■ ՎՊ նախագահի և ԱԺ նախագահի կողմից ՀՀ Գլխավոր դատախազություն էին ուղարկվել նյութեր, փաստացի հաղորդում էր արվել հանցագործությունների մասին, որոնք շրջանցվեցին խորհրդարանական քննարկումներում թե ԱԺ մեծամասնության, թե ՎՊ նախագահի կողմից: Այս իրողությունը փաստեց, որ հաշվետվությունը քրեաիրավական դաշտ տեղափոխելու ԱԺ նախագահի նախաձեռնությունը իրավիճակային բնույթ ունեւր և օրենսդիր իշխանության քաղաքական կշիռը և ինստիտուցիոնալ դերակատարությունը բարձրացնելու միտում չէր պարունակում:

■ Հունիսին ՀՀ նախագահի հրավիրած խորհրդակցության ժամանակ ՎՊ նախագահի՝ ԱԺ-ում արած հայտարարություններն արժանապան ՀՀ նախագահի սուր քննադատությանը, որին հաջորդեցին Իշխան Զաքարյանի վերանշանակման և ՎՊ գործունեության ծրագրի քննարկումներում ԱԺ մեծամասնության դրսևորած «լռակյացությունը» և աղմկահարույց փաստերի մասին ընդդիմադիր պարզամավորների հարցերին ՎՊ նախագահի՝ ըստ էության չպատասխանելու ընդգծված կեցվածքը: Այս իմաստով կարևոր է հարցը, թե որքանով կարող էր ՀՀ նախագահի քննադատությունն ազդել ԱԺ մեծամասնության և ՎՊ նախագահի պահվածքի վրա, ինչն ուղղակիորեն առնչվում է խորհրդարանի և վերահսկիչ պալատի անկախության ու ինքնուրույնության սահմանադրական սկզբունքների կիրառելիությանը: Սա հիմնավոր է դարձնում ԱԺ ընդդիմության կասկածներն առ այն, թե Իշխան Զաքարյանի վերանշանակման քաղաքական որոշումը կայացվել է նրան կաշկանդելու և ՎՊ-ի գործունեությունն ավելի վերահսկելի դարձնելու նկատառումով:



# ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

## Գազային համաձայնագրեր. վավերացում իրավական հակասություններով

«Գազային» համաձայնագրերը օրենսդրական մեծ փաթեթի շրջանակում կառավարությունը ԱԺ-ի վավերացմանը ներկայացրեց արտահերթ ռեժիմով: Այն փաստը, որ նույն փաթեթով գործադիրն ստիպված էր 2013թ. պետական բյուջեի դեֆիցիտի մեծացմանն ուղղված օրենսդրական փոփոխության նախաձեռնություն ցուցաբերել բյուջեային տարին փաստացի ավարտված լինելու պարագայում, ցույց է տալիս, որ կայացվել էր մինչև տարեվերջ «գազային» համաձայնագրերն անվերապահորեն վավերացնելու քաղաքական որոշում, որի կատարումը պետք է ապահովեր ԱԺ քաղաքական մեծամասնությունը՝ ի դեմս ՀՀԿ-ՕԵԿ կոալիցիայի: Սահմանադրական դատարանը դեկտեմբերի 19-ի որոշմամբ համաձայնագրերում ամրագրված պարտավորությունները ճանաչել էր ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Այս հանգամանքը խորհրդարանին զրկում էր դրանք իրավական հարթությունում քննարկելու հնարավորությունից և խնդիրն ամբողջությամբ տեղափոխում քաղաքական գնահատականների, դիրքորոշումների, ինչպես նաև քաղաքականացված, տվյալ դեպքում գերքաղաքականացված քվեարկության հարթություն:

**Տեղեկանք.** 2013 թ. դեկտեմբերի 20-ին կառավարության նախաձեռնած ԱԺ արտահերթ նստաշրջանում ընդգրկված հայ-ռուսական միջկառավարական 3 համաձայնագրերն ստորագրվել են դեկտեմբերի 2-ին Երևանում, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Հայաստան կարգավորած այցի ընթացքում: Դրանք էին «Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ», «Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի վերաբերյալ» և «Հայրուսգազարդ» փակ բաժնեիրական ընկերության բաժնեգրումների առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին» համաձայնագրերը:

Խորհրդարանում բուռն քննարկման առարկա դարձավ համաձայնագրերից հատկապես վերջինը, ըստ որի «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ՀՀ սեփականությունը հանդիսացող 20 տոկոս բաժնեմասը 63 մլրդ 339 մլն 900 հազար դրամ արժեքով օտարվում է ՌԴ «Գազպրոմ» ԲԲԸ-ին:

Կապիտուլյացիոն, դավաճանական, հակասահմանադրական, հաղորդում հանցագործության մասին, ապրակ ԱԺ-ին ու Հայաստանի Հանրապետությանը, գազային ամոթալի ու նվաստացուցիչ համաձայնություն, վասալային գործարք. խորհրդարանական փոքրամասնությունն, ըստ էության, քաղաքական գնահատական էր տալիս ոչ միայն կառավարությանն ու ԱԺ մեծամասնությանը, այլ նաև Սահմանադրական դատարանին ու պետական իշխանությանն ընդհանրապես:

## ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր առմամբ չհամաձայնելով հանդերձ խորհրդարանական փոքրամասնության կողմից հնչեցվող մեղադրանքների հետ՝ քաղաքական մեծամասնությունն այս փաթեթի քննարկումներում ակնհայտ պասիվություն դրսևորեց՝ մեծամասամբ խուսափելով առարկայական քննարկումների մեջ մտնելուց եւ առաջնորդվելով «ոչ թե քննարկելն է կարևոր, այլ՝ քվեարկելը» սկզբունքով: Այս մոտեցումը էական էր նրանով, որ կառավարությունն իր վրա բավարար ճնշում չէր զգում պարզաբանելու բազմաթիվ հիմնարար և սկզբունքային հարցեր, որոնք բարձրացվում էին ոչ միայն փոքրամասնության, այլ նաև մեծամասնության առանձին պարզամավորների կողմից: Այս կրավորական կեցվածքը ցույց տվեց, որ խորհրդարանական մեծամասնությունը չի ուզում հարցին մոտենալ որպես քաղաքական որոշումների վրա ազդելու կարևորագույն լծակով օժտված ինքնուրույն մարմին: Իրենց ելույթներում ՀՀ-ական մի քանի պարզամավորներ հստակ մատնանշում էին համաձայնագրերում առկա կոնկրետ դրույթներ, գնագոյացման հետ կապված կարգավորման մեխանիզմներ, որոնք սահմանափակում են հայկական կողմի լիազորությունները: Ընդդիմադիրներն առաջարկում էին համաձայնագրերը կրկին բանակցությունների առարկա դարձնել և վերախմբագրել դրանցում առկա վիճահարույց և հայկական կողմի համար առնվազն անհասկանալի ձևակերպումները: Մինչդեռ հիմնական զեկուսող ՀՀ էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանի՝ հարցերին ըստ էության չպատասխանելու կեցվածքը վկայում էր, որ կառավարության համար խորհրդարանականների առարկություններն անընդունելի են և գործադիրը պնդում է համաձայնագրերը վավերացնել այն տեսքով, ինչպես ներկայացված են: Արդյունքը եղավ այն, որ կռալիցիոն պարզամավորները, նույնիսկ նրանք, ովքեր վերապահումներ կամ առարկություններ էին ներկայացրել, վավերացման քվեարկության ժամանակ միաձայն կողմ քվեարկեցին: Խորհրդարանն այդպիսով չօգտվեց «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքներով իրեն վերապահված լիազորություններից, որոնք հնարավորություն էին տալիս համաձայնագրերը կրկին վերադարձնել բանակցությունների սեղան՝ հարթելու, վերախմբագրելու վիճահարույց հասկացություններն ու դրույթները: Տվյալ դեպքում խորհրդարանական մեծամասնությանն առաջնորդող Մաքսային միություն մտնելու ճանապարհին հայ-ռուսական հարաբերություններում ավելորդ խութեր չառաջացնելու չքողարկված զգուշավորությունն էր: Ի դեպ, համաձայնագրի վերաբերյալ ՄԴ որոշման 4-րդ կետը եւս քաղաքական գնահատականի տարրեր է պարունակում: Դատարանն արձանագրել է, որ «Համաձայնագիրը կոչված է խթանելու գազի ոլորտում Կողմերի արդյունավետ, փոխշահավետ համագործակցությունն ամենատարբեր ուղղություններով, մասնավորապես, Կողմերի էներգետիկ շուկաների եւ գազափոխադրման ենթակառուցվածքի հետագա զարգացման, ինչպես նաեւ ՀՀ ներքին կարիքների լիարժեք բավարարման նպատակով բնականոն գազամատակարարման հուսալիության ապահովման ուղղությամբ»: ՄԴ-ն նշել է, որ համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին:

## ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան բոլոր պետությունների հետ բարիդրացիական փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրություն, 9-րդ հոդված.

Տեղեկանք ՀՀ պարտավորությունները՝ սահմանված «Հայրուսգազարդ» փակ բաժնեկրթական ընկերության բաժնեկրթման առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին» համաձայնագրով (մեջբերումներ).

- երաշխավորում է, որ մինչև 2043 թ. դեկտեմբերի 31-ը ՀՀ որևէ նորմատիվ իրավական ակտով չեն փոփոխվի կամ չեղյալ հայտարարվի կամ այլ կերպ ուրնահարվի սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվի դրությամբ «Գազպրոմ» ԲԲԸ-ի, «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի ու դրանց համապատասխան իրավահաջորդների իրավունքներն ու շահերը,
- երաշխավորում է, որ չի օգտագործի «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի կառավարման հատուկ իրավունքները, որոնք կխախտեն գործող օրենսդրությանը համապատասխան ընկերության բաժնեկրթերին տրամադրված իրավունքների ծավալը,
- երաշխավորում է, որ ՌԴ տարածքից ՀՀ առաքվող և ՀՀ ներքին շուկայում սպառման համար նախատեսված բնական գազը ենթակա չէ արտահանման ՀՀ սահմաններից դուրս,
- ապահովում է ՀՀ իրավասու մարմնի կողմից ՀՀ սպառողներին իրացվող գազի գնի սահմանումը՝ սույն Համաձայնագրի Հավելվածով սահմանված Կարգին համապատասխան,
- ապահովում է ՀՀ իրավասու մարմնի կողմից ՀՀ սպառողներին իրացվող էլեկտրաէներգիայի գնի սահմանումը՝ սույն Համաձայնագրի Հավելվածով սահմանված Կարգին համապատասխան,
- պարբերաբար /ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ/ սահմանված կարգով վերանայում է իրացվող գազի և էլեկտրաէներգիայի գինը,
- ստեղծում է բարենպաստ պայմաններ Կողմերի գազային և էներգետիկ ձյուղերում փոխադարձ ներդրումների համար,
- վարում է մայրուղային գազատարների համակարգերի աշխատանքը կանոնակարգող միասնական փոխհամաձայնեցված նորմատիվային ու տեխնիկական քաղաքականություն,
- մշակում և իրականացնում է Ռուսաստանի Դաշնության հետ գազի խնայողության եւ էներգախնայողության ոլորտում համատեղ ծրագրեր,

## ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- երաշխավորում է, որ ՀՀ տարածքում «Գազպրոմ» ԲԲԸ- ին կամ նրան փոխկապակցված անձանց պատկանող ցանկացած գույք օգտվում է ՀՀ լիակատար ու անվերապահ պաշտպանությունից և չի կարող ենթարկվել ուղիղ կամ անուղղակի բռնագրավման, ազգայնացման կամ ռեկվիզիցիայի,
- անհապաղ հատուցում է վերը նշված պայմանների խախտման դեպքում այդպիսի գույքի, իրավունքների կամ շահերի արժեքն ԱՄՆ դոլարով,
- հետ է գնում համապատասխան պարտավորության չկատարման դեպքում, «Գազպրոմ» ԲԲԸ- ի պահանջով սույն Համաձայնագրի 1- ին հոդվածի համաձայն ընկերությանը փոխանցված բաժնետոմսերի փաթեթը հայկական դրամին համարժեք ԱՄՆ դոլար գնով, ինչպես նաև հատուցում է «Գազպրոմ» ԲԲԸ- ի բոլոր վնասները,
- լուծում է Համաձայնագրի կիրառման եւ դրանից բխող պարտավորությունների կատարման ընթացքում ծագած վեճերը բանակցությունների միջոցով,
- կրում է միջնորդ դատարանում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը նաև այն դեպքում, երբ միջնորդ դատարանն իր որոշմամբ կարող է նախատեսել, որ Կողմերից որևէ մեկը կրելու է ծախսերի մեծ մասը:

«Գազային» համաձայնագրերի քվեարկությունն անցկացվեց դեկտեմբերի 23-ին՝ ձեռքով, քանի որ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ջարուհի Փոստանջյանն ընդմիջմանը վերցրել էր որոշ ՀՀԿ-ականների քվեարկության էլեկտրոնային քարտերը: ՀՀԿ-ի և ՕԵԿ-ի քվեարկության կողմ ձայները հաշվեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Սուքիաս Ավետիսյանը: Սկզբում հայտարարվեց, որ կողմ է քվեարկել 77 պատգամավոր, ապա ճշտվեց՝ 72: ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՀԱԿ-ը և «Ժառանգությունը» քվեարկությանը չմասնակցեցին և լքեցին դահլիճը: Ավելի ուշ ոչ իշխանական 4 խմբակցությունները հանդես եկան հայտարարությամբ, համաձայն որի՝ քվեարկությունը համարում են անօրինական, իսկ համաձայնագրերի վավերացումը՝ չկայացած, քանի որ բաց քվեարկության դեպքում քվեարկության արդյունքների արձանագրման գործառույթն ստանձնող հաշվիչ հանձնաժողովը քվորում չունենալու պատճառով իրավագոր չէ որոշում կայացնելու:

Չնայած ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը ստորագրեց համաձայնագրերը վավերացնելու որոշումները, սակայն գործնականում հնարավոր չէ բացառել, որ քաղաքական նկատառումներից ելնելով՝ երբևէ կարող է դրանց վավերացման իրավական հիմքերը վերանայելու խնդիր դրվել: Հակառակ իրավական այդ խճճվածությանը, խորհրդարանը կարծես թե հակված չէ ոչ իրավական ու ոչ էլ էթիկական տեսանկյուններից քննության առարկա դարձնել քվեարկության կազմակերպման ժամանակ թե Ջարուհի Փոստանջյանի և թե ԱԺ նախագահի գործողությունները:

## ԱԺ ՕՐԵՆՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5-րդ գումարման ԱԺ 4-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է 108 օրենք. 5-ը մայր օրենքներ են, մնացածը՝ փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում: Ընդունված օրենքներից 94-ի հեղինակը կառավարությունն է (դրանց ուղիղ կեսը գործադիրն անհետաձգելի է համարել), 14-ինը՝ ԱԺ պարզամավորները: Մոտ 1/2-ը (62 օրենք) ընդունվել է հատուկ կարգով արտահերթ 2 նստաշրջանի ընթացքում. օրինագծերի 2-րդ և 3-րդ ընթերցումները կազմակերպվել են 24-ժամյա ռեժիմով: Օրենքներից երկուսն ընդունվել է ՀՀ նախագահի առարկությամբ և առաջարկությամբ:

Նստաշրջանի ընթացքում քննարկվել է ընդդիմադիր խմբակցությունների հեղինակած 2 օրենսդրական նախաձեռնություն, որոնք քվեարկությամբ մերժվել են:

Ստորև ներկայացնում ենք աշնանային նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքներից մի քանիսի դիտարկման արդյունքները: 5 փաթեթների միջոցով դիտարկել ենք սույնիսկան ոլորտին, բյուջեային և վարձատրության համակարգերին, հեղինակային իրավունքին ու ԶԼՄ-ների գործունեության միջավայրին առնչվող օրենսդրական քայլերը: Դիտարկվել է նաև այս խնդիրների արծարծումը քաղաքական ուժերի ծրագրերում, համադրվել են ծրագրային մոտեցումներն ու քվեարկությամբ արտահայտված դիրքորոշումները:

### Բյուջե 2014

2013 թ. դեկտեմբերի 10-12-ի արտահերթ նստաշրջանում ընդունվեց «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը՝ ձայների 70 կողմ, 40 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ: ԱԺ 6 խմբակցություններից 4-ը դեմ արտահայտվեց բյուջեին: Հաջորդ փարվա գլխավոր ֆինանսական փաստաթուղթը պաշտպանեցին միայն կոալիցիոն կուսակցությունները:

- 2014թ.-ի բյուջեն ունի որոշակի ռիսկայնություն՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական աճի տեմպերի դանդաղումով և ՌԴ-ից մեծ կախվածությամբ:
- 2014թ. առանց կոշտ միջամտությունների դժվար կլինի պահպանել գնաճը թույլատրելի մակարդակում:

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- 2014թ. բյուջեում չի պահպանվել 2013թ. բյուջեի ծախսերի համամասնությունը, այլ շար դեպքերում կիրառվել է ընտրողական կամ իրավիճակային մոտեցում:
- 102.4%-անոց ցուցանիշով սպառումը գերազանցում է ՀՆԱ-ն, այսինքն՝ Հայաստանում ավելի շար սպառում են, քան ստեղծում:
- Ներդրումային միջավայրի վարթարացման շարունակվող միտումը մտահոգիչ է դառնում: 2009թ.-ից ներդրումները ՀՆԱ-ի կազմում կրճատվում են: 2013-ին կանխատեսվող 26.9%-ի փոխարեն գրանցվեց 22.5%, իսկ 2014թ.-ին կկազմի 21.8%:
- ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունները կշարունակեն ծանր բեռ լինել (288.2 մլն ԱՄՆ դոլար), թեև դրանց պիկը 2013-ն էր:
- Զարգացման վեկտորի փոփոխությունը՝ Եվրամիությունից Մաքսային միություն, իր ազդեցությունը կթողնի 2014-ի բյուջեի վրա՝ մեծացնելով անորոշությունն ու ռիսկայնությունը:

**Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից**  
(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

### Բյուջե 2014-ի հիմնական ցուցանիշները

2014թ. ՀՀ պետական բյուջեի եկամուտները կկազմեն 1 տրիլիոն 134 մլրդ դրամ 2013թ. ցուցանիշը գերազանցելով 101.5 մլրդ դրամով: Ծախսերը կկազմեն 1 տրիլիոն 245 մլրդ դրամ, որը հավասար կլինի կանխատեսվող ՀՆԱ-ի 26.36 տոկոսին: Բյուջեի դեֆիցիտը 2014-ին կկազմի 110.5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.34 տոկոսը:

Բյուջեբային հարկացումների մեջ գերակշռողը կրկին սույիալ-մշակութային ուղղությունն է՝ 2013-ի 43.7 տոկոսի փոխարեն կազմելով ընդհանուր ծախսերի 47.1 տոկոսը:

Կառավարությունը 2014-ին տնտեսական զուսպ աճ է նպատակադրում 5.2 տոկոս, իսկ գնաձի համար կանխատեսում է բավական բարձր՝ 8 տոկոսանոց ցուցանիշ փարվա առաջին կիսամյակի ընթացքում: Գործադիրը հաշվարկում է, որ 2014թ. երկրորդ կեսին գնաճը կվերադառնա թիրախային 4 (+/-1.5) տոկոս միջակայք: 2014թ.-ին նախատեսվում է պետական պարտքն ավելացնել մոտ 200 մլն դոլարով՝ այն հասցնելով 4,741.8 մլն ԱՄՆ դոլարի:

2014թ. սույիալ-տնտեսական քաղաքականությունը, ըստ գործադիրի, միտված է լինելու մակրոտնտեսական կայունության պահպանմանը՝ ապահովելով կայուն տնտեսական աճ:

# ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## Բյուջեի առանձնահատկությունները

Բյուջեային քննարկումների մեկնարկին՝ ՀՀ վարչապետը խորհրդարանում ներկայացրեց 2014 թվականի գլխավոր ֆինանսական փաստաթղթի հիմնական առանձնահատկությունները. բյուջե 2014-ն առաջին անգամ

- ներկայացվում է ծրագրային ձևաչափով,
- հարկային բեռի ավելացում չի նախատեսում,
- կառուցվում է պետական կառույցների աշխատավարձերի համադրման և միասնականացման սկզբունքի վրա,
- արմատապես վերանայում է սոցիալական պաշտպանության ոլորտը՝ հրաժարվելով սոցիալական ֆորմալ օժանդակության մոտեցումից,
- մոտ 32 մլրդ դրամ է նախատեսում կուրակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի գործարկման համար,
- սոցիալական ոլորտին է ուղղում բյուջեի ընդհանուր ծախսերի մոտ 50 տոկոսը:

**Տեղեկանք.** Կառավարությունը բյուջե 2014-ի վերաբերյալ ԱԺ հանձնաժողովներից, խմբակցություններից և պարզամավորներից ստացել էր 326 առաջարկ: Մասամբ կամ ամբողջությամբ ընդունել էր դրանցից 31-ը, անընդունելի էր համարել 87-ը, մյուսները քննարկելի՝ առաջիկա փարիների ընթացքում: Առաջարկները հիմնականում վերաբերում էին փարբեր նպատակների ֆինանսավորման համար բյուջեային հարկացումներ նախատեսելուն կամ ավելացնելուն:

## Բյուջեն՝ ըստ ԱԺ խմբակցությունների

ԱԺ 6 խմբակցություններից 4-ը դեմ արտահայտվեց բյուջեին: Տարվա գլխավոր ֆինանսական փաստաթուղթը պաշտպանեցին միայն կոալիցիոն կուսակցությունները:

ՀՀԿ-ն կողմ էր նախագծին՝ այն իրարեսեական ու հավասարակշռված համարելով, ՕԵԿ-ը կողմ էր՝ հիմնականում քաղաքական-կոալիցիոն համերաշխության և իրական հնարավորությունների ըմբռնումով: ԲՀԿ-ն դեմ էր փաստաթղթին՝ համոզված, որ դրանով չի ապահովվելու կենսամակարդակի բարելավում, իսկ այն ներկայացնող կառավարությունը չունի վստահության ռեսուրս: Ոչ միայն բյուջեին, այլև կառավարությանը դեմ էր նաև «Ժառանգություն» խմբակցությունը: ՀԱԿ-ը բյուջեն «ծաղրի և թալանի» փաստաթուղթ որակեց, ՀՅԴ-ն համոզմունք հայտնեց, որ կառավարության վարած նման քաղաքականությամբ երկրի առջև ծառայած մարտահրավերները ոչ միայն չեն հաղթահարվելու, այլև ավելանալու են:

# ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## Պակասուրդի ավելացում 2013թ. պետական բյուջեում

2013թ. դեկտեմբերի 23-ին 72 կողմ ձայնով խորհրդարանը փոփոխություն կատարեց 2013թ. պետական բյուջեի մասին օրենքում:

Նախագիծն ընդգրկված էր 2013թ.-ի դեկտեմբերի 20-ին կառավարության նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նստաշրջանի օրակարգում: Ինչպես նշեց հիմնական զեկուլոցող՝ օրենսդրական փաթեթն անմիջականորեն առնչվում էր գազային համաձայնագրերին: Հակառակ դրանց շուրջ ստեղծված բուռն հասարակական մթնոլորտի՝ փաթեթն ընդունվեց առանց քննարկման:

ՀՀ 2013 թ. բյուջեի մասին օրենքում կատարված փոփոխություններով 63.3 մլրդ դրամով ավելացավ պետական բյուջեի պակասուրդը: Պակասուրդի ֆինանսավորումը կատարվեց ներքին աղբյուրների՝ այն է՝ ֆինանսական զուտ ակտիվների, բաժնեփոմսերի և կապիտալում այլ մասնակցության իրացումից մուտքերի հաշվին: Այս միջոցներն ուղղվեցին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն և ըստ բյուջեային ծախսերի գործառական դասակարգման հոդվածների՝ ներմուծված գազի դիմաց տրվեցին «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին որպես փոխհատուցում: Տնտեսագիտական դասակարգման տեսանկյունից սա որպես ծախս տեղաբաշխվեց 2013թ. բյուջեի տնտեսական հարաբերություններ բաժնի վառելիք և էներգետիկա խմբի նավթամթերք և բնական գազ դասում:

ՀՀ բյուջեային գործընթացում անցած 20 տարիներին նման նախադեպ չէր եղել: Կատարված փոփոխությունը թելադրեց փոփոխություններ և լրացումներ նաև «Հայաստանի Հանրապետության բյուջեային համակարգի մասին» օրենքում: Փոփոխություններով ապահովվում է պետական սեփականության մասնավորեցումից և օտարումից ստացված միջոցների ուղղումը համապատասխան պարտքերի մարմանը:

Վերջինիս արդյունքում փոփոխության են ենթարկվում մի շարք տնտեսական ցուցանիշներ, այն է՝ ՀՀ պետական բյուջեի 2013թ.-ի պակասուրդը ստացվում է ոչ թե 119.8 մլրդ դրամ, այլ 183.1 մլրդ դրամ: Պակասուրդը, որը կազմում էր ՀՆԱ-ի 2.64%-ը ավելանում է տեսակարար կշռով և կազմում է 4.04%՝ գերազանցելով 3%-ի ընդունված սահմանագիծը: Այն, որ կառավարությունը «Հայաստանի Հանրապետության բյուջեային համակարգի մասին» օրենքում ամրագրել է համապատասխան բացառություններ, թույլ է տալիս ենթադրել, որ նման գործարքներ հավանական են նաև մինչև 2014թ.-ի ավարտն ընկած ժամանակահատվածում: Այսինքն՝ չի բացառվում, որ 2014թ.-ի բյուջեի պակասուրդը ևս կարող է աճել:



# ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## Պեպրական պաշտոնյաների վարձավարության նոր համակարգ

2013 թ. դեկտեմբերի 12-ին ընդունվեց պեպրական պաշտոնյաների վարձավարության նոր համակարգ նախատեսող օրենսդրական փաթեթը՝ կազմված «Պեպրական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձավարության մասին» օրենքից և հարակից 34 օրենքներում փոփոխություններ առաջարկող նախագծերից: Օրենսդրական փաթեթն ընդունվեց ձայների 73 կողմ, 37 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ:

Փաթեթին կողմ են քվեարկել կոալիցիոն խմբակցությունները և ՀՅԴ-ն:

Օրենսդրական փաթեթով հանրային կառավարման ոլորտում ներդրվում է վարձավարության նոր համակարգ, որի հիմքում, ըստ գործադիրի հիմնավորումների, չորս հիմնական սկզբունքներ են աշխատավարձային միասնական քաղաքականություն, իշխանության երեք ձյուղերում պաշտոնների հիերարխիկ դասակարգում, բարձրաստիճան պաշտոնյաների և հանրային ծառայողների վարձավարության բազային ընդհանուր չափի որոշում և հանրային ծառայության փարբեր ձյուղերում աշխատավարձերի համադրելիության ապահովում:

Վարձավարության նոր համակարգի ներդրումը հանրային հատվածում որակյալ, երիտասարդ կադրերի ներգրավման խնդիրը չի լուծի: Ինչ վերաբերում է կադրերի պահպանմանը, ապա հանրային հատվածը կպահպանի բարձրագույն պաշտոններ զբաղեցնողներին, կարճաժամկետ հատվածում որոշակի հավակնություններ և երեք տարուց ավելի աշխատանքային ստաժ ունեցող գլխավոր մասնագետներին, մինչդեռ լավ մասնագետների հոսունությունը (կրպսեր և առաջադար պաշտոններ զբաղեցնողների) համեմատաբար բարձր կլինի:

Նոր համակարգի ներդրումը կհանգեցնի եկամուտների անհավասար բաշխման խորացմանը, եթե բնակչության բոլոր խմբերում եկամուտների փոփոխությունը (տոկոսային առումով) նույն չափի չլինի:

### **Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից**

(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ առաջարկվող մոդելի՝ յուրաքանչյուր պաշտոնյայի աշխատավարձը հաշվարկվելու է հետևյալ կերպ. բազային աշխատավարձը բազմապատկվելու է այդ պաշտոնի համար սահմանված գործակցով: Բազային է համարվելու նվազագույն աշխատավարձի անվանական արժեքը (կառավարությունը նախատեսում է, որ 2014-ին այն կազմվելու է 66 հազար դրամ), իսկ գործակիցները ներկայացվում են առանձին սանդղակով: Պաշտոնային դրույքաչափերի սանդղակում ամենաբարձր գործակիցը հանրապետության նախագահին է 20, հաջորդում են ԱԺ նախագահը և վարչապետը՝ 18 գործակիցներով: ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի գործակիցը 16 է, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարինը՝ 15,5, փոխվարչապետինը՝ 15: Սանդղակում նախարարների գործակիցը 12 է, ԱԺ պարզամավորինը՝ 10, իսկ ամենացածրը պետական համակարգում աշխատող կրտսեր մասնագետինն է՝ 1.25: Պաշտոնների սանդղակավորման և համադրելիության հիմքում ոչ այնքան իշխանության թևերի միջև սահմանադրական հարաբերությունների պրամաբանությունն է, որքան աշխատանքային գործունեության չափորոշիչները՝ ծավալ, որակ, պատասխանատվության մակարդակ, որոշումներ կայացնելու գործառույթ, սրբեղծագործականություն, շփումների շրջանակ և այլն:

Հանգամանքը, որ ՀՀ պետական բյուջեով 2014թ նախատեսված քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացումը համընկավ օրենսդրական փաթեթի ընդունմանը, վերջինիս հաղորդեց սուցիալական նշանակություն. խնդիրը տեղափոխվեց բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների աշխատավարձերի բարձրացման տրոսային հարաբերակցության և համեմատությունների տիրույթ՝ դառնալով հարցի քաղաքականացման և ընդդիմության մի մասի հիմնական առարկությունների գլխավոր մեխը: Փաթեթը տարածվում է 30 հազար պաշտոններ զբաղեցնողների վրա, որոնցից 1500-ն են բարձրաստիճան պաշտոնատար անձինք: Նրանց աշխատավարձերը նոր համակարգի ներդրման արդյունքում առնվազն կկրկնապատկվեն, մինչդեռ պետական համակարգի միջին և կրտսեր օղակների ծառայողները ստիպված կլինեն բավարարվել աշխատավարձերի խորհրդանշական բարձրացումներով:

### **Խմբակցությունների ծրագրերը և պետական պաշտոնյաների վարձատրության նոր համակարգը**

**ՀՀԿ.** Ներկայացված նախագծում պետական պաշտոնյաների վարձատրության նոր մեթոդաբանության հիմնական նպատակ է համարվում սուցիալական պաշտպանության մակարդակի բարձրացումը: ՀՀԿ-ի նախընտրական ծրագրում խնդիրը դիտարկվում է իբրև պետական կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլ: Այդ պատճառով նպատակադրումն ամրագրվել է ոչ թե ծրագրի սուցիալական, այլ պետական կառավարմանը վերաբերող բաժնում: Ընդհանուր առմամբ՝ կառավարության նախաձեռնությունը համընկնում է ՀՀԿ-ի ծրագրային մոտեցումներին:

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Փաթեթի քննարկումների ժամանակ, սակայն, քաղաքական մեծամասնության ուշադրության կենտրոնում հիմնականում վարձավարության գործակիցների սահմանման մեթոդաբանությունն էր, այն հանգամանքը, որ օրենքի նախագծով կառավարության անդամների աշխատավարձերի գործակիցը 2-ով բարձր էր օրենսդիր իշխանության ներկայացուցիչների աշխատավարձի գործակիցից: Չնայած այս առումով հնչեցված քննադատությանը և գործակիցների սահմանման առանցքում սահմանադրական կարգին առաջնահերթություն տալուն ուղղված առաջարկություններին՝ կառավարությունը մնաց անդրդվելի: Սա որևէ կերպ չազդեց քվեարկության վրա. ՀՀԿ-ն օրենսդրական փաթեթին կողմ քվեարկեց այն տեսքով, ինչպես նախատեսել էր գործադիրը:

**ՕԵԿ.** Քննարկումների ժամանակ խմբակցությունը հիմնական շեշտադրումը կատարեց պետական ծառայողների աշխատավարձերի ընդհանուր մեթոդաբանություն սահմանելու անհրաժեշտության վրա: Ծրագրում կուսակցությունը վարձավարության խնդիրը դիտարկում է ոչ այնքան պետական կառավարման արդյունավետության և պետական ծառայողների մոտիվացիայի բարձրացման հարթությունում, որքան՝ սոցիալական արդարության: ՕԵԿ-ը որպես այս խնդրի լուծման ճանապարհ առաջ է քաշում «Բյուջեփային ծառայության մասին» օրենքի ընդունումը, որով կսահմանվեն պետական ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանվածության ընդհանուր կառուցակարգերը: Խմբակցությունը նման օրենքի նախագիծ դեռևս չի ներկայացրել: Այսուհանդերձ, կուսակցությունը աշխատավարձի համակարգի բարեփոխման խնդիր է առաջադրում: Այս տեսանկյունից փաթեթը պաշտպանելու ՕԵԿ-ի քաղաքական դիրքորոշումը մեծամասամբ բխում էր նրա նախընտրական ծրագրի տրամաբանությունից:

**ԲՀԿ.** Ծրագրում չի առանձնացնում պետական կառավարման համակարգում վարձավարության խնդիրը: Մոտեցումն ընդհանրական է, աշխատավարձերի մակարդակի շարունակական բարձրացման, նոր մեխանիզմների մշակման և ներդրման խնդիր է առաջադրվում՝ առանց սկզբունքների ու չափանիշների հստակեցման: Սա հնարավորություն չի տալիս պարզելու, թե որքանով են պետական համակարգում վարձավարության հիերարխիկ սանդղակավորման կառավարության առաջարկած մոտեցումները բխում ԲՀԿ ծրագրային մոտեցումներից: Ծրագրային միակ որոշակիացումը վերաբերում է աշխատանքի քանակին և որակին համարժեք վարձավարության ապահովմանը: Կուսակցությունն աշխատավարձերի բարձրացման հիմքում դնում է գների բարձրացման հետ զուգահեռականության պահպանման տրամաբանությունը:

Ընդհանուր առմամբ, ԲՀԿ-ն քննարկումներում ցուցաբերել է քաղաքականացված մոտեցում՝ շեշտը դնելով միայն պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացման վրա և անտեսելով օրինագծի առանցքային նպատակը՝ վարձավարության միասնականության և համակարգվածության ապահովումը:

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

**ՀԱԿ.** Սկզբունքային դիրքորոշումը, որից բխում էր խմբակցության քվեարկության փորձամաքանությունը, այն էր, որ օրվա իշխանությունը կարող է բարձրացնել ոչ թե իր, այլ միայն հաջորդ իշխանությունների աշխատավարձը: Պետական պաշտոնատար անձանց վարձավարության նոր մեխանիզմներ սահմանող և աշխատավարձի բարձրացում ապահովող օրենսդրական փաթեթի ընդունման ՀԱԿ հիմնական պայմանն այն էր, որ այն ուժի մեջ մտնի համապետական հաջորդ ընտրություններից հետո: Պետական վարձավարության բարձրացման հիմքում ՀԱԿ-ը ծրագրային առումով դնում է ոչ թե համակարգվածության ապահովումը, այլ պետական ապարատի շեշտակի՝ մոտ 1,5 անգամ կրճատումը և դրա հաշվին աշխատավարձերի 2,2 անգամ բարձրացումը, ինչն էլ համարում է պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման հիմնական խթաններից մեկը: Փաթեթի խորհրդարանական քննարկումներում ՀԱԿ-ը քաղաքականացրել է հարցը՝ կառավարության նախաձեռնությունը ներկայացնելով բացառապես բարձրաստիճան պետական պաշտոնյաների աշխատավարձերը էականորեն բարձրացնելու և այն «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ գործազրկության նպաստներից հրաժարվելու որոշմանը հակադրելու, հասարակության սոցիալական բևեռացվածությունը խորացնելու պրիզմայով:

**ՀՅԴ.** ՀՅԴ-ն նախընտրական ծրագրում արժանապատիվ վարձավարության միասնական համակարգի ներդրումը հռչակում է առաջնահերթ 6 հիմնահարցերից մեկը, սոցիալական քաղաքականության հենասյուներից ամենասկզբունքայինը: Չնայած կառավարության ներկայացրած օրենսդրական փաթեթը հեռու է ռազմավարական գլոբալ լուծումներից, սակայն բխում է այդ փորձամաքանությունից: ՀՅԴ-ն առաջարկում է ընդհանուր ռազմավարության սահմանումից գնալ դեպի հանրային ծառայողների աշխատավարձերի միասնական բազային դրույքաչափի սահմանում՝ նվազագույն աշխատավարձի 120-ապատիկի չափով: Կառավարության ներկայացրած փաթեթն առնչվում էր այդ սխեմայի միայն երկրորդ մասին: Ըստ էության, ՀՅԴ-ն օրենսդրական նախաձեռնությանը մոտեցել է որպես միասնական վարձավարության ավելի փարողունակ համակարգի ներդրմանն ուղղված առաջին քայլ և կողմ է արտահայտվել:

**«Ժառանգություն».** Պետական հատվածում վարձավարության համակարգի հիմնական խնդիրը համարում է աշխատավարձի բազային ցածր դրույքաչափը: Ծրագրային առաջարկներն առ այն, որ անհրաժեշտ է բազային աշխատավարձի չափը սահմանել 111000 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 210000, մի կողմից հստակեցնում են, որ կուսակցությունը խնդրի լուծումը տեսնում է աշխատավարձի բարձրացման պարզ եղանակով, իսկ մյուս կողմից բացահայտում, որ հարցին «Ժառանգությունը» համակարգային կամ ռազմավարական նշանակություն չի տալիս: Կուսակցությունը պետական կառավարման արդյունավետության բարձրացման հիմնական բանալի է համարում համակարգի ապակուսակցականացումը, իրավական-սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացումը՝ առանց որոշակիացումներ կատարելու:

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Օրենսդրական փաթեթի առաջին ընթերցմամբ քվեարկության ժամանակ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների ձայները կիսվել են՝ ձեռնպահ և դեմ, մինչդեռ 2-րդ ընթերցմամբ քվեարկության ժամանակ խմբակցությունն արդեն ողջ կազմով դեմ է քվեարկել: Կարելի է ենթադրել, որ խմբակցության դիրքորոշումը պայմանավորված էր կառավարության կողմից պատգամավորների առաջարկությունների գերակշիռ մասը չընդունելու հանգամանքով:

### Ջբաղվածության հիմնահարց

Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումների համաձայն՝ ՀՆԱ իրական աճը 2013-2017թթ. անհրաժեշտ 6.2%-ից ցածր է լինելու: Միջնաժամկետ հարվածում գործազրկության մակարդակը կշարունակի մնալ բարձր: Իսկ այս պարագայում ՀՀ կառավարությանն անհրաժեշտ է կարճաժամկետ հարվածում այնպիսի քաղաքականություն իրականացնել, որը կավելացնի զբաղվածության նկատմամբ պահանջարկը:

Անցումը զբաղվածության ակտիվ քաղաքականությանն անհրաժեշտություն էր: Սակայն ակտիվացման քաղաքականությունն ինքնին չի կարող կայուն զբաղվածություն ապահովել, եթե դրան զուգահեռ արդյունավետ կերպով չիրականացվեն տնտեսական քաղաքականության այլ բաղադրիչներ (ներդրումային, արդյունաբերական, հարկային և այլն):

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից  
(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

### **2013թ. դեկտեմբերի 5-ին ընդունվել է «Ջբաղվածության մասին» օրենքը՝ ձայների 65 կողմ, 30 դեմ, 2 ձեռնպահ հարաբերակցությամբ:**

Կառավարության ներկայացրած օրինագծին կողմ են քվեարկել կոալիցիոն կուսակցությունները, դեմ՝ խորհրդարանական 4 խմբակցությունների՝ դահլիճում ներկա պատգամավորները:

**Նախագծի հիմնավորումները.** Օրինագծով ներդրվում է զբաղվածության պետական քաղաքականության նոր մոդել, որը կառավարությունը բնորոշում է որպես «ակտիվ»՝ հիմնված «աջակցել եւ պահանջել» սկզբունքի վրա: Այն խարսխված է երեք հիմնական նորարարությունների վրա.

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

■ Գործազրկության նպաստի համակարգը փոխարինվում է զբաղվածության ապահովման ակտիվ ծրագրերով, ինչի հետևանքով զբաղվածության պետական ծառայության կենտրոններում գրանցված գործազուրկները 2014-ից այլևս գործազրկության նպաստներ չեն ստանալու: Այդ նպատակի համար նախատեսված պետական միջոցներն ուղղվելու են մասնագիտական վերապատրաստումներ, վերաորակավորումներ ապահովող ծրագրերի իրականացմանը: Այն ենթադրում է աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի մշտադիտարկում, կարիքների գնահատում, որոնց հիման վրա մշակված պետական ծրագիրը կառավարությունը ներկայացնելու է ԱԺ հաստատմանը յուրաքանչյուր տարվա պետբյուջեի նախագծի հետ:

■ Խնդիր է դրվում համակարգել աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը՝ թիրախավորելով հատկապես արտերկրյա աշխատանքի տեղավորման պրոցեսում քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանությունը: Ոլորտի պետական համակարգում ենթադրում է լիազորված պետական մարմնի կողմից նման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների հաշվառում, տեղեկատվության փոխանակում, մեթոդական աջակցության ցուցաբերում:

■ Նախատեսվում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խթանում՝ պետական և ոչ պետական կազմակերպություններում նրանց համար նախատեսված աշխատատեղերի տարբերակված քվոտավորման կամ դրա անհնարինության դեպքում մասհանման եղանակով: Խախտումների դեպքում նախատեսվում է վարչական պատասխանատվություն:

«Նախորդ տարիների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործազրկության նպաստների ոլորտում ունենք խիստ անարդյունավետ համակարգ: Ըստ մեր ուսումնասիրությունների՝ համակարգին հատկապես միջոցների 94 տոկոսը չէր հասնում շահառուին, այն մարդուն, ով աշխատանք է փնտրում: Բավարար էր միայն 2 տեղեկանք ներկայացնել 1 տարվա ստաժ ունենալու և աշխատանքից ազատվելու մասին: Դիմողի սոցիալական կարգավիճակը բացարձակապես չէր հետաքրքրում գործող համակարգին. հազարավոր մարդիկ ստանում էին ֆինանսական միջոցներ, որոնք չէին նպաստում ոչ սոցիալական խնդիրների լուծմանը, ոչ էլ աշխատատեղերի ստեղծմանը»: **Տիգրան Սարգսյան, նոյեմբեր, 2013թ.**

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Զբաղվածության ոլորտում առկա վիճակի վերաբերյալ ՀՀ վարչապետի այս գնահատականները դարձան այն առանցքը, որի շուրջ կառավարությունը խորհրդարանում հիմնավորում էր իր ներկայացրած օրինագծի ընդունման անհրաժեշտությունը: Խորհրդարանական փոքրամասնությունը նույն գնահատականները որակում էր որպես «հաղորդում հանցագործության մասին»:

### Զբաղվածության հիմնահարցը ծրագրերում

Զբաղվածության ապահովման հիմնահարցը ուղղակի կամ անուղղակի ձևակերպումներով արտացոլված է խորհրդարանական ուժերի մեծ մասի նախընտրական ծրագրերում: ՀՅԴ, ՕԵԿ, ԲՀԿ ծրագրերում այն ամրագրված է որպես ժողովրդագրական անվտանգության հիմնական մարտահրավեր և արտագաղթի վրա ներազդող հիմնական գործոն: Չնայած այդ հանգամանքին՝ ծրագրերն ընդհանրական պարկերացում են փալիս զբաղվածության ապահովման մեխանիզմների կամ այս ոլորտում բարեփոխումների հիմնական ուղղությունների մասին:

**ՕԵԿ.** Նպատակադրումների առումով կուսակցության ծրագիրը համահունչ է կառավարության քաղաքականությանը, սակայն մեխանիզմների, մեթոդաբանության առումով կան փարբերություններ: ՕԵԿ-ը հիմքում դնում է ըստ բնակավայրերի և տնտեսության ճյուղերի աշխատատեղերի ստեղծման, փարբերակված ծրագրերի խթանման քաղաքականության իրականացումը, թեև ընդհանուր առմամբ ընդգծում է նաև վերաորակավորման և մասնագիտացման գործուն ծրագրերի իրականացման միջոցով աշխատաշուկայում անմրցունակ գործազուրկների ռեաբիլիտացման, աշխատանքի տեղավորման մասնավոր կազմակերպությունների գործունեության վերահսկման ու համակարգման անհրաժեշտությունը: ՕԵԿ-ը հատուկ բաժին է հատկացրել նաև հաշմանդամների պետական աջակցության և հասարակական ինտեգրման հարցին: Չնայած զբաղվածության ապահովման հիմնահարցի վերաբերյալ կառավարության հետ ունեցած փարբերակված մոտեցմանը, որոշ մեխանիզմների պարագայում առկա է համատեղելիություն. այս իմաստով նախագծի վերաբերյալ ՕԵԿ-ի դրական դիրքորոշումն ունի ծրագրային հիմնավորում:

**Ժառանգություն.** Զբաղվածության հիմնահարցի լուծման հիմքում դնում է փոքր ու միջին բիզնեսի զարգացման ռազմավարությունը՝ մրցակցային տնտեսական համակարգի ներդրման և ՓՄՁ-ների համար արտոնյալ ռեժիմների սահմանման միջոցով: Խնդրին մոտենում է ավելի շատ տնտեսական, քան սոցիալական տեսանկյունից: Չնայած զբաղվածության ապահովման գերկարևորմանը, ծրագրում որոշակիացված չեն մեխանիզմներն ու եղանակները: Կարելի է միայն նկատել, որ հարցի կարգավորումը տեսնում է ոչ թե նորարարական մոդելների կիրառման կամ քաղաքականության բարեփոխման եղանակով, ինչպես կառավարությունը, այլ գործազրկության նպաստները դիմամիկ բարձրացնելու միջոցով «ըստ այդ խմբերի սոցիալական-տնտեսական կարիքների համաչափ գնահատման»:

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի նկատմամբ խմբակցության անդամներն անհատական մոտեցում են ցուցաբերել՝ ստեղծելով քվեարկության բավականին հակասական պատկեր:

**ԲՀԿ.** Ջբաղվածության հիմնահարցի հիմքում ՓՄՁ-ներին պետական աջակցության ցուցաբերումն է: ԲՀԿ-ն խնդիրը դիտարկում է ոչ թե տնտեսական զարգացման, այլ սոցիալական ապահովության տեսանկյունից: Ջբաղվածության ապահովումը համարելով արտագաղթի կանխարգելման հիմնական գործիք՝ միջոցներից մեկը ԲՀԿ-ն համարում է ինքնազբաղվածության խրախուսումը և մասնագիտական կարողությունների մեծացումը: Ջբաղվածության մասին օրենքը խարսխված է աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրման հիման վրա գործազուրկների մասնագիտական վերապատրաստումների, վերաորակավորման ծրագրերի իրականացման վրա, և այս մասով կառավարության քաղաքականությունը մասամբ համընկնում է ԲՀԿ-ի ծրագրային դիրքորոշմանը: Կուսակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման նկատառումով առաջ է քաշում ՓՄՁ-ների նկատմամբ հարկային մեղմ վարչարարության կիրառման և ՀՆԱ-ի 0.5-2 տոկոսի սահմաններում պետական աջակցություն ցուցաբերելու մեխանիզմը: Խմբակցությունը հիմնականում դեմ է քվեարկել՝ դիրքորոշումը պայմանավորելով գործազուրկության նպաստների համակարգից հրաժարվելու կառավարության որոշման հետ սկզբունքային անհամաձայնությամբ, նաև քաղաքական մեծամասնության՝ իր հեղինակած օրինագծերը մերժելու դիրքորոշմանը համարժեք պատասխան տալու մարտավարությամբ:

**ՀՀԿ.** Ջբաղվածության հիմնահարցը քաղաքական մեծամասնությունը ներկայացնող ուժի ծրագրում որևէ կերպ արտացոլված չէ ոչ տնտեսական ու ոչ էլ սոցիալական քաղաքականության կտրվածքներով: ՀՀԿ ծրագրում այն չի դիտարկվում որպես առաջնահերթություն: Ընդհանուր հայեցակարգային մոտեցումը հիմնված է քաղաքականության վերանայման սկզբունքի վրա՝ շեշտադրումները պետության ֆինանսական օժանդակության, կրթության և աշխատանքի հնարավորությունների ստեղծման, աշխատելու կարիքների ու կարողությունների բացահայտմանն ուղղված քայլերի վրա տեղափոխելով: Հասկանալի չէ, թե «աշխատունակ խոցելի խավ» հասկացության ներքո, որը ծրագրում թիրախավորում է ՀՀԿ-ն, որքանով է նկատի առնվում աշխատաշուկայում անմրցունակ գործազուրկների խավը: Այնպես որ, կառավարության նախաձեռնությունն անվերապահ հավանության արժանացնելու դիրքորոշումը բխում է ոչ այնքան քաղաքական մեծամասնության ծրագրում առկա կոնկրետ մոտեցումներից, որքան ընդհանրական ձևակերպման տրամաբանությունից:



## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

**ՀԱԿ.** Զբաղվածության ապահովման կոնկրետ նպատակ կամ խնդիր չի ամրագրել ծրագրերում: ՀԱԿ-ը սոցիալական ապահովության խնդիրը ածանցում է տնտեսական բարեփոխումներից: Զբաղվածության մակարդակի բարձրացումը, գործազրկության նվազեցումը ծրագրում նույնացվում է աշխատատեղերի ստեղծման հետ, որի հիմնական միջոցը ՀԱԿ-ը համարում է մանր ու միջին գործարարության խթանմանն ուղղված հարկաբյուջեային ձևերն քաղաքականության իրականացումը: Խմբակցության պարզամավորների դեմ քվեարկությունն առավելապես քաղաքական, քան ծրագրային հիմնավորում ունի:

**ՀՅԴ.** Զբաղվածության ապահովումը համարում է 2012-2017թթ. Հայաստանի հիմնական առաջնահերթությունը, նշում 200 հազար նոր աշխատատեղերի ստեղծման մասին, սակայն ծրագիրը չի հստակեցնում այդ ցուցանիշն ապահովելու կոնկրետ մեխանիզմները: Զբաղվածության խնդրի լուծման հիմքում դնում է մանր և միջին ձեռնարկատիրության խթանմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը: Հարուկ անդրադարձ ունի սահմանափակ կարողություններ ունեցող անձանց սոցիալական ապահովության խնդրի լուծմանը, որի հիմնական եղանակը համարում է նրանց աշխատունակության վերականգնումն ու եկամտաստեղծ գործունեության մեջ ներգրավումը: Այս կետում կուսակցության ծրագրային մոտեցումը սկզբունքորեն փարբերվում է նախագծում ամրագրված քվոտավորման եղանակից: ՀՅԴ-ն, սակայն, նախագծին դեմ արտահայտվեց՝ դրանում առկա «կայուն զբաղվածություն» արտահայտությունը համարելով հակասահմանադրական և չընդունելով նախագծի՝ զբաղվածության տարեկան ծրագրերը կառավարության իրավասությանը պարզապես առանցքային դրույթը, որի ներքո նկատվում է գործազրկության մակարդակն արհեստականորեն նվազեցնելու և առկա իրավիճակը խեղաթյուրելու վտանգ:

### Հեղինակային իրավունք

2013 թ. սեպտեմբերի 30-ին խորհրդարանը 110 կողմ ձայնով, առանց դեմ ու ձեռնպահի, ընդունեց «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքում լրացումներ առաջարկող օրինագիծը:

Նախագծի հեղինակը Ազգային ժողովի 4 խմբակցություններն են: Այն շրջանառության մեջ է դրվել 2013թ. մայիսի 22-ին: Դրան, ընդամենը մեկ օր անց, հաջորդել է փառազիր մամուլի խմբագիրների հայտարարությունը՝ լրատվական դաշտում և հարկապես համապատասխան արմատավորված մի շարք արատավոր երևույթներին վերջ դնելու անհրաժեշտության մասին: Մտահոգիչ էր համարվում հարկապես այն, որ մամուլի հրապարակումները առցանց լրատվամիջոցները օգտագործում են առանց հղումների՝ չհիշատակելով նյութի սկզբնաղբյուրը, իսկ հղումը շարժառիթ է լինում է ոչ փեսանելի՝ ընթերցողին մոլորության մեջ գցելու աստիճան:

## ԱԺ ՕՐԵՆՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13 լրավամիջոցների ղեկավարների ներկայացրած առաջարկությունների հիման վրա նախագիծը լրամշակվեց, և օգոստոսի 29-ին շրջանառության մեջ դրվեց դրա լրամշակված փարբերակը, որը ԱԺ լիագումար նիստում առաջին ընթերցմամբ ընդունվեց սեպտեմբերի 10-ին: Հաշվի առնելով հարյի կարևորությունը և դրա նկատմամբ լրագրողական հանրության ուշադրությունը՝ Ազգային ժողովը որոշեց երկրորդ ընթերցմամբ նախագծի քննարկումը անցկացնել առաջինից հետո՝ 24 ժամկա ընթացքում:

«Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքում կատարված փոփոխությունները կոչված են պայքարելու հատկապես համացանցում փարածված, լրագրողական բառապաշարով ասած՝ copy-past-ային գործունեության դեմ: Վերջին փարիներին ի հայտ եկած բազմաթիվ կայքեր աշխատում էին հենց հիշյալ սկզբունքով՝ ավանդական փազգիր մեդիայից կամ լրավական կայքերից պարզապես արտափայում էին նրանց տեղեկավական հրապարակումները՝ առանց սկզբնաղբյուրին հղում փալու, ներկայացնելով դրանք իբրեւ սեփական (ինչը պարզ գրագողություն է), կամ անգամ հղում փալու դեպքում առանց պահպանելու որոշակի սկզբունքներ: Դրանով այդ, այսպես ասենք՝ «գաճաճ» կայքերը, մեկ-երկու համակարգչով եւ մեկ-երկու աշխատակցով, առանց ջանք թափելու, ապահովում էին լսարան՝ խլելով մեծ աշխատակազմով, յուրաքանչյուր տեղեկություն հրապարակելու համար ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ ծախսող լրավամիջոցների լսարանը: Առավել մտահոգիչ էր, որ իրարից առանց հղումի արտափայում էին նաեւ հեղինակավոր եւ արդեն կայացած լրավական կայքերը: Ընդունված օրենքի նպատակը հենց նման երեւույթները բացառելն ու արտափայելիս հրապարակումների կանոնները հստակեցնելն է:

Որոշ անհստակություններով հանդերձ, ընդունված լրացումները կարող են որոշակի ժամանակահատվածում դրական դեր կատարել տեղեկավական ոլորտում առկա բացասական երեւույթների դեմ պայքարի առումով, սակայն երկարատեւ ժամանակահատվածում դրանց արդյունավետությունը կասկածելի է, քանզի համացանցային բովանդակության ավելացման հետ արտափայումների եւ գրագողության դեպքերի վերահսկումը գնալով ավելի ու ավելի դժվար է դառնալու: Բացի այդ, աշխարհում արդեն նկատվում են հեղինակային իրավունքը գերադասելով տեղեկությունների փարածման ազատությունը չսահմանափակելու նոր միտումներ:

**Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից**  
(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

# ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## Հեղինակային իրավունքը ծրագրերում

«Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքում առաջարկված լրացումներն առնչվում են զանգվածային լրատվամիջոցների գործունեության առանցքային՝ հեղինակային իրավունքի պաշտպանության սկզբունքի գործնական կիրառմանը: Օրինագիծը մշակվեց և ընդունվեց խորհրդարանի իշխանական և ոչ իշխանական ուժերի փոխհամաձայնության արդյունքում, մինչդեռ նախընտրական ծրագրերը տեղեկատվության ազատությանն ու ԶԼՄ-ներին վերաբերող խնդիրներում չափազանց «ժլատ» են: Խորհրդարանական որևէ ուժի ծրագրում հեղինակային իրավունքի պաշտպանության խնդիրը, որն առկա է հասարակական ու փոփոխական բազմաթիվ հարաբերություններում ու ոլորտներում, ընդհանրապես արտացոլված չէ, չնայած այն ուղղակիորեն առնչվում է մարդու հիմնական իրավունքներին ու պարտավորություններին:

Խոսքի և ԶԼՄ-ների ազատության հիմնահարցը ծրագրերում ածանցյալ բնույթ ունի: Որոշ խմբակցությունների (ՀԱԿ, ԲՀԿ, ՀՀԿ) պարագայում այն գործնականում բացակայում է: ՕԵԿ-ը սահմանափակվել է 6 բառանոց մեկ արտահայտությամբ, որով ընդամենը կարևորում է անկախ և ազատ մամուլի ձևավորումը: Ընդհանրական, խիստ հռչակագրային մոտեցումն առկա է նաև ՀՅԴ-ի և «Ժառանգության» ծրագրերում, չնայած այս խմբակցությունները խնդիրն ավելի շատ դիտարկել են հեռուստառադիոլրրորդ կարգավորող մարմինների գործունեության անկախության, թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացման շրջանակում: Այսինքն՝ ցուցաբերել են ընտրանքային մոտեցում:

Այս հանգամանքն ընդհանուր առմամբ ընդգծում է ոլորտի նկատմամբ քաղաքական համակարգի ուշադրության ցածր մակարդակը, նվազ հետաքրքրվածությունը և ժողովրդավարական ինստիտուտների կայացման հարցում մամուլին սահմանափակ դերակատարում հարկապահելու միտումը:

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

**Նստաշրջանի ընթացքում քննարկվել է խորհրդարանական փոքրամասնության հեղինակած 2 օրենսդրական նախաձեռնություն. 2-ն էլ քվեարկությամբ մերժվել են:**

### **Կուրակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչ**

5-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի ընթացքում ոչ իշխանական 4 խմբակցությունները՝ ԲՀԿ, ՀԱԿ, «Ժառանգություն», ՀՅԴ, 2 անգամ հանդես եկան միասնական նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով քննարկման առարկա դարձնել կուրակային կենսաթոշակային համակարգի բարեփոխումների պարտադիր բաղադրիչի հարցը: Նրանք առաջարկում էին 1 փարով հեփաձգել այս բաղադրիչի գործադրումը և այդ ընթացքում կազմակերպել մասնագիտական քննարկումներ, պարզել օրենքի որոշ դրույթների սահմանադրականությունը, անգամ օրինագիծը ներկայացնել հանրային հարցման: Հավաքելով արտահերթ նիստ հրավիրելու համար պարզամավորների անհրաժեշտ թվով՝ 44 սպորադություն (Սահմանադրություն, հոդ. 70, ԱԺ կանոնակարգ-օրենք, հոդ. 39), ԲՀԿ, ՀԱԿ, «Ժառանգություն» և ՀՅԴ խմբակցությունները դիմեցին ԱԺ նախագահին: Արտահերթ նիստը հրավիրվեց նոյեմբերի 11-ին, բայց չկայացավ՝ քվորում չլինելու պարճառով: Գրանցվել էր միայն 45 պարզամավոր՝ ոչ իշխանական խմբակցություններից: ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը տեղեկացրեց, որ ՀՀԿ խմբակցությունը որոշել է արտահերթ նիստին չմասնակցել ու բոյկոտել այն: Մինչդեռ նախօրեին ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը հայտարարել էր, որ, եթե օրենքի ընդդիմախոսները հավաքեն անհրաժեշտ 44 սպորադությունը, մեծամասնությունը կգա դահլիճ ու կմասնակցի նիստին: Խորհրդարանական փոքրամասնությունը կոալիցիայի բոյկոտը համարեց խուսափում բովանդակային քննարկումից ու հասարակական բողոքի անտեսում: Կոալիցիոն ուժերն իրենց հերթին աննպատակահարմար էին համարում փոփոխությունների քննարկումը օրենքի կիրառումից մեկ ամիս առաջ:

Նույն հարցը քննարկման առարկա դարձնելու նպատակով խորհրդարանական 4 ուժերը երկրորդ անգամ միասնական նախաձեռնությամբ հանդես եկան դեկտեմբերի 12-ին: Օգտվելով ԱԺ կանոնակարգ օրենքով նախատեսված հնարավորությունից՝ ԲՀԿ, ՀԱԿ, «Ժառանգություն» և ՀՅԴ խմբակցությունները հավաքեցին 47 սպորադություն, ներկայացրին ԱԺ որոշման նախագիծ, որն արտահերթ ընթացակարգով ընդգրկվեց օրակարգ: «Կուրակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչը գործադրելու հարցի վերաբերյալ» ԱԺ հայտարարության նախագիծը քննարկվեց, բայց մեծամասնության դեմ դիրքորոշման պարճառով չընդունվեց. կողմ էր ընդամենը 45, դեմ 53 պարզամավոր:

Նախաձեռնության փապալումից հետո քաղաքական ուժերը դիմեցին Սահմանադրական դատարան՝ վիճարկելու համար «Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքի 8 հոդվածների սահմանադրականությունը: ՍԴ-ն որոշել է ԱԺ պարզամավորների դիմումը քննարկել 2014թ. մարտի 28-ին:

# ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## ԼՂՀ ճանաչում

Զարուհի Փոստանջյանի հեղինակած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչելու մասին» օրենքի նախագիծը Ազգային ժողովը մերժեց նոյեմբերի 13-ին ձայների 10 կողմ, 0 դեմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ: Կոալիցիան քվեարկությանը չմասնակցեց՝ հայտարարելով, որ նախագծի ընդունումը համարում է ոչ նպատակահարմար: Ձեռնպահ քվեարկած միակ պարզամավորը Ալեքսանդր Արզումանյանն էր, կողմ էին քվեարկել ՀՅԴ-ի և «Ժառանգության» պարզամավորները: Կառավարությունը և գլխադասային արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը նախագծին դրական եզրակացություն չէին տվել: Նախագիծը քառօրյա օրակարգ ընդգրկվեց և քննարկվեց «Ժառանգության» կողմից արտահերթ համարվելու միջոցով:

Այս նախագիծը, դարձյալ արտահերթ համարվելու միջոցով, քննարկել էր նաև 4-րդ գումարման Ազգային ժողովը: Այն ժամանակ որպես հեղինակ հանդես էր եկել ողջ «Ժառանգություն» խմբակցությունը՝ 7 հոգանոց կազմով: Կառավարությունն ու գլխադասային հանձնաժողովը դարձյալ տվել էին ոչ դրական եզրակացություն, կոալիցիան էլ (ՀՀԿ- ԲՀԿ- ՕԵԿ) հայտարարել էր նախագծին դեմ քվեարկելու որոշման մասին: Նախագծի քվեարկությունը դահլիճում նախատեսված էր 2010թ-ի հոկտեմբերի 28-ին: Րաֆֆի Հովհաննիսյանը առաջարկեց քվեարկությունն անցկացնել 2 քառօրյա անց՝ դեկտեմբերի 9-ին, Աստանայում կայանալիք ԵԱՀԿ գազաթնաժողովից հետո: Դեկտեմբերի 9-ին նախագիծը քվեարկվեց և մերժվեց: Կողմ էր քվեարկել ընդամենը 13 պարզամավոր: Դեմ և ձեռնպահ քվեարկողներ չկային:

## ԼՂ հիմնահարցը նախընտրական ծրագրերում

ԼՂՀ ճանաչման հարցը 2008-ից պարբերաբար հայտնվում է ԱԺ օրակարգում, սակայն չի ընդունվում ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը չխոչընդոտելու նպատակով՝ հաշվի առնելով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող բանակցությունների հիմնական առարկան հենց Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակացումն է:

Չնայած բուն կարգավորման գործընթացի մեթոդաբանության, մեխանիզմների հարցում ունեցած մարտավարական տարբերություններին, հայաստանյան քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում առկա է սկզբունքային համակարծրություն բանակցային գործընթացը շարունակելու հարցում, մի կողմից՝ առկա ստատուս-քվոն պահպանելու, մյուս կողմից՝ խնդիրը ուժի միջոցով լուծելուն նպաստող քայլերից խուսափելու նկատառումներով:

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Նախընտրական ծրագրերի համեմատական դիտարկումը թույլ է տալիս առանձնացնել մոտեցումների մի քանի ընդհանրություններ: Առաջին՝ բանակցությունների անխուսափելիությունը, երկրորդ՝ ԼՂՀ-ն բանակցությունների լիիրավ կողմ դարձնելու առաջնահերթությունը, երրորդ՝ ԼՂՀ-ի ներկայիս կարգավիճակը, ԼՂ-ի անվտանգության և Հայաստանի հետ ԼՂ-ի ցամաքային կապի պարտադիր ապահովումը ակնկալվող արդյունքների ամրագրում: Ընդհանուր առաջ պարկերից որոշակիորեն առանձնանում են «Ժառանգության» և ՀՅԴ-ի ծրագրային մոտեցումները: «Ժառանգություն» կուսակցության համար ելակետը ԼՂՀ-ի անկախության և ինքնիշխանության Հայաստանի ճանաչումն է, ինչն ընկած է նրա հեղինակած օրինագծի առանցքում: Իսկ ՀՅԴ-ն առաջ է քաշում հենց սկզբից Հայաստանի և Արցախի միջև ռազմավարական դաշինք կնքելու գաղափարը՝ որպես ԼՂ-ի անվտանգության երաշխավորման հիմնական գրավական: Ռազմավարական դաշինքի կնքումը ԼՂՀ ինքնիշխանությունը ճանաչելու յուրօրինակ ձև է, և թերևս դա էր պարզառոտ, որ ՀՅԴ-ն ողջ կազմով կողմ քվեարկեց «Ժառանգության» ներկայացրած նախագծին:

Հիմնական խնդիրը, որն, ըստ էության, բաց է խորհրդարանական բոլոր խմբակցությունների նախընտրական ծրագրերում, բանակցությունների առարկա հանդիսացող, նախկին ԼՂԻՄ-ի վարչական փարածքին հարակից, հայկական ուժերի վերահսկողության փակ գտնվող և ներկայիս ԼՂՀ-ի մաս կազմող շրջանների ձակարագիրն է:

## ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

### ԱԺ 5-րդ գումարում, 4-րդ նստաշրջան

5-րդ գումարման Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը 4-րդ նստաշրջանի ընթացքում ընդամենը 2 նիստ է գումարել՝ նստաշրջանի սկզբում սեպտեմբերի 24-ին, և վերջում դեկտեմբերի 24-ին: Սա նշանակում է, որ հանձնաժողովը իր իրավասությունների շրջանակին առնչվող ընդամենը 2 դիմում է ստացել: 2-ն էլ վերաբերել են ՀՀ-ական պարզամավորներին ԱԺ փոխնախագահ Հերմինե Նաղդալյանին և Մանվել Բաղետյանին: Առաջին դիմումի քննությունը հանձնաժողովը մերժել է, երկրորդը փարեվերջին ընդունել է վարույթ և քննության կառնի գարնանային նստաշրջանի ընթացքում:

## ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### 2 դիմումներն էլ հանձնաժողովն ստացել է ՀԿ-ներից

«Թրանսփերենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի դիմումի հիմքում «Հեթք» պարբերականի օգոստոսի 29-ի հրապարակումն էր՝ «Նաղդալյանին պարկանող ընկերության հետ 409 մլն դրամի պետական գնման պայմանագիր է կնքվել» վերնագրով: ՀԿ-ն դիմել էր հանձնաժողովին՝ Հերմինե Նաղդալյանի կողմից օրինաստեղծ գործունեությունը ձեռնարկափրակյան գործունեությամբ զուգակցելը ԱԺ պարզամավորի էթիկայի կանոնների խախտում համարելու համար: Դիմումը քննելուց հետո հանձնաժողովը եզրակացրել էր, որ դիմողը չի ներկայացրել որևէ փաստաթուղթ կամ ապացույց, որը կհիմնավորեր, որ Հերմինե Նաղդալյանը Ազգային ժողովի, հանձնաժողովների կամ ենթահանձնաժողովների նիստերի ընթացքում խախտել է շահերի բախման մասին հայտարարությամբ հանդես գալու իր պարտականությունը: Փոխարենը՝ պարզամավոր Հերմինե Նաղդալյանը հանձնաժողովին տեղեկանք էր ներկայացրել, որ հողվածում հիշատակվող «Սիսիան ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը հանձնել է հավաքարմագրային կառավարման: Արձանագրելով, որ պարզամավորը կատարել է օրենքով պահանջվող բոլոր թղթային ձևակերպումները՝ էթիկայի հանձնաժողովը մերժեց «Թրանսփերենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնից ստացած հերթական դիմումը: 2013 թ-ի ավարտին էթիկայի հանձնաժողովը առաջին դիմումը ստացավ ազգային փոքրամասնության ներկայացուցիչներից:

«Սինջար եզդիների ազգային միավորում» և «Եզդիների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպությունների դիմումը վերաբերում է ՀՀԿ-ական պարզամավոր Մանվել Բադեյանին: Պարզամավորը, պատասխանելով «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղը ռուսերենով անցկացնելու մասին լրագրողների հարցին՝ ասել էր. «Արա, իսկականի՞ց էդքան անմակարդակ եք, ըրե՞նց եք մտածում: Որ փողոցում կանգնած մի եզդի էդ հարցը տար, կզարմանայի»: Դիմումատու կազմակերպությունները պահանջում են, որ հանձնաժողովը պարզամավորի պահվածքը համարի էթիկայի խախտում, իսկ Բադեյանն անձամբ և հրապարակավ ներողություն խնդրի եզդի ժողովրդից: Այս դիմումի քննության վերաբերյալ եզրակացությունը հանձնաժողովը կներկայացնի արդեն 2014 թվականին:

**Տեղեկանք.** 5-րդ գումարման Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի ընթացքում էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովը հրավիրել է ընդամենը 2 նիստ, ստացել 2 դիմում: Դիմումներից մեկը մերժել է, մյուսը՝ ընդունել վարույթ: Համեմատության համար հիշեցնենք, որ ԱԺ 3-րդ նստաշրջանում էթիկայի հանձնաժողովը հրավիրել էր 14 նիստ, ստացել 6 դիմում, որոնցից վարույթ էր ընդունել միայն 1-ը:

## ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Էթիկայի հանձնաժողովը՝ ճգնաժամում

ՀՀ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը խորհրդարանի 4-րդ նստաշրջանում աչքի ընկավ գերպասիվությամբ: Նրա ֆորմալ ներկայությունը որևէ կերպ չարտացոլվեց Ազգային ժողովի ընդհանուր գործունեության մեջ: Հանձնաժողովի նկատմամբ հասարակական վստահության դեֆիցիտը, որն աստիճանաբար հասունացավ ԱԺ նախորդ նստաշրջանների ընթացքում նրա ոչ միանշանակ, քաղաքականացման միտումներ դրսևորող, ուստի և իր իրական նշանակությունից շեղվող գործունեության պարճառով, այս նստաշրջանում հանձնաժողովին դրել է ճգնաժամային իրավիճակում, որն արտահայտվում է թե բովանդակային, թե կառուցվածքային, թե կազմակերպչական և թե իրավական կարգավորման առումներով:

Համեմատական վիճակագրությունը ցույց է տալիս, որ Էականորեն նվազել են ԱԺ պարզամավորների վերաբերյալ հանձնաժողովին հասցեագրված դիմումները: Պարճառը ոչ թե 4-րդ նստաշրջանի ընթացքում էթիկական բնույթի խնդիրների սակավությունն է, այլ հանձնաժողովի, որպես ներքին կարգապահական-վերահսկողական մարմնի, ձևականացման, բովանդակագրկման խորացող միտումները: Այն ընկալվում է ոչ թե որպես պարզամավորների էթիկական վարքագիծը հավասարակշռող և շահերի բախման սկզբունքներն արմատավորող ինստիտուտ, այլ քաղաքական մեծամասնության շահերը բարոյահոգեբանական մակարդակում սպասարկող կամ պաշտպանող մարմին: Հենց այդ պարճառով «Հայ ազգային կոնգրես» խմբակցությունը նստաշրջանի սկզբում, հավաքարիմ մնալով ավելի վաղ տված խոստմանը, հետ կանչեց իր ներկայացուցչին՝ հրաժարվելով մասնակցել հանձնաժողովի հետագա աշխատանքներին: Նույնն անելու պարտաստականություն էր հայտնել նաև մեկ այլ ոչ իշխանական խմբակցություն՝ ՀՅԴ-ն, որը, սակայն, առայժմ հուսահատ փորձեր է կատարում օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ էթիկայի հանձնաժողովին վերադարձնել նրա իրական նշանակության հարթություն, թեև պարզ է, որը դա հնարավոր չի լինելու առանց ԱԺ քաղաքական մեծամասնության կամքի և ցանկության:

Հանձնաժողովը, հարկապես ձևավորման ու ղեկավարման մեխանիզմներին առնչվող օրենսդրական վերջին փոփոխություններից հետո, գրեթե ամբողջությամբ սպառել է իր հանրային վստահության ռեսուրսը: Ընդհանուր առմամբ՝ ապացույցների բացակայությամբ կամ չհիմնավորվածությամբ դիմումները մերժելու պրակտիկական գործնականում անիմաստ է դարձնում էթիկայի հանձնաժողովին դիմելը, որովհետև գրեթե բոլոր դեպքերում հանձնաժողովի որոշումները հիմնվում են բացառապես պարզամավորների «անմեղությունը» հաստատող տեղեկանքների, փաստաթղթերի վրա:



## ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ԱԺ փոխնախագահի հետ կապված գործի ընթացքը, սակայն, ի հայտ բերեց պարզամավորների կողմից շահերի բախման հետ կապված մի կարևոր իրողություն, որը, սակայն, առավելապես պայմանավորված է օրենսդրական կարգավորման դաշտում առկա սողանքի հետ: Պարզամավորների շահերի բախումը ԱԺ կանոնակարգ-օրենքով դիտարկված է միայն նրա քվեարկության, օրենսդրական նախաձեռնությունների իրավունքի, օրինաստեղծ գործունեության համարեքստում, որը կարգավորվում է ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածով և «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ 6.2, 12, 24.2 հոդվածներով: Մասնավորապես՝ ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ «Պարզամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը կամ Ազգային ժողովի քննարկմանը որոշման նախագիծ ներկայացնելը, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարյի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը, ինչպես նաև Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների, ենթահանձնաժողովների նիստերում ելույթ ունենալը կամ քվեարկությանը մասնակցելը»: Օրենքը շահերի բախման համարեքստում չի դիտարկում նրա կամ նրա հետ փոխշաղկապված անձանց մասնակցությամբ կամ նրանց պարկանող ընկերությունների, ձեռնարկությունների իրավահարաբերությունները գործադիր իշխանության գործառույթների, օրինակ, գնումների գործընթացի փիրույթում: Այդ պարճառով նման խնդիրները մեխանիկորեն դուրս են մնում ԱԺ Էթիկայի հանձնաժողովի գործառույթների ու իրավասությունների շրջանակից:

Դիտարկվող նստաշրջանի ընթացքում ԱԺ Էթիկայի հանձնաժողովի գործունեությունը կամ, ավելի ստույգ, անգործությունը ցույց տվեց, որ հանձնաժողովի կազմավորման, ուժերի հարաբերակցության և որոշումների ընդունման հետ կապված «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում քաղաքական մեծամասնության նախաձեռնությամբ կատարված վերջին փոփոխությունները ոչ թե նպաստել են հանձնաժողովի արդյունավետության բարձրացմանը կամ ապահովել քաղաքական բալանսը, ինչով այդ նախաձեռնությունը հիմնավորում էր ԱԺ մեծամասնությունը, այլ հանձնաժողովին կանգնեցրել են իրավա-քաղաքական ճգնաժամի նախաշեմին և օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության առջև: Այս նստաշրջանում, օրենքով սահմանված կարգով, Էթիկայի հանձնաժողովի նախագահությունը պետք է անցներ խորհրդարանի ամենամեծ ընդդիմադիր խմբակցության՝ ՀԱԿ-ի ներկայացուցչին:

Վերջինիս կողմից իր ներկայացուցչին հանձնաժողովից հետ կանչելու որոշման ընդունումից հետո նստաշրջանի ընթացքում հանձնաժողովը ղեկավարվում էր նախագահի տեղակալի մակարդակով, քանի որ օրենքը, կարգավորումներ պարունակելով հանձնաժողովի անդամի թափուր մնացած տեղը համալրելու վերաբերյալ, որևէ լուծում չի նախատեսում հանձնաժողովի անդամի հրաժարականի և այն համապատասխան խմբակցության կողմից համալրել չցանկանալու դեպքի համար:



2014թ. բյուջեի կադարումը, ենթադրվում է, որ կհիմնվի որոշ օրենսդրական և մի շարք այլ բարեփոխումների ու հարկային վարչարարության վրա, սակայն չի լինի փոփոխական զարգացման արդյունքում ապահոված բյուջեարային մուտքերի վրա ծախսերի ընդլայնման քաղաքականության արդյունք: Մյուս կողմից՝ բարեփոխումների ուղղվածությունն ընդգրկելու է նաև Մաքսային միության հետ համագործակցության դաշտը, որն ունի մի շարք անորոշություններ, չնայած որ ճանապարհային քարտեզի 27 կետերն արդեն մշակված են: 2014թ. բյուջեն իր ակնկալիքներով ունի որոշակի ռիսկայնություն, քանի որ համաշխարհային փոփոխական աճի տեմպերը դանդաղում են, և Հայաստանը մեծ կախվածություն ունի Ռուսաստանի Դաշնությունից, ինչի պարզառով էլ 2013թ.-ին չկարողացավ ապահովել անգամ ՀՆԱ-ի 2%-անոց աճը: Հաջորդ տարվա բյուջեն կկրի արտաքին երկու մեծ գործոնների ազդեցություն ևս, այն է՝ փոփոխական զարգացման վեկտորի փոփոխությունը դեպի Մաքսային միություն և եվրասոցիալական պայմանավորված նախկին փոփոխական պայմանների փոփոխությունը: Նման իրավիճակում հայտնված Հայաստանի համար ամբիպիոզ կամ խիստ ընդլայնողական բյուջեարային քաղաքականությունը չի երաշխավորվում, քանի որ բավականին մեծ է անորոշության դաշտը. վստահություն է ներշնչում միայն 2013թ.-ի կատարված բյուջեն: 2014թ.-ին որոշակիորեն լուծվել է նաև պարտքերի ներգրավման հաշվին բյուջեի ծախսային մասի ընդլայնման խնդիրը: Սա կարելի է դրական համարել, քանի որ 2013թ.-ի ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմման ժամանակ ավելի բարձր շեմ էր ընտրված: Կարելի է ենթադրել, որ փոփոխական աճի հաշվին զարգացման բյուջե ունենալ 2014թ. ևս չի հաջողվի: Սա պայմանավորված է ՀՆԱ-ի և ՍԳԻ-ի նպատակադրված ցուցանիշները 2013թ.-ին շեղումներով կատարելու հանգամանքով, ինչից չի հաջողվի խուսափել նաև 2014թ.-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարության ուղերձում ներկայացված 2014 թվականի սոցիալ-փոփոխական զարգացման և հարկաբյուջեարային քաղաքականության հիմնական ուղղությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ էական և առարկայական փոփոխություններ 2014թ.-ին նախատեսվում են: Արվելու են քայլեր՝ ուղղված ԱՊՀ անդամ գործընկեր երկրների հետ արտաքին փոփոխական քաղաքականության և բազմակողմ ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագրի կիրարկմանն ու Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանը միանալու հետ կապված անհրաժեշտ միջոցառումների ու ծրագրերի իրականացմանը: Տեխնիկական կանոնակարգման և որակի ենթակառուցվածքի ոլորտում նախատեսվող բարեփոխումները դիտարկվելու են որպես ՀՀ և Մաքսային միության բանակցային գործընթացի կարևորագույն բաղադրիչ: Կենսաթոշակային ապահովության բնագավառում գործունեության գերակա ուղղություն է շարունակվելու մնալ կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը: Մասնավորապես, 2014 թվականին կգործարկվի կենսաթոշակային ապահովության համակարգի պարտադիր կուտակային բաղադրիչը: Ինչ վերաբերում է մյուս ոլորտներին, ապա նկատվում է, որ հիմնականում պահպանվելու է 2013թ.-ին իրականացված աշխատանքների տրամաբանությունը և շարունակականությունը:

## Բյուջեների ընդունման փոփոխական իրավիճակների համեմատական վերլուծություն

2013թ.-ը մակրոփոփոխական ցուցանիշների գրանցած միտումներով բարեհաջող էր: 2012թ.-ին ՀՆԱ-ի հավելաճը կազմել է 7.2%, իսկ 2013թ.-ին սպասվում է, որ կկազմի 4.1% (կամ ավելի ցածր), այնինչ ՄԺԾԾ 2014-2016թթ.-ի շրջանակներում կանխատեսվում էր, որ 2013թ.-ին ՀՆԱ-ի հավելաճը կկազմի 6.2%: Ինչ վերաբերում է միջին գնաճին, այն 2012թ.-ին կազմել է 2.6%, իսկ 2013թ.-ին սպասվում էր 6.0%, սա փաստում է, որ 2013թ.-ի բյուջեն ընդունելիս գնաճային ռիսկերը ցածր էին, իսկ 2014թ.-ի բյուջեն ընդունելիս՝ ավելի բարձր: Սա նշանակում է, որ ՀՀ ԿԲ վարած դրամավարկային քաղաքականությունը պետք է լինի ավելի կոշտ՝ փորձելով 2014թ.-ին այն տեղավորել 5.5%-ի շրջանակներում:

2013թ.-ին ՀՀ ԿԲ-ի համար բավական դժվար կլինի առանց կոշտ միջամտությունների գնաճը պահպանել թույլատրելի մակարդակում, քանի որ առկա են ԵՄ-ից եկող բավականին բարձր գնաճային ռիսկեր՝ պայմանավորված Մաքսային միության հետ համագործակցության հանգամանքով: Այդ իսկ պարզառով, եթե առաջանան որոշակի ռիսկեր, և գնաճը 2%-ով գերազանցի թույլատրելի սահմանը, ըստ գնահատականների և կանխատեսումների վերջինիս կարգավորումը կարժենա 1.8 մլրդ դրամ, ինչի կարիքը շատ հավանական է, որ կառաջանա, սակայն դա կլինի բավականին փոքր գումար նման խնդիր լուծելու համար:

ՀՀ-ում, սկսած 2009թ.-ից, ՀՆԱ-ի կազմում ներդրումները կրճատվում են, և 2012թ.-ին կանխատեսվում էր, որ կկազմեն 26.3%՝ 2009թ.-ի 34.7%-ի փոխարեն, իսկ դա նշանակում է, որ ՀՀ փոփոխության նկատմամբ կա վստահության պակաս և միջոցներ ներգրավելու խնդիր: Այս ցուցանիշը նախատեսվում էր բարելավել 2013թ.-ին հասցնելով ՀՆԱ-ի 26.9%-ի, որն իրականում կազմեց 22.5%, իսկ 2014թ.-ին այն կկազմի 21.8%: Սա նշանակում է, որ Հայաստանում առկա է ներդրումային միջավայրի վատթարացման միտում:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2012թ.-ին կազմել է 1.55%, որը 2013թ.-ին կկազմի 2.64%<sup>1</sup>, իսկ 2014թ.-ին այն կիջնի ևս 0.3 փոկոսային կետով՝ կազմելով 2.34%: Պետք է նշել, որ 3%-ը չգերազանցող բյուջեի պակասուրդի ցուցանիշը խոսում է փոփոխական կայունության մասին, քանի որ նմանափայ խնդիրներ ունեն մի շարք ԵՄ երկրներ, ու դրա արդյունքում բախվում են մի շարք դժվարությունների՝ հատկապես պարտավորումների փոկոսադրույքների անկառավարելի աճի առումով: Նկատելով, որ միայն Գերմանիան է հանդիսանում օրինակելի երկիր, որտեղ պակասուրդը կազմում է 1%-ից ցածր:

<sup>1</sup> Ստանց հաշվի առնելու դեկտեմբերի 20-ին 63 մլրդ դրամով այն ավելացնելու հանգամանքը (այն կքննարկվի առանձին):

Համեմատելով 2013թ.-ը 2012թ.-ի հետ և ելնելով Կոնվենցիայի շրջանակներում աճի միտումներից՝ պետք է նշել, որ 2012թ.-ին կար 7.0% արդյունաբերության, 9.5% գյուղատնտեսության և 3.3% շինարարության աճ: Այսինքն, ի տարբերություն 2014թ.-ի բյուջեի նախագիծն ընդունելու ժամանակահատվածի՝ 2013թ.-ի բյուջեի կատարման համար կային ավելի նպաստավոր տնտեսական պայմաններ: 2013թ.-ին արդյունաբերությունը կաճի 3.0%, գյուղատնտեսությունը՝ 4.7%, շինարարությունը՝ կնվազի-4.5%-ով, որոնք խիստ շեղումներ են 2013թ.-ի սկզբին արված կանխատեսումներից: Իհարկե, 2012թ.-ի ՀՆԱ-ի 7.1% աճը թույլ էր տալիս ընդունել ավելի համարձակ բյուջե, որը որոշակի առումով չի կարելի անել 2013թ.-ին նախատեսվող 4.1% և դեռ ցածր ՀՆԱ-ի հավելաճի պարագայում, քանի որ պահպանողականությունն այս պարագայում երաշխավորում է բյուջեի կատարման ապահովումը:

Դիտարկելով կապը 2014թ.-ի ՀՀ պետական բյուջեի և ՄԺԾԾ 2014-2016թթ. ցուցանիշների միջև՝ նկատում ենք, որ ՀՆԱ-ն, չար չնչին շեղումով, նախատեսվում է, որ կկազմի 4.850.2 մլն դրամ, ՀՆԱ-ի իրական աճը 106.3%-ի փոխարեն կկազմի 105.2%, բյուջեի պակասուրդը չնչին շեղումով կկազմի 2.34%: Շեղում նախատեսվում է փոխարժեքի գծով, այսինքն՝ նախատեսված էր, որ 1 ԱՄՆ դոլարը կկազմի 417.63 դրամ, սակայն ըստ բյուջեի՝ այն կարժեզրկվի մոտ 11 դրամով և կկազմի 406.67 դրամ: Փոխարժեքի 11 դրամով փոփոխումը կամ դրամի արժեզրկումը մինչև 406.67 կառաջացնի որոշակի դժվարություններ, քանի որ 2014թ.-ին ակնկալվող արտաքին օժանդակությունը պետք է կազմի 189.7 մլրդ դրամ:

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները ՄԺԾԾ 2014-2016թթ. ծրագրից կշեղվեն -11.9 մլրդ դրամով և կկազմեն 1,134.4 մլրդ դրամ: Կավելանան նաև պետական բյուջեի ծախսերը՝ կազմելով 1,244.9 մլրդ դրամ: Ինչ վերաբերում է պակասուրդին, այն կկազմի 110.53 մլրդ դրամ, որը 2013թ.-ի պակասուրդի համեմատությամբ պակաս է մոտ 9.3 մլրդ դրամի չափով:

## **Բյուջեների եկամուտների համեմատական վերլուծություն**

2013թ.-ին պետական բյուջեի եկամուտները, նախորդ տարվա 911.6 մլրդ դրամի փոխարեն, կազմեցին 1,032.9 մլրդ դրամ, այսինքն, գրանցվեց 121.2 մլրդ դրամի աճ: 2014թ.-ին պետական բյուջեի եկամուտները կկազմեն 1,134.4, այսինքն՝ 2014թ.-ին կունենանք գրեթե 101.5 մլրդ դրամի աճ: Վերջինիս մեջ ամենամեծ մասնաբաժին ունեցող հարկային եկամուտները և պետական փուլքերը 2014թ.-ին կկազմեն 1,092.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է մոտ 99.1 մլրդ դրամով: ՀՆԱ-ի մեջ դրանք ևս կավելանան և կկազմեն 23.12%՝ նախորդ տարվա 21.89%-ի փոխարեն: Սա նշանակում է, որ տեղի կունենա կամ հարկային բեռի ավելացում, կամ ստվերային եկամուտների բացահայտում, իսկ թե տնտեսավարողների որ հատվածի վրա կընկնի այդ բեռը, ցույց կտան համապատասխան զարգացումները:

Իհարկե, կարևոր նշանակություն ունի, թե ինչ աղբյուրների հաշվին են այդ եկամուտներն ավելանալու, և եթե 2013թ.-ին այս խնդրի լուծումը ՀՀ կառավարությունը տեսնում էր հիմնականում 3 օրենսդրական բարեփոխումների և հարկային վարչարարության խստացման, «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքով ապահոված միջոցների հաշվին, ապա 2014թ.-ին, ամենայն հավանականությամբ, մուտքերը պայմանավորված կլինեն Մաքսային միության հետ համագործակցության ընդլայնմամբ և ներմուծվող ապրանքներից գանձվող հարկերի ավելացմամբ:

Վերլուծելով առանձին հարկատեսակների, փուլերի, հաստատագրված վճարների, մաքսափուլերի և բնապահպանական վճարների գծով մուտքերը՝ պետք է նշել, որ 2014թ.-ի ՀՀ կառավարության ուղերձում այդ մասին կանխատեսումներ չկան, սակայն հաշվի առնելով ընդհանուր եկամուտների մոտ 100 մլրդ դրամանոց աճը, պետք է նշել, որ եկամտային այդ հոդվածներից յուրաքանչյուրը էական աճ պետք է արձանագրի 2013թ.-ի փաստացի ցուցանիշների համեմատությամբ:

Այս համատեքստում նկատելի է, որ հիմնական հարկատեսակների գծով հարկային բեռն ավելանալու է, վերջինս բյուջեի մուտքերի և եկամտային մասը համալրելու առումով դրական է, սակայն խնդիրն այսպեղ ուղղակի և անուղղակի հարկերի միջև համամասնության մեջ է, քանի որ փոփոխության կայունության տեսանկյունից նպատակահարմար է, որ աճեն ուղղակի հարկերը:

### **Բյուջեների ծախսերի համեմատական վերլուծություն**

2013թ.-ին ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,152.7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավելի էր 131.6 մլրդ դրամով և հավասար էր ՀՆԱ-ի 25.4%-ին: 2014թ.-ին ՀՀ պետական բյուջեի ծախսերը կկազմեն 1,244.9 մլրդ դրամ: Սա հավասար կլինի կանխատեսվող ՀՆԱ-ի 26.36%-ին:

Ընդհանուր առմամբ, եթե դիտարկում ենք ՀՀ 2014թ.-ի բյուջեի հիմնական ուղղությունները, ապա կրկին գերակշռող է լինելու սոցիալ-մշակութային ուղղությունը. 2013թ.-ին այս ոլորտի հատկացումները կազմում էին ընդհանուր բյուջեի ծախսերի 43.7%-ը, 2014թ.-ին կազմելու է 47.1%: Դա նշանակում է, որ ՀՀ պետական բյուջեն ավելի մեծ սոցիալական ուղղվածություն է ստանում և բյուջեի վրա ավելանում է սոցիալական բեռը: Նման փոփոխությունը շարունակվելու պարագայում պետական բյուջեի հիմնական ուղղությունների գրեթե կեսը ապագայում կկազմի սոցիալական բլոկը:

Սոցիալ-մշակութային ոլորտին հաջորդում են պաշտպանություն, ազգային անվտանգություն, հասարակական կարգի պահպանության, քրեակարարական և արտակարգ իրավիճակների համակարգերի գծով հատկացումները՝ 21.0%: Սա կրկնում է նախորդ տարվա ցուցանիշը, իսկ վերջինիս հաջորդում են փոփոխության ձյուղերը՝ 2013թ.-ի 14.1%-ի փոխարեն 2014թ.-ին նախատեսվող 12.2%:

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Այս միտումներից ելնելով կարելի է պնդել, որ յուրաքանչյուր տարի պետական բյուջեի սուցիալական ուղղվածության բեռն ավելի է շարժվում, իսկ բյուջեն սովորաբար բնորոշում են ամենախոշոր ծախսային հոդվածների կամ խմբերի միջոցով: Ի տարբերություն սուցիալական ուղղվածության՝ տնտեսական հարաբերությունների վրա կարարվող ծախսերը նվազում են, այսինքն՝ բյուջեն տնտեսական գործառույթ շարքի է կատարելու:

Ուսումնասիրելով 2013թ.-ի բյուջեային ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ նկատվում ենք, որ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վրա ծախսվել է 208,9 մլրդ դրամ, իսկ 2014թ.-ին կծախսվի 218.3 մլրդ դրամ, այսինքն՝ ունենք մոտ 10 մլրդ դրամի աճ:

Պաշտպանության ծախսերը 2013թ.-ին կազմել են 182.7 մլրդ դրամ, իսկ 2014թ.-ին կկազմեն 194.0 մլրդ դրամ, 2014թ.-ին հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 82.5 մլրդ դրամ, տնտեսական հարաբերությունների վրա նախատեսվում է ծախսել 108.3 մլրդ դրամ (2013թ.-ին՝ 131,4 մլրդ դրամ): Ամենախոշոր խումբը 2014թ.-ին կկազմեն սուցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը՝ 362.0 մլրդ դրամ (2013թ.-ին՝ 304,7 մլրդ դրամ):

Նշված ծախսային հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանության, կրթության և սուցիալական պաշտպանության ծախսերն առաջանցիկ աճ կունենան, իսկ տնտեսական հարաբերությունների համար նախատեսված ծախսերը կնվազեն: Պետք է նշել, որ որոշ հոդվածներում համամասնությունը 2013թ.-ի ծախսերի համեմատությամբ, աճի առումով, 2014թ.-ին չի պահպանվել, այլ կիրառվել է ընդորոշական կամ իրավիճակային մոտեցում:

Վերլուծելով 2013 և 2014թթ. պետական բյուջեները ըստ բյուջեային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ նկատվում ենք մի շարք տեղաշարժեր: Այսպես՝ աշխատանքի վարձատրությունը 2013թ.-ին կազմել է 89.1 մլրդ դրամ, իսկ 2014թ.-ին կկազմի 106.8 մլրդ դրամ: Նշված աճը պայմանավորված է վերջին բարեփոխումներով, այն է՝ պետական ոլորտի աշխատավարձերի աստիճանական դասակարգմամբ:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը 2014թ.-ին կկազմի 231.3 մլրդ դրամ (2013թ.-ին՝ 173,2 մլրդ դրամ), տոկոսավճարները՝ 63.4, որից ներքին՝ 33.2, արտաքին՝ 30.1 (2013թ.-ին՝ 52.5 մլրդ դրամ), այսինքն՝ մոտ 9 մլրդ դրամ ավելացել են վճարվող տոկոսները: Որոշակիորեն փոխվել են նաև դրամաշնորհները և սուբսիդիաները. 2014թ.-ի դրանք համապատասխանաբար կկազմեն 114.7 և 24.9 մլրդ դրամ: Մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերը 2013թ.-ին կազմել են 29,7 մլրդ դրամ, իսկ 2014թ.-ին՝ կկազմեն 24.4 մլրդ դրամ:

Ծախսերի փոփոխության դասակարգման համադրական վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ այսօրեղևս հստակ համամասնություններ չկան, սակայն ամբողջական պահանջարկի խթանման և պետական շինարարության, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծավալներն ավելացնելով փորձ է արվում փոփոխությանն ակտիվություն հաղորդել, քանի որ ՀՆԱ-ի և սպառման հարաբերակցության ցուցանիշի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ 102.4%-անոց ցուցանիշով սպառումը գերազանցում է ՀՆԱ-ն, այսինքն՝ Հայաստանում ավելի շատ սպառում են, քան ստեղծում: Այս խնդիրը պետք է դիտարկել նաև եկամտային բաշխվածության հարթությունում, այն է՝ առկա է ստվերային արդյունք, որը սպառվում է բնակչության կողմից կամ սպառվում են բնակչության նախկինում կուտակած հիմնական միջոցներն ու խնայողությունները, իսկ թե որ փոփոխություններն են բավարարում այդ պահանջարկը և ինչի հաշվին՝ մնում է հռետորական հարցադրումների շարքում:

## Բյուջեների պակասուրդների համեմատական վերլուծություն

2013թ.-ի պետական բյուջեի պակասուրդը կազմել է 119.8 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի 2.64%-ը, իսկ 2014թ.-ին այն կկազմի 110.5 մլրդ դրամ կամ ՀՆԱ 2.34%-ը, այսինքն, նախորդ տարվա համեմատությամբ ունենք պակասուրդի 9.3 մլրդ դրամով կրճատում: Պակասուրդի ֆինանսավորումը կիրականացվի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին, որից ներքին աղբյուրներ՝ 87.4 մլրդ դրամ և արտաքին աղբյուրներ՝ 23.1 մլրդ դրամ: 2014թ.-ին սպասվում է բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ներքին թանկ ռեսուրսների ներգրավման ավելացում, որը նշանակում է արտաքին աղբյուրներից ներգրավվող միջոցների կրճատում: Այս փոփոխությունից պակասուրդի ֆինանսավորման հետ կապված արտաքին ռիսկերը հասցվում են նվազագույնի, սակայն սա նշանակում է նաև որ ՀՀ ֆինանսական համակարգի համարարարաքին աղբյուրներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը բարդացել է: Այսպիսով, 2014թ.-ի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմը կլինի առավելապես ներքին և համեմատական առումով բարձր փոկոսադրույթներով (բացառությամբ՝ եվրոպարտությունների) ներգրաված աղբյուրների հաշվին, ինչը կարելի է համարել բացասական միտում՝ նախորդ բյուջեի տարվա համեմատությամբ, որտեղ գերակշռում էին հիմնականում արտաքին և ցածր փոկոսադրույթներով աղբյուրները:

## Արտաքին և ներքին պարտքային քաղաքականությունը

ՀՀ 2013թ. պետական բյուջեի 4.6% միջոցներն ուղղվել են պետական պարտքի սպասարկմանը, որը բավականին մեծ ծանրություն էր ՀՀ կառավարության համար, գրեթե նույն մակարդակն է նախատեսվում նաև 2014թ.-ի համար, այն է՝ 4.5%: 2013թ.-ին ՀՀ պետական պարտքը, ենթադրվում է, որ կկազմի գրեթե 4,542.6 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա 4,369.3 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն:



2014թ.-ին նախատեսվում է պեղական պարտքն ավելացնել մոտ 200 մլն ԱՄՆ դոլարով այն հասցնելով 4,741.8 մլն ԱՄՆ դոլարի: Պետք է նշել, որ պեղական պարտքի մեջ 2013թ.-ին արտաքին պարտքը կգերազանցի 3,828.6 մլն դոլարի սահմանագիծը, որից 513.9 մլն ԱՄՆ դոլարը կկազմի ԿԲ-ի պարտքը, իսկ ներքին պարտքը կկազմի 714.1 մլն ԱՄՆ դոլար: Այս համարեքստում պետք է նշել, որ 2014թ.-ին ընդհանուր բնույթի բյուջեային արտաքին օժանդակության շրջանակներում նախատեսվում է 27.3 մլրդ դրամ, որից 7 մլրդ դրամը պաշտոնական դրամաշնորհներ, իսկ 20.3 միլիարդը՝ վարկեր: Ծրագրային (նպատակային) օժանդակության շրջանակներում 112.2 դրամ, որից 12.9-ը՝ պաշտոնական դրամաշնորհներ, 99.2 մլրդ դրամը՝ վարկեր, այսինքն՝ ընդհանուր առմամբ, արտաքին օժանդակությունը կկազմի 189.7 մլրդ դրամ, որը հավասար է 2013թ.-ի ցուցանիշին, սակայն առկա են որոշակի վերադասավորումներ առանձին հոդվածների մասով: ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների փոկոսա-դրույքների և վարկային միջոցների մասհանումների 2012-2014թթ. ցուցանիշները վերլուծությունը ցույց է տալիս, որ 2012թ.-ին դրանք կտրուկ աճել են՝ կազմելով 295.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2013թ.-ին հասել են մոտ 410.3 մլն ԱՄՆ դոլարի: 2014թ.-ին դրանք կնվազեն՝ կազմելով 288.2 մլն ԱՄՆ դոլար: Այսինքն՝ սա փաստում է, որ կառավարությունն ունի բավականին ծանր պարտավորություններ, սակայն դժվարությունների կամ ծանրության կենտրոնը 2013թ.-ն էր: Արտաքին վարկերի 2014-2016 թվականների սպասարկման ծախսերը՝ հիմնական գումարի մարումները և փոկոսավճարները բավականին ծանր պարտավորություններ կլինեն ՀՀ կառավարության համար, քանի որ 2014թ.-ին արտաքին վարկերի հիմնական գումարների մարումները կկազմեն 136.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ փոկոսավճարները՝ 51.5 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ հանրագումարը կկազմի 187.9 մլն ԱՄՆ դոլար: Ենթադրվում է, որ 2015-2016թթ. պարտավորությունների առումով 2014-ի համեմատ բավական թեթև կլինեն: Ինչ վերաբերում է 2014թ.-ին վարկերի հիմնական գումարների և փոկոսավճարների սպասարկման եռամսյակային բաշխվածությանը, ապա հիմնական ծանրությունը դրված է 2-րդ և 4-րդ եռամսյակների վրա, ինչից թույլ է տալիս ենթադրել, որ բյուջեային փարվա համար այս եռամսյակները հարկային մուտքերի ապահովման և վարչարարության տեսանկյունից լինելու են ավելի ծանր:

### ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարարելով «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պեղական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պեղական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համադրական վերլուծություն, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության, 2014թ. սույիալ-փոփոխական զարգացման և հարկաբյուջեային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույցը (Ուղերձ)՝ փորձենք ներկայացնել երեք հիմնական ուղղվածության եզրակացություններ:

## Դրական զարգացումներ

■ Դրական պետք է համարել նաև ՀՀ պետական բյուջեի պակասուրդը ցածր մակարդակի վրա պահելու և կրճատելու հանգամանքը (110.5 մլրդ դրամ), քանի որ բարձր պակասուրդի պարագայում ՀՀ կառավարությունը ստիպված է ավելի մեծ միջոցներ ներգրավել ներքին և արտաքին աղբյուրներից, իսկ առկա պարտավորությունների պարագայում դա խիստ ռիսկային կարող է դիտարկվել: Իհարկե, նվազեցնել ՊԿՊ-ների շուկաներից միջոցների ներգրավումը 2014թ.-ին չի հաջողվի, քանի որ արտաքին աղբյուրներից ներգրավող միջոցներ նվազել են: Այսպես պետք է նշել, որ որոշակի առումով, հնարավոր է, ՊԿՊ-ների փոկոսադրույթներն աճեն, քանի որ ՀՀ կառավարությունը ստիպված է լինելու ներքին շուկայից ներգրավել մոտ 87 մլրդ դրամ:

■ Բյուջեի ծախսերի փոփոխության դասակարգման համադրական վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ այսպես հստակ համամասնություններ չկան, սակայն ամբողջական պահանջարկի խթանման և պետական շինարարության, ապրանքների և ծառայությունների գնման ծավալները ավելացնելով փորձ է արվում խթանել փոփոխության զարգացումը: Վերջինս կարող է խթանել նոր աշխատատեղերի ստեղծումը և նպաստել փոփոխության մեջ շինարարության անկում ապրող տեմպերի ակտիվացմանն ու գնումների գործընթացին մասնավոր կազմակերպությունների մասնակցությանը:

■ Աշխատանքի վարձատրությունը 2013թ.-ին կազմել է 89.1 մլրդ դրամ, իսկ 2014թ.-ին այն կկազմի 106.9 մլրդ դրամ, այսինքն, մոտ 18 մլրդ դրամով պետական ոլորտի աշխատողների աշխատավարձը բարձրացնելով, կկրճատվի մասնավոր և պետական հատվածների աշխատավարձերի միջև առկա տարբերությունը, սակայն ցանկալի է, որ նման բարձրացումը ոչ թե ինքնանպատակ բնույթ կրի, այլ հիմնվի արտադրողականության բարձրացման վրա:

## Բացասական զարգացումներ

■ Բացասական զարգացումներից կարելի է դիտարկել համաշխարհային փոփոխության մեջ առկա ռիսկային երևույթները՝ եվրոպական պարտքային և կենսաթոշակային ճգնաժամերի հնարավոր ազդեցությունները, ԱՊՀ երկրների և Չինաստանի փոփոխական աճի դանդաղող տեմպերը, որոնք որպես արտաքին գործոն կարող են ազդել ՀՀ փոփոխության, ինչպես նաև բյուջեի իրագործելիության մակարդակի վրա:

■ 2014թ.-ին փոփոխության զարգացման հաշվին բյուջեի կտրուկումն ունենալու է որոշակի դժվարություններ, մյուս կողմից, սոցիալական հատվածի, ինչպես նաև կենսաթոշակային բարեփոխումներին առնչվող հարցերը կառաջացնեն որոշակի դժվարություններ ազգաբնակչության համար, մինչդեռ բյուջեի վրա դրանք դրական ազդեցություն կունենան:

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

■ Բացասական զարգացումներից կարելի է դիտարկել համաշխարհային տնտեսության մեջ առկա ռիսկային երևույթները՝ եվրոպական պարտքային և կենսաթոշակային ճգնաժամերի հնարավոր ազդեցությունները, ԱՊՀ երկրների և Չինաստանի տնտեսական աճի դանդաղող տեմպերը, որոնք որպես արտաքին գործոն կարող են ազդել ՀՀ տնտեսության, ինչպես նաև բյուջեի իրագործելիության մակարդակի վրա:

■ 2014թ.-ին տնտեսության զարգացման հաշվին բյուջեի կտրուկ նույննալու է որոշակի դժվարություններ, մյուս կողմից, սուբսիդավորված, ինչպես նաև կենսաթոշակային բարեփոխումներին առնչվող հարցերը կառաջացնեն որոշակի դժվարություններ ազգաբնակչության համար, մինչդեռ բյուջեի վրա դրանք դրական ազդեցություն կունենան:

■ 2014թ.-ին պետական բյուջեների գործառնական ծախսերի հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ կան ծախսային խմբեր (օրինակ՝ տնտեսական հարաբերությունները), որոնք բավականին նվազել են: Դրանից ելնելով կարելի է նշել, որ որոշ ոլորտներ 2014թ.-ին կունենան որոշակի դժվարություններ, իսկ այն ոլորտները, որտեղ ծախսերի աճ է գրանցվել (սուբսիդավորված պաշտպանության ոլորտում և այլն), կունենան դրական տեղաշարժեր:

■ ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների տոկոսադրույքների և վարկային միջոցներից մասհանումների 2014թ. սպասվող միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք կհասնեն 288.2 մլն ԱՄՆ դոլարի, այսինքն, ՀՀ կառավարությունը կունենա որոշակիորեն ծանր պարտավորություններ, քանի որ ՀՆԱ-ի միջոցների զգալի մասը ստիպված կլինի ուղղել այս պարտավորությունների մարմանը:

■ Բացասական է նաև այն, որ առանձին հարկատեսակների գծով կանխատեսումները բացակայում են, այսինքն, այդ դաշտում պետական եկամուտների քաղաքականությունը կլինի որոշակիորեն ռիսկային: Այդ իսկ պատճառով մոտ 100 մլրդ դրամով ավելացած հարկային եկամուտների հավաքագրման ճակատագիրը դեռ հստակ չէ, չնայած առկա են որոշակի ենթադրություններ՝ կապված Մաքսային միության, ներմուծման մաքսատուրքերի և ուրիշ այլ հանգամանքների հետ:

■ Բացասական զարգացումներից կարող է լինել 2013թ.-ի տնտեսական ցուցանիշների կանխատեսումների չիրականացման ինտերյան, որը կտարածվի ամենայն հավանականությամբ նաև 2014թ.-ի վրա, քանի որ ՀՀ-ի հետ համագործակցող երկրները, ինչպես նաև համաշխարհային տնտեսության մեջ նկատվող բացասական զարգացումներն ազդելու են ՀՀ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի վրա՝ կապված փրանսֆերտների կրճատման, ներդրումների ծավալների նվազման, ինչպես նաև արտագաղթի հետ:

## Անփոփոխ և փոփոխական իրավիճակներ

■ Համադրելով 2013 և 2014թթ. ՀՀ պետական բյուջեների փիլիսոփայությունը և գաղափարախոսական հենքը՝ կարող ենք փաստել, որ դրանք ունեն որոշակի նմանություններ, և յուրաքանչյուր փարի մոտ 10%-անոց աճի տեղաշարժ ունենք: Մյուս կողմից այս բյուջեները փարբերվում են իրենց զարգացման վեկտորներով, այն է՝ 2013թ.-ի սկզբում կար նախապրամադրվածություն դեպի ԵՄ, իսկ 2014թ.-ին գաղափարախոսությունը փոխվում է դեպի Մաքսային միություն, այսինքն՝ նախկինի որոշակիության կամ կանխատեսելիության փոխարեն այժմ ունենք անորոշություն և որոշակի ռիսկայնություն:

■ Համաշխարհային տնտեսության մեջ նկատվող տնտեսական աճի տեմպերի դանդաղումը պահանջում է, որ երկու բյուջեներն էլ ունենան ոչ թե ամբիցիոզ նպատակներ, այլ պահպանեն կայունությունը և չկիրառեն խիստ ընդլայնողական քաղաքականություն՝ հնարավորինս երաշխավորելով բյուջեի կարարման իրատեսականությունը: Պետք է նշել նաև, որ ելնելով 43.7% (2013թ.) և 47.1% (2014թ.) տեսակարար կշիռ ունեցող սոցիալական և մշակութային ծախսերից՝ ՀՀ 2013 և 2014թթ.-ների պետական բյուջեները կարելի է համարել սոցիալական, քանի որ բյուջեն բնորոշվում է ըստ ամենախոշոր ծախսային ուղղվածության հողվածների:

■ Բյուջեի մի շարք ծախսային հողվածներում ծախսերը շատ չնչին փոփոխությունների են ենթարկվել, և սա փաստում է, որ ծախսերը համաչափ կերպով չեն հասել յուրաքանչյուր ոլորտի: Իհարկե, կան տնտեսության համար առարկայական և կարևոր նշանակություն ունեցող ոլորտներ, սակայն զարգացման տեսանկյունից նպատակահարմար է ծախսերի համաչափ բաշխվածությունը: Մյուս կողմից պետք է նաև ուշադրություն դարձնել նախորդ փարիներին հարկապլած միջոցներին ևս, քանի որ իրականում կոնկրետ ոլորտի կայացվածությունից ելնելով է որոշվում հարկապլող ծախսերի մեծությունը, այսինքն՝ դրանք կապիտալ թե ընթացիկ ծախսեր են:

■ Ընդհանրապես, պետք է նշել, որ 2014թ.-ը, որպես ֆինանսական փարի, լինելու է անորոշությունների և փոփոխությունների ժամանակահատված, և գլխավոր առանձնահատկությունը կլինի այն, որ անփոփոխ իրավիճակներ 2014թ.-ին գրեթե չեն լինելու, այսինքն՝ պետք է սպասել որոշակի տեղաշարժերի և տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխությունների:

## Անցում զբաղվածության քաղաքականության նոր մոդելի

### Աննա Մակարյան

#### Զբաղվածության քաղաքականության հին մոդել և նոր մոդելի պահանջ

2005թ. հոկտեմբերի 10-ին ընդունված «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենքով զբաղվածության պետական քաղաքականության հիմնական նպատակը «բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումն» էր: Բնակչության զբաղվածության պետական կարգավորումն իրականացվում էր բնակչության զբաղվածության ամենամյա պետական ծրագրերին համապատասխան, որտեղ ներառվում էին օրենքում նշված ծրագրեր (գործազրկության նպաստի վճարում, գործազուրկների մասնագիտական ուսուցում, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս գործադուրս աշխատավարձի մասնակի փոխհատուցում, մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործադուրսի մոտ և այլ): Թեպետ ծրագրերի մեծամասնությունը համարվում էր «ակտիվ»<sup>2</sup>, սակայն ծրագրերի շահառուների գերակշիռ մեծամասնությունն ընդգրկված է եղել «Գործազրկության նպաստի վճարում» ծրագրում, որը համարվում է «պասսիվ»<sup>3</sup> և, հետևաբար, պետական բյուջեից ստացված միջոցների գերակշիռ մասն ուղղվում էր այդ ծրագրի ֆինանսավորմանը:

**Ներդիր 1. 2008-2011թթ. զբաղվածության պետական ամենամյա ծրագրերի շրջանակում իրականացվող ծրագրերի շահառուների մոտ 95%-ը<sup>4,5</sup>, (տարեկան միջին ցուցանիշը՝ 28,713 գործազուրկ) ստանում էին գործազրկության նպաստ: Իրականացվող ծրագրերի վերջնական նպատակի՝ կայուն զբաղվածության ապահովման<sup>6</sup> առումով, 2008-2011թթ. 3,189 անձ է համարվել կայուն զբաղված (բոլոր ծրագրերի կտրվածքով), իսկ մեկ կայուն զբաղվածի հաշվով պետական բյուջեից փաստացի ծախսը միջինում կազմել էր 1.31 մլն ՀՀ դրամ:**

<sup>2</sup> Ակտիվ ծրագրերը երկու նպատակ են հետապնդում՝ փոխհատուցում և սոցիալական: Տնօրենական նպատակն է զբաղված դառնալու/գործ գտնելու հնարավորության/հավանականության բարձրացումը(employability): Ակտիվ ծրագրեր են համարվում մասնագիտական ուսուցում, աշխատավարձի մասնակի փոխհատուցում, աշխատանքային պրակտիկայի կազմակերպում և այլն: Սոցիալական նպատակին այսօրեղ անդրադարձ չի կատարվում:

<sup>3</sup> Պասսիվ ծրագրերը համարվում են նաև եկամուտների ապահովման ծրագիր և այլ երկրներում «գործազրկության նպաստ» ծրագրի հետ մեկտեղ նաև ներառում են այլ ծրագրեր:

<sup>4</sup> Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված ծրագրերի շահառուների թվից, բացառելով այն ծրագրերի շահառուներին, որոնք դադարեցվել կամ էլ ներդրվել էին 2011թ.:

<sup>5</sup> Եթե այս բաժնում այլ աղբյուր չի նշվում, փեն ՀՀ զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարության պարագրաֆներ 32-35:

<sup>6</sup> Ծրագրերի շահառուներ, որոնք ծրագրի ավարտից հետո որոշակի ժամանակահատվածում կամ ծրագրերի ընթացքում/շնորհիվ դարձել են զբաղված և առնվազն անհրաժեշտ ամիսներին համարվել են աշխատանք ունեցող անձ:

Այս մոդելում բացակայում էր «փոխադարձ պարտավորությունների կամ պարասխանաբարությունների» (mutual obligations/responsibilities) սկզբունքը, որն ակտիվ<sup>7</sup> քաղաքականության հիմքն է: Վերոնշյալ սկզբունքի համաձայն, գործազրկության նպաստ ստացողը, որին նաև զբաղվածության ծառայություններ<sup>8</sup> են մատուցվում, պարտավոր է բավարարել մի շարք պահանջներ՝ ակտիվ աշխատանքի որոնում, մասագիտական դասընթացների մասնակցություն և այլն: Պարտավորությունները փոխադարձ են և մի շարք երկրներում ամրագրվում են պայմանագրով: Մյուս կողմից՝ շատ կարևոր է գործազրկության նպաստի չափը և այն ստանալու տևողությունը: Հին մոդելով գործազրկության նպաստի վճարման նվազագույն տևողությունը 6 ամիս էր: Առավելագույնը 12 ամիս նպաստ ստացողը կարող էր այդքան էլ ակտիվ չլինել իր որոնումներում: Գործազրկության նպաստը տրվում էր միայն ֆորմալ զբաղված համարվող անձին<sup>9</sup>, իսկ ոչ ֆորմալ զբաղվածը, որը կորցրել էր աշխատանքը, չէր կարող նպաստ ստանալ: Ավելի ակտիվ գործողությունների անցնելու համար անհրաժեշտ էին օրենսդրական փոփոխություններ: Օրենքը թույլ չէր տալիս զբաղվածության ամենամյա պետական ծրագրերում փորձարկել նոր ակտիվ համարվող ծրագրեր, որոնք հիմնականում կբխեին գործազուրկների կարիքներից: Օրենքով նաև ամրագրված չէին ծրագրերի մոնիտորինգը, մասնավոր աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեության կարգավորումը և այլն:

Հետևաբար, անցումը ակտիվացման քաղաքականության՝ անհրաժեշտություն էր: Սակայն ինքնին ակտիվացման քաղաքականությունը չի կարող կայուն զբաղվածություն ապահովել, եթե դրան զուգահեռ արդյունավետ կերպով չիրականացվեն տնտեսական քաղաքականության բաղադրիչներ կազմող այլ քաղաքականություններ (ներդրումային, արդյունաբերական, հարկային և այլն):

<sup>7</sup>Անգլերեն գրականության մեջ՝ ակտիվացման քաղաքականություն (activation policy)

<sup>8</sup>Զբաղվածության ծառայություններից (employment services) են խորհրդատվության փրամադրում, աշակցություն աշխատանքի տեղավորման հարցում, աշխատանքի տեղավորում և այլն

<sup>9</sup>Գրանցված աշխատող:

## Աղյուսակ 1. Զբաղված լինելու համար ակտիվ ծրագրեր և դրան առնչվող արգելքներ

Ծրագրի տեսակ	Զբաղված լինելուն առնչվող սահմանափակումներ, արգելքներ
<p>Աշխատավարձի սուբսիդավորում (ներառյալ՝ երիտասարդների ուղղված ծրագրեր)</p> <p>Կարողությունների զարգացում և հմտությունների ձեռնարկներ</p>	<p>Կարողությունների/փորձի և տեղեկատվության պակաս</p> <p>Կարողությունների պակաս, փորձի բացակայություն կամ անհամապատասխանություն և տեղեկատվության պակաս</p> <p>Կարողությունների/փորձի պակաս, տեղեկատվության և հմտությունների պակաս, հմտությունների ոչ ձեռնարկներ</p>
<p>Զբաղվածության ծառայություններ</p> <p>Զբաղվածության աջակցման ծրագրեր</p>	<p>Տեղեկատվության պակաս, աշխատանքի դիմելու, մասնագիտանալու հետ կապված հարցեր</p> <p>Կարողությունների և փորձի պակաս, շրջանառու կապիտալի պակաս, ձեռնարկատիրական հմտությունների պակաս, տեղեկատվության պակաս</p>

Աղբյուր՝ Almeida et al.,<sup>10</sup> 2012:38:

## Ակտիվացման քաղաքականության դերը

Ակտիվացման քաղաքականությունը կարևոր դերակատարում է ունենցել «անհատներին աշխատանքի և գումար վաստակելու հնարավորություն ընձեռելու գործում» միջին եկամուտներ ունեցող երկրներում (Almeida et al., 2012:i):

## Աղյուսակ 2. Խթանմանը համարժեք միջոցառումներ և ակտիվացման քաղաքականության իրականացման համար պայմանների առկայություն

Միջոցառումներ	Իրականացման համար պայմաններ
Գործազրկության նպաստի չափը և վճարման տևողություն	Աշխատատեղերի առկայություն (աշխատուժի նկատմամբ պահանջարկ)
Փոխադարձ պատասխանատվություն	Մոնիթորինգ անելու և կիրարկման պահանջներ: Միջնորդավորված ծառայություններ, ուսուցում առանձին համայնքներում
Ֆինանսական խթաններ	Ֆորմալ զբաղվածների մեծ տոկոս: Աշխատատեղերի առկայություն (աշխատուժի նկատմամբ պահանջարկ):

Աղբյուր՝ Almeida et al., 2012:33:

<sup>10</sup>Almeida, R.; Arbelaez, J.; Honorati, M.; Kuddo, A.; Lohmann, T.; Ovadiya, M.; Pop, L.; Sanchez Puerta, M.; Weber, M., Improving Access to Jobs and Earnings Opportunities: The Role of Activation and Graduation Policies in Developing Countries, Social Protection Discussion Paper No. 1204, Washington DC: The World Bank, March 2012, 119p.


# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Ակտիվացման քաղաքականությունը ենթադրում է փարբեր ծրագրերի իրականացում, որոնք ուղղված են գործազուրկների մոտ առկա փարբեր արգելքների, սահմանափակումների վերացմանը, որպեսզի նրանք կարողանան դառնալ զբաղված (տե՛ս աղյուսակ 1): Այս ծրագրերը հնարավորություն են տալիս լրացնելու թափուր աշխատատեղերը համապատասխան մասնագիտական հմտությունների և կարողությունների առկայության դեպքում, եթե անհրաժեշտ է աշխատավարձերի փոխհատուցում վերամասնագիտանալու/վերապատրաստվելու, աշխատանքային պրակտիկայի կազմակերպման և այլ ծրագրերի միջոցով: Սակայն, այս ծրագրերն իրենց ցանկալի ազդեցությունը կունենան միայն որոշակի միջոցառումների իրականացման պարագայում, որպեսզի անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում գործազուրկների ակտիվացումն ակնկալվող արդյունքի հանգեցնի (տե՛ս աղյուսակ 2): «Փոխադարձ պատասխանատվություն» սկզբունքի օրենքով ամրագրման դեպքում, լիազորված մարմնի կողմից առաջարկվող ծառայություններից կօգտվեն միայն այն անձինք, որոնք իրականում աշխատանք գտնելու նպատակով են դիմում լիազորված մարմնին:

## ՀՀ զբաղվածության դիագնոստիկան

Լավագույն ցուցանիշը, թե արդյո՞ք ակտիվացման քաղաքականությունն ավելի շարժարկանց կայուն աշխատանքով կապահովի, և որքա՞ն կլինի վարձատրության չափը, իրական ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականությունն (Էլաստիկություն) է<sup>11</sup>:


### Գծապատկեր 1. ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականությունը, գործազրկության մակարդակի, արտադրողականության և իրական աշխատավարձերի փոփոխությունը 2010-2012թթ.



<sup>11</sup> Գծապատկեր 1. ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականությունը, գործազրկության մակարդակի, արտադրողականության և իրական աշխատավարձերի փոփոխությունը 2010-2012թթ.



# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ փարթեր փարիների հրապարակումներ, հեղինակի սեփական հաշվարկ: Նշում 2005=100:

2011-2012թթ. Իրական ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականությունը եղել է բացասական (տե՛ս գծապատկեր 1), որը պայմանավորված է այն փոփոխություններով, որոնք տեղի են ունեցել զբաղվածության կառուցվածքում: Պետական հատվածում (2011թ.) և գյուղատնտեսության (2012թ.) մեջ զբաղվածների թվի կրճատումն ուղեկցվել է մասնավոր հատվածում (ոչ գյուղատնտեսական) զբաղվածների թվի աճով, սակայն այն բավարար չի եղել երկրում զբաղվածների թիվն առնվազն պահպանելու համար, թեպետ 2010թ. համեմատ ոչ գյուղատնտեսական մասնավոր հատվածում զբաղվածների թիվն ավելացել էր 48.5 հազարով (կամ 11.5%): Այս թվի հիմնական աճը բաժին է ընկնում արդյունաբերության մեջ զբաղվածների թվի աճին (2010թ. համեմատ 2012թ. թվի աճը կազմել էր 36% կամ 32.5 հազար): Գործազուրկների թիվը 2011-2012թթ. կրճատվել է 2010թ. համեմատ, ինչով էլ հիմնականում բացատրվում է գործազրկության մակարդակի կրճատումը (թեպետ այն դեռևս շարունակում է բարձր մնալ և այդ թվի կրճատումը չի ուղեկցվել զբաղվածների թվի աճով): 2011-2012թթ. արտադրողականության աճի տեմպը գերազանցում էր իրական ՀՆԱ-ի աճի տեմպին, մինչդեռ իրական միջին ամսական աշխատավարձը միայն 2012թ. էր 2011թ. համեմատ դրական աճ արձանագրել, թեպետ անվանական աշխատավարձերը բարձրացել էին<sup>12</sup>: Սա նշանակում է, որ ընդհանուր առմամբ, բարձր արտադրողականություն/որակավորում ունեցողների աշխատավարձի աճի տեմպը գերազանցել է համեմատաբար ցածր արտադրողականություն/որակավորում ունեցողների աճի տեմպին:

<sup>12</sup> 2010թ.՝ 102,652 ՀՀդրամ, 2011թ.՝ 108,092 ՀՀդրամ, 2012թ.՝ 113,163 ՀՀդրամ (Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2013թ.)

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Ճգնաժամից հետո 2010-2012թթ. իրական ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականությունը կազմել է 0.353, որը համարվում է միջին ցուցանիշ (Senetal., 2009:150)<sup>13</sup>: Սա նշանակում է, որ

- զբաղվածների թվի աճն ուղեկցվում է (Islam, 2004:5)<sup>14</sup> արտադրողականության աճով:
- միջնաժամկետ հատվածում (2013-2017թթ.) իրական ՀՆԱ-ի աճի տարեկան տեմպը, ընդհանուր առմամբ, պետք է լինի 6.2%, որպեսզի գործազրկության մակարդակը 10%-ի հասնի 2012թ. գրանցված 17.3%-ի փոխարեն:

2010-2012թթ. զբաղվածության կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները հիմնականում արտասույլել են ապրանքների արտահանման կառուցվածքի միտումներ, և տնտեսության այլ ճյուղերում աճի տեմպերը: Ընդհանուր առմամբ՝ արդյունաբերությամբ է հիմնականում պայմանավորված լինելու զբաղվածների թվի փոփոխությունը միջնաժամկետ հատվածում: Հետևաբար, եթե կառավարությանը չհաջողվի արդյունավետորեն իրականացնել ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը, ապա տնտեսության մնացած այլ ոլորտներում (մասնավոր հատված) զբաղվածների թվի աճ գրեթե չի գրանցվի:

### Զբաղվածության քաղաքականության նոր մոդել

«Զբաղվածության մասին» օրենքով, որը հունվարի 1-ից փոխարինում է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենքին, ամրագրված է «փոխադարձ պատասխանատվության» սկզբունքը: Լիազորված մարմինը կարիքների գնահատման հիման վրա անհատական ծրագիր է կազմում, որտեղ նախանշվում են նպատակները և դրանց համապատասխան գործողությունները: Դրա իրականացման վերաբերյալ երկկողմ պայմանագիր է կնքվում աշխատանք փնտրող անձի հետ՝ նրան զբաղվածությամբ ապահովելու նպատակով: Եթե լիազորված մարմինն չի հաջողվում առնվազն երեք ամիս գործազուրկին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամություն ունեցող անձին հարմար աշխատանքի տեղավորել, ապա այդ անձին տրամադրվում է վաուչեր՝ (մասնակի փոխհատուցում համապատասխան հավաստագրով) մասնավոր աշխատանքի տեղավորման ընկերությունների ծառայություններից օգտվելու համար<sup>15</sup>:

<sup>13</sup> Sen, K., and Kirkpatrick, C., 2011, "A Diagnostics Approach to Economic Growth and Employment Policy in Low Income Economies: The Case of Kosovo", Journal of International Development, 23, pp.132-154

<sup>14</sup> Islam, Rizwanul, The Nexus of Economic Growth, Employment and Poverty Reduction: An Empirical Analysis, Issues in Employment and Poverty Discussion Paper No. 14, Geneva: International Labour Office, January 2004,

<sup>15</sup> Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն «Աշխատանք փնտրող անձին ոչ պետական կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունները մատուցվում են անվճար, եթե դրանք իրականացվում են լիազորված մարմնի կողմից ոչ պետական կազմակերպությանը վերապահված զբաղվածության պետական ծրագրերի իրականացման շրջանակներում»: Իսկ վաուչերը տրամադրվում է համաձայն փորձարկվող «Աջակցություն աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության ծառայություններից օգտվելու համար» ծրագրի, որն ներառված է Զբաղվածության կարգավորման 2014թ. պետական ծրագրում (նախագիծը առ. 30.10.2013թ.) ՀՀ Կառավարության կողմից 2014թ. հավանությանը արժանալու դեպքում:

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Լիազորված մարմնի՝ աշխատանքի տեղավորման մասնավոր ընկերությունների հետ համագործակցությունն սկսվում է հուշագրի ստորագրմամբ, այդ ընկերությանը ներառում է իր ցանկում, որը տեղադրվում է ինտերնետային կայքում: Ընկերություններին տրամադրվում են մեթոդական օգնություն, թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, ինչպես նաև հաշվառված աշխատանք փնտրող անձանց վերաբերյալ տեղեկատվություն: Նրանք պարտավոր են ունենալ տեղեկատվական շտեմարան: Աշխատանքի տեղավորման մասնավոր ընկերությունն աշխատանք փնտրող անձանց իր ծառայությունները մատուցում է այն պայմանագրի հիման վրա, որի օրինակելի ձևը սահմանում է լիազորված մարմինը:

2016թ. հունվարի 1-ից հարյուր և ավելի աշխատող ունեցող մասնավոր ընկերությունների նկատմամբ առնվազն 1%-ի չափով հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման քվոտային պահանջ է առաջանալու: Գործատուներն իրավունք ունեն լիազորված մարմնից զբաղվածության պետական ծրագրերի, աշխատաշուկայի իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն և մասնագիտական խորհրդատվություն ստանալ, ինչպես նաև տրամադրել տեղեկություններ իրենց մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի մասին:

Օրենքով նաև հստակեցվել են ՀՀ զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունում և «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգում նշված խնդիրները: Մասնավորապես, հստակեցվել և ամրագրվել են հարմար աշխատանքի, աշխատաշուկայում անմրցունակ ճանաչվելու մեխանիզմները<sup>16</sup>, լիազորված մարմնի իրավասությունների շրջանակը, զբաղվածության ամենամյա ծրագրերի մշակման, իրականացման և դրա մոնիտորինգի և գնահատման կարգը, տեղեկատվական շտեմարանին վերագրված պահանջները և այլն:

Թեպետ Զբաղվածության կարգավորման 2014թ. պետական ծրագիրը<sup>17</sup> դեռևս ներառում է «Գործազրկության նպաստի վճարում» ծրագիրը, նրա շահառուները 2013թ. գործազուրկի կարգավիճակ ստացած անձինք են, որոնք 2014թ. դեռևս կշարունակեն նպաստ ստանալ: 2014թ. ծրագրի մեջ նաև ընդգրկվել են փորձարկվող ծրագրերը: Դրանց մեջ է նաև «Հարմար աշխատանքի տեղավորման նպատակով, գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում» ծրագիրը: Վերջինիս շահառուներին լիազորված մարմինը ամեն անգամ գործատուի մոտ այցելելու համար տրամադրում է գումար (ամսական 18,000 դրամից ոչ ավելի): «Աջակցություն աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության ծառայություններից օգտվելու համար» ծրագրով էլ մեկ շահառուի համար մասնավոր ընկերությանը փոխանցված գումարի առավելագույն չափը չի կարող գերազանցել 100,000 դրամը:

16 Չափանիշներն են հաշմանդամություն ունենալը, տարիքը, գործազուրկի կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածը, սոցիալական կարգավիճակը, բնակվելու վայրը, առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելը և այլն:  
17 Նախագիծը առ. 30.10.2013թ.:

## Ձբաղվածության քաղաքականության նոր մոդելի ազդեցությունը

Աշխատուժի առաջարկի ավելացմանն ուղղված քաղաքականությունն իր ցանկալի ազդեցությունն է բերում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, երբ կառավարության կողմից իրականացվող հարկային, արդյունաբերական, ներդրումային և այլ քաղաքականությունների շնորհիվ առաջանում է պահանջարկ համապատասխան աշխատուժի նկատմամբ: Կարճաժամկետ հատվածում ակտիվացման քաղաքականության ծրագրերն ուղղված են լինելու թափուր աշխատատեղերի բավարարմանը՝ ավելացնելով զբաղվածների թիվը կամ էլ խթանելով ձեռնարկատիրական գործունեությունը: Հիմնականում դրանք ցածր վարձատրության և բարձր որակավորում չպահանջող աշխատատեղեր են:

Գործազրկության նպաստի վճարումը դադարեցնելու պարագայում, «փոխադարձ պարասխանափոխության» սկզբունքի ամրագրումը հանգեցնելու է լիազորված մարմնի մատուցած ծառայություններից օգտվողների թվի աճին:

Լիազորված մարմինը կարիքների գնահատման հիման վրա անհատական ծրագիր կկազմի հիմնականում աշխատաշուկայում անմրցունակ ճանաչված անձանց համար, որոնք ՀՀ կառավարության սահմանած կարգի համաձայն ունեն առաջնահերթության և այլ իրավունքներ: Միայն 2012թ. 1 և ավելի տարի աշխատանք փնտրող գործազուրկների թիվը կազմում էր 46% (2 և ավելի տարիների դեպքում 31%)<sup>18</sup>: Հետևաբար, նոր օրենքի համաձայն, հիմնականում աջակցությունը կտրվի աշխատաշուկայում անմրցունակ ճանաչված անձանց, որոնք կզբաղեցնեն ցածր վարձատրությամբ թափուր աշխատատեղեր: Տվյալ պահի դրությամբ, հաշվի առնելով լիազորված մարմնի և մասնավոր հատվածի միջև ամրապնդվող համագործակցությունը, դժվար է կանխատեսել, թե ինչպիսին կլինի մրցակցությունը աշխատանքի տեղավորման մասնավոր ընկերությունների և լիազորված մարմնի միջև:

Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումների համաձայն՝ ՀՆԱ իրական աճը 2013-2017թթ. անհրաժեշտ 6.2%-ից ցածր է լինելու<sup>19</sup>: Միջնաժամկետ հատվածում գործազրկության մակարդակը կշարունակի մնալ բարձր, իսկ այս պարագայում ՀՀ կառավարությանն անհրաժեշտ է կարճաժամկետ հատվածում այնպիսի քաղաքականություն իրականացնել, որը կավելացնի զբաղվածության նկատմամբ պահանջարկը:

18 Աղբյուր [http://www.armstat.am/file/article/trud\\_13\\_9.pdf](http://www.armstat.am/file/article/trud_13_9.pdf)  
19 Աղբյուր 2013թ. հոկտեմբերի 8-ին թարմացված «World Economic Outlook» առցանց տվյալների բազա:

## Եզրակացություն

Ինքնին ակտիվացման քաղաքականությունը արդյունավետ կերպով խթանում է աշխատուժի առաջարկի ավելացմանը: Կարճաժամկետ հատվածում այն կբերի ցածր արտադրողականությամբ և վարձատրությամբ աշխատատեղերի լրացմանը: Միջնաժամկետ հատվածում, եթե աշխատուժի առաջարկը չուղեկցվի կառավարության կողմից իրականացվող արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ և այլ քաղաքականությունների իրականացմամբ պայմանավորված աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճով, ապա գործազրկության մակարդակը կշարունակի բարձր մնալ: Թեպետ լիազորված մարմնի շահառու կարող է հանդիսանալ աշխատանք փնտրող և գործազուրկի կարգավիճակ ստացած ցանկացած անձ, սակայն առաջնահերթությունը տրվելու է աշխատաշուկայում անմրցունակ ճանաչված անձանց, և հետևաբար, կլրացվեն հիմնականում ցածր վարձատրությամբ թափուր և/կամ նոր ստեղծվող աշխատատեղերը կարճաժամկետ հատվածում: Եթե միջնաժամկետ հատվածում գրանցվի տնտեսական անկում, և ավելանա գործազուրկների թիվը, ապա լիազոր մարմինը չի կարողանա նույնիսկ անմրցունակ համարվող անձանց աշխատանքի տեղավորել, եթե կառավարությունը չսկսի իրականացնել աշխատուժի նկատմամբ պահանջարկի մեծացմանն ուղղված քաղաքականություն:

## Հանրային հատվածը որպես մրցունակ գործափու

### Աննա Մակարյան

#### Բարեփոխումների պահանջ

ՀՀ կառավարության կողմից 2012թ. նոյեմբերի 8-ին հաստատվեց ՀՀ զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը: Հիմք ընդունելով հանրային ծառայության համակարգում աշխատանքի պայմանների ու վարձատրության ցուցանիշների վերլուծության արդյունքները, ռազմավարության մեջ նշվել են մի շարք խնդիրներ՝ (1) հանրային ծառայողի աշխատավարձի չափի և աշխատանքի վերջնական արդյունքների միջև, ինչպես նաև գնաձի միջև կապի բացակայությունը, (2) բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավումը և այդ մասնագետների պահպանումը և այլն: Որպես առաջնահերթություն՝ նշվել է հանրային ծառայողների վարձատրության միասնական համակարգի ներդրումը՝ «հիմնական, լրացուցիչ աշխատավարձերի և սուբիալակական երաշխիքների հենասյուների կառուցմամբ» (պարագրաֆ 91):

## Բարեփոխում

2013թ. դեկտեմբերի 12-ին ընդունված «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձավարության մասին» օրենքում ամրագրվեցին պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձավարության սկզբունքները, որով էլ փորձ կկատարվի 2014թ. հունիսի մեկից ունենալ վարձավարության միասնական համակարգ. վարձավարության փարբերակում, սանդղակների համադրելիություն փարբեր ոլորտների դեպքում, հիմնական և ևրացուցիչ աշխատավարձերի հարաբերակցությունների հստակեցում, պար-տականություններին և պատասխանատվությանը համապատասխանող հիմնական աշխատավարձի ստացում, ինչպես նաև ակնկալվում է, որ պետական պաշտոններ զբաղեցնողները կունենան ձգտում զբաղեցնել ավելի բարձր պաշտոններ: Վարձավարության միասնական համակարգի ներդրմամբ՝ օրենքը փարածվելու է քաղաքական, հայեցողական, քաղաքացիական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի անդամների), պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վրա, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վրա: Մինևունյն ժամանակ, նոր օրենքով սահմանված վարձավարության համակարգի ներդրումը 2014թ. հունիսի 1-ից չի հանգեցնի պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի չափի նվազեցմանը: Օրենքով հստակեցվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափի հաշվարկի մեթոդը, որը չի կարող ցածր լինել նախորդ փարվա բազային աշխատավարձից:

## Նոր վարձավարության համակարգի դերը հանրային հատվածը մրցունակ դարձնելու գործում

Օրենքը վերլուծելիս՝ նկատում ենք, որ հիմնական շեշտը դրված է քաղաքացիական պաշտոն զբաղեցնողների վրա, որպես հանրային հատվածի հիմնական բաղադրիչ: Վարձավարության նոր համակարգի ներդրումը պետք է ապահովի հիմնականում կայունություն նախընտրողների, ինչպես նաև պետական պաշտոնի ձգտողների ներգրավումը հանրային հատված, եթե մասնավոր հատվածում համապատասխան աշխատանքային փորձ ունեն, իսկ դրա բացակայության պարագայում կրտսեր պաշտոն զբաղեցնելու համար: Կրտսեր պաշտոններում կարող են ներգրավվել միայն այն մրցունակ երիտասարդ մասնագետները, որոնց նպատակը փորձ ձեռք բերելն է հեղափոխում մասնավոր հատված/միջազգային կառույց ավելի լավ պայմաններով աշխատանքի անցնելու կամ արտասահմանում կրթությունը շարունակելու (նրանց թիվն այդքան բարձր չի լինի) համար: Այսպիսով, նոր վարձավարության համակարգը ամենամրցունակ/լավագույն մասնագետներին հանրային հատված հիմնականում չի ներգրավի (տե՛ս աղյուսակ 1):

# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ


Ինչ վերաբերում է լավագույն/մրցունակ մասնագետների պահպանմանը, ապա կադրերի հոսունությունը հիմնականում բարձր կլիմի կրպներ և առաջադար պաշտոնների դեպքում: Գլխավոր պաշտոնների դեպքում, կարճաժամկետ ժամանակահատվածում 3 և ավելի տարի փոխալ պաշտոնը զբաղեցնողները նոր պաշտոնի ակնկալիքով չեն տեղափոխվի մասնավոր հատված, իսկ միջնաժամկետ ժամանակահատվածում, առաջխաղացում չունենալու դեպքում, մրցունակ մասնագետները կհեռանան հանրային հատվածից: Բարձր պաշտոնների դեպքում հոսունություն գրեթե չի արձանագրվի:

## Աղյուսակ 1. Նոր վարձատրության համակարգի դերը դեպի հանրային ՀՀ հատված լավագույն/ ամենամրցունակ մասնագետներին ներգրավելու և պահպանելու գործում

Խնդիր	Պաշտոններ	Ժամանակահատված	
		Կարճաժամկետ	Միջնաժամկետ
Կադրերի ներգրավում	Կրպներ Առաջադար Գլխավոր Բարձրագույն	Ոչ Ոչ Ոչ Ոչ	Ոչ Ոչ Ոչ Ոչ
Կադրերի պահպանում	Կրպներ Առաջադար Գլխավոր	Ոչ Ոչ 3 և ավելի տարի փոխալ պաշտոնը զբաղեցնելու պարագայում նոր պաշտոնի ակնկալիքով	Ոչ Ոչ Ոչ, եթե առաջ-խաղացում չունենա
	Բարձրագույն	Այո	Այո


## Նոր վարձատրության համակարգի ներդրման սոցիալական ազդեցությունը

Գծապարկեր 1. Դրամական եկամուտների բաշխումը և տնտեսական աճի դերը դրանց փոփոխության վրա



# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Աճի ազդեցությունը իրական եկամուտների փոփոխության վրա



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ փորձեր փարիների հրապարակումներ, հեղինակի սեփական հաշվարկ: Նշում 2005=100

Նոր վարձավարության համակարգի ներդրումը<sup>20</sup> կհանգեցնի դրամական եկամուտների անհավասար բաշխման խորացմանը, եթե բնակչության բոլոր խմբերում եկամուտների փոփոխությունը (տոկոսային առումով) նույն չափով չփոփոխվի: Այս պարագայում Զինի գործակիցը<sup>21</sup> ավելի կմեծանա 2012թ. մեծության համեմատ, որն արդեն մեծացել է 2011թ. նկատմամբ, ինչը նշանակում է, որ 2012թ. իրական 7.2% տնտեսական աճը բերել է նրան, որ դրամական եկամուտները փոքր խմբերում նույն չափով չեն փոփոխվել, իսկ ամենամեծ աճը արձանագրվել է ամենահարուստ խմբում (տես գծապատկեր 1): Իսկ 2008թ. համեմատ 2012թ. իրական եկամուտների ամենաբարձր տոկոսային աճը (30%) եղել է ամենաբարձր եկամուտներ ունեցող խմբում (բնակչության տասներորդ ղեցիլային խմբում ըստ եկամուտների), մինչդեռ մնացած ղեցիլային խմբերում իրական եկամուտների աճը չի եղել 20.2%-ից ավելի (8-րդ ղեցիլային խմբի պարագայում):

## Եզրակացություն

Հետևաբար, հանրային հատվածը, նախ որակյալ կադրերի (հատկապես երիտասարդների) ներգրավման խնդիր չի լուծում, որը հանրային հատվածն ավելի մրցունակ դարձնելու հիմքերից է, իսկ ինչ վերաբերում է կադրերի պահպանմանը, ապա այսօրվա նոր վարձավարության համակարգի ներդրմամբ հանրային հատվածը կպահպանի բարձրագույն պաշտոններ զբաղեցնողներին, կարճաժամկետ հատվածում որոշակի հավակնություններ և երեք տարուց ավելի աշխատանքային ստաժ ունեցող գլխավոր մասնագետներին, մինչդեռ լավ մասնագետների հոսունությունը (կրպսեր և առաջադար պաշտոններ զբաղեցնողների) համեմատաբար բարձր կլինի:

Միաժամանակ, նոր վարձավարության համակարգի ներդրումը կհանգեցնի դրամական եկամուտների անհավասար բաշխման խորացմանը, եթե բնակչության բոլոր խմբերում եկամուտների փոփոխությունը (տոկոսային առումով) նույն չափով չփոփոխվի:

20 Հաշվի առնելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձավարության մասին» ՀՀ օրենքի հավելվածներ 1-9-ում նշված գործակիցները:  
21 Այս գործակիցը ցույց է տալիս եկամուտների անհավասարաչափ բաշխման մակարդակը և այն փորձարկում է 0-ից մինչև 1-ն ընկած միջակայքում: Որքան այն մոտենում է 1-ի, այնքան ավելի մեծ է եկամուտների անհավասար բաշխումը:



## Հեղինակային իրավունք

### Մերոպ Հարությունյան

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի դասախոս

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը կոչված է պայքարելու հատկապես համացանցում տարածված, լրագրողական բառապաշարով ասած՝ copy – past – ային գործունեության դեմ: Վերջին տարիներին ի հայտ եկած բազմաթիվ կայքեր աշխատում էին հենց հիշյալ սկզբունքով՝ ավանդական տպագիր մեդիայից կամ լրատվական կայքերից պարզապես արտատպում էին նրանց տեղեկատվական հրապարակումները՝ առանց սկզբնաղբյուրին հղում տալու, ներկայացնելով դրանք իբրև սեփական (ինչը պարզ գրագողություն է), կամ անգամ հղում տալու դեպքում առանց պահպանելու որոշակի սկզբունքներ: Դրանով այդ, այսպես ասենք՝ «գաճաճ» կայքերը, մեկ-երկու համակարգչով եւ մեկ-երկու աշխատակցով, առանց ջանք թափելու ապահովում էին լսարան՝ խլելով մեծ աշխատակազմով, յուրաքանչյուր տեղեկություն հրապարակելու համար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ ծախսող լրատվամիջոցների լսարանը: Առավել մտահոգիչ էր, որ իրարից առանց հղումի արտատպում էին նաև հեղինակավոր և արդեն կայացած լրատվական կայքերը: Ընդունված օրենքի նպատակը հենց նման երևույթները բացառելն ու արտատպելիս հրապարակումների կանոնները հստակեցնելն է: Սեպտեմբերի 30-ին ընդունված օրենքի առաջին հոդվածը լրացում է կատարում «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում, որում ի թիվս այլ դեպքերի, նշված էր, որ հեղինակային իրավունքի օբյեկտ չէ «օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը»: Ըստ նոր օրենքի՝ «4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը «տեղեկատվությունը» բառից հետո լրացվել է հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությունով. «Օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը հանդիսանում է հեղինակային իրավունքի օբյեկտ, եթե օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի արտահայտման ձևը ստեղծագործական աշխատանքի արդյունք է»:

Այսպիսով մամուլի հրապարակումները դառնում են հեղինակային իրավունքի օբյեկտ՝ դրանք հավասարեցվելով օրենքի երրորդ հոդվածում նշված գրականության, գիտության, արվեստի բնագավառների ստեղծագործությունների հետ: Ուստի՝ իբրև հեղինակային իրավունքի օբյեկտ, դառնում են պաշտպանության ենթակա՝ գրագողությունից եւ առանց հղման հրապարակումներից: Այդ ստեղծագործությունների պաշտպանության մեխանիզմներն էլ սահմանված են նոր ընդունված օրենքի հաջորդ երկու հոդվածներով: Այսպես, 2-րդ հոդվածը նախատեսում է օրենքը լրացնել 22.1-ին հոդվածով, հետևյալ բովանդակությամբ.

## «Հոդված 22.1. Լրափակական նյութի օգտագործման պայմանները

1. Տպագիր լրափակական միջոցների, էլեկտրոնային կայքերի (ցանցային լրափակության միջոց) լրափակական նյութերից քաղվածքների վերարտադրումը այլ փպագիր լրափակական միջոցներում, ինտերնետային կայքերում թույլատրվում է իրականացնել միայն մեջբերման նպատակն արդարացնող ծավալով՝ առանց հեղինակի (հեղինակային իրավունքի իրավապիրոջ) համաձայնության եւ վարձատրության վճարման: Անկախ վերարտադրման ծավալից՝ լրափակական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրափակական նյութի էական մասը: Վերարտադրումը պետք է բացառի լրափակական նյութի սկզբնաղբյուրի հնարավոր ընթերցողների քանակի եւ լրափակական նյութի օգտագործման ծավալների վրա բացասական ազդեցությունը: Լրափակական նյութի ամբողջական վերարտադրումը կարող է իրականացվել միայն հեղինակի (հեղինակային իրավունքի իրավապիրոջ) համաձայնության դեպքում: Լրափակական նյութի ամբողջական վերարտադրման կարգն ու պայմանները սահմանվում են կողմերի միջեւ կնքված պայմանագրով:

2. Տպագիր լրափակական միջոցներում, էլեկտրոնային կայքերում այլ փպագիր լրափակական միջոցների, էլեկտրոնային կայքերի լրափակական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս պետք է հղում կատարել լրափակական նյութի սկզբնաղբյուրին: Էլեկտրոնային կայքում փպագիր լրափակական միջոցների կայքերի լրափակական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում փպագիր լրափակական միջոցի անվանման նշումը պարտադիր է, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրափակական նյութի վերարտադրությունն է: Էլեկտրոնային կայքերի լրափակական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս էլեկտրոնային կայքի ակտիվ հղումի տեղադրումը, ինչպես նաեւ քաղվածքի վերնագրում էլեկտրոնային կայքի տիրույթային անվանման (դոմեյնի) նշելը պարտադիր են, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրափակական նյութի վերարտադրությունն է:

3. Հեռարձակող կազմակերպության այն հաղորդումները, որոնք իրենց բնույթով ուղղված են մամուլի տեսության ներկայացմանը, պարտավոր են պահպանել սույն հոդվածով նախատեսված դրույթները:

4. Սույն հոդվածով նախատեսված դրույթները չեն փարածվում հերքման եւ (կամ) պատասխանի իրավունքի իրականացման վրա»:

Այս ձեւակերպումները կոչված են հնարավորինս պաշտպանելու լրատվական միջոցների, արդեն իսկ հեղինակային իրավունքի օբյեկտ համարված նյութերը՝ անհարկի արտադրություններից: Սակայն որոշ ձեւակերպումներ, այսուհանդերձ, խնդրահարույց են: Օրինակ, ո՞րը կարող է լինել լրատվական նյութի «**էական մասը**»: «**էական մաս**» հասկացությունը սահմանված է գործող օրենքի 65-րդ հոդվածում. **«Ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որեւէ մասը, որը փվյալ ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս»**: Սա բավականին անհստակ ձեւակերպում է, եւ դժվար է լրատվական նյութի վերարտադրության ժամանակ որոշել հիշյալ ձեւակերպմանը համապատասխանող էական մասը, ինչը կարծում ենք ապագայում լրատվամիջոցների միջուկ բազմաթիվ վեճերի փոշիք է փալու: Նույն կերպ անհասկանալի է **«նպատակն արդարացնող ծավալով»** ձեւակերպումը, որը օրենքով սահմանում էլ չունի: Եվ վերջապես, ապագայում խնդրահարույց կարող է դառնալ **«վերարտադրումը պետք է բացառի լրատվական նյութի սկզբնաղբյուրի հնարավոր ընթերցողների քանակի եւ լրատվական նյութի օգտագործման ծավալների վրա բացասական ազդեցությունը»**: Ո՞վ, ի՞նչ մեթոդոլոգիայով, ինչպե՞ս է որոշելու վերարտադրման բացասական ազդեցությունը, արդյո՞ք սա չի դառնալու լրկ հռչակագրային ձեւակերպում առանց էական ազդեցություն թողնելու վերարտադրող-սկզբնաղբյուր հարաբերությունների վրա, կամ ընդհակառակը՝ դառնալով նրանց միջուկ անհարկի վեճերի առիթ:

Միանգամայն ողջունելի է վերարտադրության դեպքում վերնագրում սկզբնաղբյուր կայքին ակտիվ հղում փալը: Սա ոչ միայն հեղինակային իրավունքի նկատմամբ հարգանքն ընդգծել է նշանակում, այլեւ դրական ազդեցություն կարող է ունենալ սկզբնաղբյուրների այցելուների քանակի ավելացման առումով: Բանն այն է, որ փոշեկափակական ոլորտի որոշ մասնագետներ վաղուց արդեն համացանցի հայալեզու միջավայրի ընդհանուր թերություններից էին համարում այն, որ պակասում են միմյանց հղումները, ինչը այլ լեզվով փորույթներում փարածված երեւոյթ է եւ նպաստում է այցելությունների ավելացմանը:

Մեր կարծիքով օրենքում ավելորդ է լրացված 22.1 հոդվածի 3-րդ կետը, այն է՝ **«Հեռարձակող կազմակերպության այն հաղորդումները, որոնք իրենց բնույթով ուղղված են մամուլի փեսության ներկայացմանը, պարտավոր են պահպանել սույն հոդվածով նախատեսված դրույթները»**: Նախ «սույն հոդվածով նախատեսված դրույթները» պահպանելը անհասկանալի է, քանի որ հոդվածի բոլոր դրույթները վերաբերում են միայն փոպագիր եւ ինտերնետային ՁԼՍ-ներին, երկրորդ՝ այդ դրույթների պահպանում ենթադրում է նաեւ ակտիվ հղում: Դժվար է պարկերացնել հեռուստափեսությանը կամ ռադիոյով մամուլի փեսություն ներկայացնելիս «ակտիվ հղում» փալը: Կարծում ենք ձեւակերպումը գոնե պիտի լիներ «սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված դրույթները»:

Այսուհանդերձ, նույնիսկ դա կարող է ավելորդ մանրամասն համարվել: Բանն այն է, որ մամուլի տեսությունն ներկայացնելն արդեն իսկ կարգավորված է «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 22-րդ՝ «Ստեղծագործության ազատ օգտագործումը» հոդվածով: Ահա այն.

**« ... 2. Ազատ օգտագործմամբ թույլատրվում է՝**

**ա) գիտական, հեղափոխական, բանավիճային, քննադատական եւ տեղեկատվության նպատակով օրինական ձանապարհով հրատարակված ստեղծագործության քաղվածքների մեջբերումը (ցիտումը) բնագրով կամ թարգմանաբար, այդ թվում՝ թերթերի եւ ամսագրերի հոդվածներից քաղվածքների վերարտադրումը մամուլի տեսության ձեռով՝ մեջբերման նպատակն արդարացնող ծավալով»:**

Կարծում ենք, ոչինչ այլեւս ավելացնել պետք չէր:

Նշված որոշ անհատակություններով հանդերձ, ընդունված լրացումները կարող են որոշակի ժամանակահատվածում դրական դեր կատարել տեղեկատվական ոլորտում առկա բացասական երեւույթների դեմ պայքարի առումով, սակայն երկարատեւ ժամանակահատվածում դրանց արդյունավետությունը կասկածելի է, քանզի համացանցային բովանդակության ավելացման հետ արտադրումների եւ գրագողության դեպքերի վերահսկումը գնալով ավելի ու ավելի դժվար է դառնալու: Բացի այդ, աշխարհում արդեն նկատվում են հեղինակային իրավունքը գերադասելով տեղեկությունների փարածման ազատությունը չսահմանափակելու նոր միտումներ:



